Գիրքը հրատարակվել է ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի հովանավորությամբ

ՀՀ դատավորների միությունը շնորհակալություն է հայտնում ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտին, ՀՀ իրավաբանների միությանը, Զարգացման հայկական ինստիտուտին իրենց առաջարկություններով ու դիտողություններով ընտանեկան հանրամատչելի իրավաբանական գրադարանի ստեղծմանն աջակցելու համար

Ընտանեկան հանրամատչելի գրադարանի շարքի մյուս հրատարակություններին կարող եք ծանոթանալ՝ այցելելով ՀՀ դատավորների միության ինտերնետային կայքէջ հետևյալ հասցեներով՝

www.datavor.am
www.judge.am

ASSOCIATION OF JUDGES
OF THE REPUBLIC OF ARMENIA

VAHE YENGIBARYAN
ARTUR CHAKHOYAN

PISONER RIGHTS

FAMILY LAW MANUAL

Edited by: **Hrachik SARGSYAN**
President of the Association of Judges of the Republic of Armenia, Chairman of Common Jurisdiction Court of Armavir Marz

Lingvo-stylistic editor: **Amalya Harutyunyan**

YEREVAN
«Antares»
2010

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Խմբագիր՝ **Հրաչիկ ՍԱՐԳՍՅԱՆ**
ՀՀ դատավորների միության նախագահ,
Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության
դատարանի նախագահ

Լեզվաոճական խմբագիր՝ **Ամալյա Հարությունյան**

Երևան
«Անտարես»
2010

ՀՏԴ 347 : 341.231.14
ԳՄԴ 67.99(2)3 + 67.91
Ե 472

Տպագրվում է
ՀՀ դատավորների միության խորհրդի որոշմամբ

Ենգիբարյան Վահե, Չախոյան Արթուր
Ե 472 Դատապարտյալի իրավունքներ / Վահե Ենգիբարյան, Արթուր Չախոյան : Խմբ. Հ. Սարգսյան.- Եր, Անտարես, 2010.- 112 էջ:

Ձեռնարկում համակարգված և հանրամատչելի եղանակով ներկայացված են դատապարտյալի իրավունքներին վերաբերող հիմնախնդիրները, ինչպես նաև այս բնագավառում ՀՀ օրենսդրությունն ու դատական պրակտիկան:

ՀՏԴ 347 : 341.231.14
ԳՄԴ 67.99(2)3 + 67.91

ISBN 978–9939–51–261–7

© ՀՀ դատավորների միություն, 2010
© Սարգսյան Հրաչիկ, 2010
© Ենգիբարյան Վահե, 2010
© Չախոյան Արթուր, 2010

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաժին 1
Ընդհանուր դրույթներ..... 9
Ինչի՞ց է բաղկացած ՀՀ քրեակատարողական օրենսդրությունը 9
Որո՞նք են պատիժը կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու հիմքերը 10
Որո՞նք են քրեակատարողական օրենսդրության սկզբունքները ... 10

Բաժին 2
Դատապարտյալի իրավական վիճակը 12
Ո՞վ է դատապարտյալը 12
Որո՞նք են դատապարտյալի հիմնական իրավունքները..... 12
Որո՞նք են դատապարտյալի պարտականությունները 14
Ի՞նչ կարգով են քննարկվում դատապարտյալի առաջարկությունները, դիմումները և բողոքները 14

Բաժին 3
Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու կարգը 16
Որո՞նք են կալանավորված անձանց և դատապարտյալների սանիտարական և բուժկանխարգելիչ օգնության գործում քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման ստորաբաժանումների նպատակը, խնդիրները և սկզբունքները 16
Քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման ի՞նչ ստորաբաժանումներ և բժշկական աշխատանքային հանձնաժողովներ կան 18
Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնության գործում ինչպիսի՞ պարտականություններ ունեն բժշկական սպասարկում իրականացնող քրեակատարողական ծառայողները 19
Ինչպե՞ս է կազմակերպվում կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական օգնությունը 24

Ինչպե՞ս է կազմակերպվում կալանավորված անձանց և դատապարտյալների ամբուլատոր բժշկական օգնությունը հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի կողմից 25
Ինչպե՞ս է կազմակերպվում կալանավորված անձանց և դատապարտյալների անհետաձգելի բժշկական օգնությունը հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի կողմից 27
Ինչպե՞ս է կազմակերպվում կալանավորված անձանց և դատապարտյալների բուժական արգելիչ օգնությունը բուժական ուղղիչ հիմնարկում..... 28
Ի՞նչ կարգով են կալանավորված անձինք և դատապարտյալներն ընդունվում բուժական ուղղիչ հիմնարկ 28
Բուժական ուղղիչ հիմնարկում ինչպե՞ս է կազմակերպվում կալանավորված անձանց և դատապարտյալների անհետաձգելի բժշկական օգնությունը 30

Բաժին 4
Պատժից ազատելը..... 31

Որո՞նք են պատժից ազատելու հիմքերը 31
Պատժից ազատելու ինչպիսի՞ կարգ է գործում 31
Ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ինչպիսի՞ առանձնահատկություններ կան 32
Պատժի կրումը հետաձգելու և պատժից ազատելու ի՞նչ կարգ գոյություն ունի 33
Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունեն պատժից ազատված անձինք 34
Ի՞նչ պարտականություններ ունի պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը պատժից ազատվող դատապարտյալի աշխատանքը և կենցաղը կարգավորելու հարցերում 34
Ինչպիսի՞ օժանդակություն է ցուցաբերվում պատժից ազատվող անձին 34
Ի՞նչ կարգով է քննարկվում դատապարտյալների ներման խնդրագրերը 35

Բաժին 5
Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի աշխատանքը, կրթությունը, ինչպես նաև կազմակերպվող մշակութային, լուսավորչական, կրոնական և մարզական միջոցառումները..... 39

Դատապարտյալն ունի՞ աշխատանքի իրավունք 39
Դատապարտյալն ունի՞ կրթության իրավունք 40

Դատապարտյալներն ինչպիսի՞ մշակութային, կրոնական, լուսավորչական և մարզական միջոցառումներ կարող են ստեղծել ուղղիչ հիմնարկում 40
Դատապարտյալն իրավունք ունի՞ կապ ունենալ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ 41

Բաժին 6
Պատժի կրման պայմաններն ուղղիչ հիմնարկներում 43

Ո՞րն է ազատազրկման դատապարտված անձի բնակելի տարածքը 43
Դատապարտյալն իրավունք ունի՞ ձեռք բերել սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ 43
Դատապարտյալն ունի՞ զբոսանքի իրավունք 44
Դատապարտյալին կարո՞ղ է տրամադրվել մեկնում 45
Դատապարտյալին ի՞նչ կարգով է տրամադրվում կարճաժամկետ մեկնում 46

Բաժին 7
Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կիրառվող խրախուսանքի և տույժի միջոցները 47

Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կիրառվող խրախուսանքի ինչպիսի՞ միջոցներ կան 47
Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ խրախուսանքի միջոցն ի՞նչ կարգով է կիրառվում 47
Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ կիրառվող տույժի ի՞նչ միջոցներ կան 47
Ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ տույժի միջոցներն ի՞նչ կարգով են կիրառվում 48

Բաժին 8
Ձերբակալված և կալանավորված անձանց իրավական վիճակը, իրավունքները, դրանց ապահովման երաշխիքները 50

Ինչպիսի՞ իրավական վիճակ ունեն ձերբակալվածները և կալանավորված անձինք 50
Ի՞նչ իրավունքներ ունեն ձերբակալված և կալանավորված անձինք 50
Ի՞նչ պարտականություններ ունեն ձերբակալված և կալանավորված անձինք 52

Բաժին 9
Ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների առանձնահատկությունները 53
Ձերբակալված և կալանավորված անձինք իրավունք ունե՞ն տեսակցելու պաշտպանի, մերձավոր ազգականների և այլ անձանց հետ 53
Ձերբակալված և կալանավորված անձինք ունե՞ն զբոսանքի իրավունք 54
Ինչպե՞ս է կազմակերպվում ձերբակալված և կալանավորված անձանց կապն ընտանիքի ու արտաքին աշխարհի հետ 54
Ի՞նչ կարգով են քննարկվում ձերբակալված և կալանավորված անձանց առաջարկությունները, դիմումները և բողոքները 56
Ձերբակալված և կալանավորված անձինք իրավունք ունե՞ն ձեռք բերել սնունդ, սննդամթերք և անհրաժեշտ առարկաներ 56
Ձերբակալված և կալանավորված անձինք ունե՞ն բուժսանիտարական օգնության իրավունք 58
Ձերբակալված և կալանավորված անձինք ունե՞ն ծանրոցներ, հանձնուքներ և դրամական փոխանցումներ ստանալու իրավունք 59
Կալանավորված անձինք ունե՞ն աշխատանքի իրավունք 60
Որո՞նք են կանանց և անչափահասներին արգելանքի կամ կալանքի տակ պահելու առանձնահատկությունները 61

Կոնվենցիա
Դատապարտյալների փոխանցման մասին 62

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը
ձերբակալման և կալանավորման հարաբերակցության վերաբերյալ 75

ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը
«Դատապարտյալների փոխանցման մասին»
1983 թվականի մարտի 21-ի Ստրասբուրգի միջազգային կոնվենցիայի 10-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ 90

ՀՀ Գերագույն դատարանի պլենումի որոշումը
դատապարտյալներին պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու դատական պրակտիկայի մասին 98

Պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկ .. 105

Կալանավորված անձանց և դատապարտյալներին արգելված աշխատանքների և պաշտոնների ցանկ 111

ԲԱԺԻՆ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԻՆՉԻ՞Ց Է ԲԱՂԿԱՑԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությունը բաղկացած է քրեակատարողական օրենսգրքից և իրավական այլ ակտերից: Իսկ Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրքն էլ հիմնվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի վրա:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի խնդիրներն են՝

- սահմանել քրեական պատիժներ կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու և կրելու կարգն ու պայմանները.
- ապահովել դատապարտյալի ուղղման համար անհրաժեշտ պայմանները.
- պաշտպանել դատապարտյալի իրավունքները և ազատությունները:

Քրեակատարողական օրենսգրքի խնդիրներն իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրքն ամրագրում է պատժի կատարման հիմքը, քրեակատարողական օրենսդրության սկզբունքները, դատապարտյալի իրավական վիճակը, նրա իրավունքները և ազատություններն ապահովելու երաշխիքները, պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու, առանձին պատժատեսակներ կատարելու, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջան նշանակելու և փորձաշրջանի ընթացքում վերահսկողություն իրականացնելու, ինչպես նաև պատժից ազատելու կարգը:

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությունը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Պատիժների կատարումը կարգավորվում է կատարելու պահին գործող քրեակատարողական օրենսդրությամբ: Պատիժները կատարելու և պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու և կրելու կարգն ու պայմանները խստացնելուն ուղղված կամ դատապարտյալի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքներն ու իրավական այլ ակտերը հետադարձ ուժ չունեն:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՊԱՏԻԺԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԺԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏ ՄԻԱՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Պատիժը կատարելու, ինչպես նաև պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կիրառելու հիմքերը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռը կամ որոշումն է, ինչպես նաև համաներման կամ ներման ակտը:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսդրությունը հիմնվում է մարդասիրության, օրինականության, օրենքի առջև դատապարտյալների հավասարության, պատիժների կատարումը տարբերակելու և անհատականացնելու, պատիժների և ուղղման միջոցների զուգակցման սկզբունքների վրա:

Պատժի կատարումը, ինչպես նաև պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը չպետք է զուգակցվեն անձի նկատմամբ ֆիզիկական բռնությամբ, ինչպես նաև այնպիսի գործողություններով, որոնք կարող են հանգեցնել անձի սոցիալ-հոգեբանական զարգացման հետընթացին:

Դատավճռի հիման վրա ազատությունից զրկված ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ոչ մի հանգամանք չի կարող հիմք ծառայել խոշտանգումները կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժն արդարացնելու համար:

Պատիժները կատարող մարմինների և հիմնարկների պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն օրենքով իրենց վերապահված գործողություններ: Պաշտոնատար անձանց գործողությունների կատարումը կարող է բողոքարկվել դատարան կամ օրենքով նախատեսված այլ մարմին:

Պատիժը կատարելու կարգն ու պայմանները տարածվում են բոլոր դատապարտյալների վրա՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, ծննդից, գույքային կամ այլ դրությունից:

Պատիժը կատարելու տարբերակումն ու անհատականացումը հարկադրանքի միջոցների, դատապարտյալի ուղղման և նրա օրինապահ վարքագիծը խթանելու եղանակների նպատակահարմար կիրառումն է, որն իրականացվում է դատապարտյալի անձը տարբերակելու և անհատականացնելու միջոցով:

Դատապարտյալի ուղղման և սոցիալական վերականգնման, ինչպես նաև օրինապահ վարքագիծ ձևավորելու նպատակով պատիժը կարող է զուգակցվել օրենքով նախատեսված ուղղման միջոցների հետ:

ԲԱԺԻՆ 2

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Ո՞Վ Է ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԸ

Այն մեղադրյալը, որի վերաբերյալ կա օրինական ուժի մեջ մտած դատարանի դատավճիռ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն մեղադրական է, կոչվում է դատապարտյալ:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետությունը պաշտպանում է դատապարտյալի իրավունքները, ազատություններն ու օրինական շահերը պատիժը կատարելու ընթացքում, ապահովում է դատապարտյալի նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցների օրինականությունը:

Պատիժը կատարելու ընթացքում դատապարտյալի իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել դատարանի դատավճռով, քրեակատարողական օրենսգրքով և այլ օրենքներով:

Դատապարտյալը քաղաքացիական պարտականությունների կատարումից կարող է ազատվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

Դատապարտյալի իրավունքները, ազատությունները և պարտականություններն իրականացնելու կարգը սահմանվում է քրեակատարողական օրենսգրքով, ինչպես նաև ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Դատապարտյալն իր իրավունքները, ազատությունները և պարտականություններն իրականացնելիս չպետք է խախտի պատիժը կրելու կարգն ու պայմանները, ինչպես նաև ոտնահարի այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

Դատապարտյալն իրավունք ունի՝

- մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալու իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների, դատարանի նշանակած պատժի կատարման կարգի և պայմանների, դրանց փոփոխությունների, առաջարկությունների, դիմումների և բողոքների, ինչպես նաև միջազգային համապատասխան փաստաթղթերի մասին.
- իր նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի.
- իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմ, նրանց

վերադաս մարմիններ, դատարան, դատախազություն, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական միավորումներ և կուսակցություններ, զանգվածային լրատվության միջոցներ, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ կամ կազմակերպություններ.

- առողջության պահպանման, այդ թվում՝ բավարար սնունդ, բժշկական օգնություն ստանալու.
- սոցիալական ապահովության.
- իրավաբանական օգնություն ստանալու.
- անձնական անվտանգության ապահովման.
- մտքի, խղճի և դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության.
- արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու, այդ թվում՝ վարելու նամակագրություն, ունենալու տեսակցություններ, օգտվելու հեռախոսակապից, գրականությունից և հնարավոր լրատվական միջոցներից.
- հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի.
- իր անվամբ կամ ազգանվամբ կոչվելու.
- անձնական ընդունելության խնդրանքով դիմելու պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի ղեկավարին, այդ մարմնի կամ հիմնարկի գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններ.
- քաղաքացիաիրավական գործարքների մասնակցելու.
- հնարավոր և օրենքով նախատեսված կրթություն ստանալու, ստեղծագործ աշխատանքով զբաղվելու.
- պատիժը կատարող հիմնարկի խանութից կամ կրպակից կամ վարչակազմի միջոցով ձեռք բերելու լրացուցիչ սնունդ և առաջին անհրաժեշտության առարկաներ.
- ստանալու և ուղարկելու դրամական փոխանցումներ, հանձնուքներ և ծանրոցներ:

Օտարերկրյա քաղաքացի դատապարտյալն իրավունք ունի կապեր հաստատելու և պահպանելու Հայաստանի Հանրապետությունում իր պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ: Այն դատապարտյալը, ով Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հաստատություն չունեցող երկրի քաղաքացի է, ինչպես նաև փախստականը կամ քաղաքացիություն չունեցող դատապարտյալն իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու այն պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպա-

տոսական հաստատության հետ, որը ստանձնել է այդ անձանց շահերի պաշտպանությունը կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ազգային կամ միջազգային մարմնի հետ:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դատապարտյալը պարտավոր է՝

- դրսևորել օրինապահ վարքագիծ, կատարել և պահպանել պատիժը կամ պատժի կատարման հետ միացված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցները կրելու կարգը և պայմանները սահմանող իրավական ակտերի պահանջները.
- բարեկիրթ վերաբերմունք դրսևորել պատիժները կատարող մարմինների կամ հիմնարկների ծառայողների և աշխատողների, այդ մարմիններ կամ հիմնարկներ այցելող անձանց և մյուս դատապարտյալների նկատմամբ.
- պահպանել անձնական և ընդհանուր հիգիենայի կանոնները.
- խնամքով վերաբերվել պատիժները կատարող հիմնարկների գույքին.
- կատարել պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի վարչակազմի օրինական պահանջները:

Դատապարտյալն իր պարտականությունները, ինչպես նաև պատիժները կատարող մարմինների և հիմնարկների վարչակազմի օրինական պահանջները չկատարելու դեպքում ենթարկվում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Ի՞ՆՉ ԿԱՐԳՈՎ ԵՆ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Դատապարտյալն իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է ներկայացնել ամեն օր ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր: Գրավոր բողոքները ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում, ուղարկվում են հասցեատերերին:

Դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները գրաքննության ենթակա չեն:

Պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմի որոշումների ու գործողությունների առթիվ դատապարտյալի ներկայացրած առաջարկությունները, դիմումները և բողոքները չեն կասեցնում այդ որոշումների և գործողությունների կատարումը:

Դատապարտյալի առաջարկությունները, դիմումներն ու բողոքները քննարկող մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են

քննարկել դրանք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում և ընդունված որոշումների մասին տեղյակ պահել դատապարտյալին:

Արգելվում է որևէ ձևով հետապնդումը դատապարտյալի նկատմամբ իր իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում: Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

ԲԱԺԻՆ 3
ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԲՈՒԺՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒԺԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒԺԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպվում է բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին օրենսդրությանը, սանիտարական օրենսդրությանը և իրավական այլ ակտերին համապատասխան:

Քրեակատարողական ծառայության բժշկական սպասարկման ստորաբաժանումների նպատակը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության պահպանումը և վերականգնումն է:

Բժշկական սպասարկման ստորաբաժանման հիմնական խնդիրներն են՝

ա) կալանավորված անձանց և դատապարտյալներին անհրաժեշտ բժշկական օգնության ապահովումն ու կազմակերպումը.

բ) պարբերական բժշկական զննությունների և հետազոտությունների միջոցով կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության նկատմամբ բժշկական հսկողության ապահովումը, հնարավորության դեպքում՝ բուժական առողջարարական միջոցառումների իրականացումը.

գ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության պահանջների պահպանումը.

դ) կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ բժշկական ու հիգիենիկ գիտելիքների և առողջ ապրելակերպի քարոզչությունը.

ե) կալանավորված անձանց և դատապարտյալների շրջանում հիվանդացության և աշխատունակությունը կորցնելու դեպքերի պարբերական վերլուծությունը և դրանց կանխմանն ուղղված միջոցառումների մշակումը.

զ) ծանր հիվանդության պատճառով պատժի կրումը հետաձգելու կարիք ունեցող դատապարտյալների նկատմամբ բժշկական հսկողության սահմանումը.

է) հիմնարկներում բուժկանխարգելիչ միջոցառումների պլանավորումը և իրականացումը:

Կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական և բուժկանխարգելիչ աշխատանքների պատշաճ կատարման նպատակով հիմնարկների բժշկական սպասարկման բաժինների կամ բաժանմունքների կամ խմբերի կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ՝ վերջիններիս կողմից ներկայացվում են կիսամյակային և տարեկան հաշվետվություններ:

Վարչական վիճակագրական հաշվառման և հաշվետվության հիման վրա իրականացվում է բժշկական օգնության և սպասարկման, կալանավորված անձանց և դատապարտյալների առողջական վիճակի վերաբերյալ տվյալների ամփոփում և վերլուծություն, որոնք հիմք պետք է հանդիսանան հաջորդ տարիներին աշխատանքների պլանավորման համար:

Հիմնարկ ընդունվելիս բոլոր կալանավորված անձինք և դատապարտյալները պետք է ստանան բժշկական օգնություն ստանալու մասին բժշկական խորհրդատվություն և տեղեկատվություն:

Հիմնարկում գտնվելու ընթացքում բժշկական օգնություն ստանալը կալանավորված անձանց և դատապարտյալների համար պետք է հասանելի լինի ցանկացած պահին և առանց խոչընդոտների:

Բժշկական գաղտնիքը պետք է երաշխավորված և պահպանված լինի բժշկական անձնակազմի կողմից:

Կալանավորված անձը և դատապարտյալը յուրաքանչյուր լաբորատոր և գործիքային հետազոտության մասին պետք է ստանա նախնական բացատրություն, այդ կապակցությամբ բժշկին տա իր համաձայնությունը, բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, երբ կալանավորված անձի կամ դատապարտյալի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը:

Կալանավորված անձը և դատապարտյալն իրենց հաշվին և իրենց ընտրությամբ հնարավորություն պետք է ունենան օգտվել այլ բժիշկ-մասնագետներիծառայություններից:

ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ Ի՞ՆՉ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ ԿԱՆ

Կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացնելու նպատակով քրեակատարողական ծառայությունում գործում են քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի՝ վարչության կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող բժշկական սպասարկման բաժինը, ինչպես նաև հիմնարկների կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող բժշկական սպասարկման կամ բժշկական մասնագիտացված բաժինները կամ բաժանմունքները կամ խմբերը:

Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժինը օրենքով սահմանված կարգով իրականացնում է կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման աշխատանքների ընդհանուր կազմակերպումը և վերահսկումը՝ համագործակցելով վարչության, հիմնարկների ստորաբաժանումների, ինչպես նաև առողջապահական այլ մարմինների կամ հաստատությունների հետ:

Հիմնարկների բժշկական սպասարկման կամ բժշկական մասնագիտացված բաժինները կամ բաժանմունքները կամ խմբերը օրենքով սահմանված կարգով իրականացնում են կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական օգնության և սպասարկման աշխատանքները՝ աշխատանքային ծրագրերի հիման վրա՝ համագործակցելով հիմնարկի այլ ստորաբաժանումների հետ:

Բժշկական աշխատանքային հանձնաժողովը (այսուհետ՝ ԲԱՀ) ստեղծվում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանով, երեք տարի ժամկետով, նախագահի, առավելագույնը հինգ բժիշկ-մասնագետ անդամների (թերապևտ, վիրաբույժ, նյարդաբույժ և այլն) և բժշկական մատենավարի կազմով:

ԲԱՀ-ի նախագահ է նշանակվում քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի կազմից, բացառությամբ քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետի, որն իրականացնում է վերահսկողություն՝ ԲԱՀ-ի գործունեության նկատմամբ:

ԲԱՀ-ն իրականացնում է՝

ա) դատական որոշման կատարման հետաձգման ներկայացնելու ենթակա հիվանդ դատապարտյալներին Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2003 թվականի դեկտեմբերի 4-ի «Միջգերատեսչական բժշկական հանձնաժողովներ ստեղծելու կարգը հաստատելու մասին» N 1636-Ն որոշմամբ հաստատված կարգով ստեղծված

համապատասխան միջգերատեսչական բժշկական հանձնաժողովին ներկայացնելու գործընթացը՝ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկին համապատասխան.

բ) բժշկական վերահսկողություն՝ ժամանակին և ճիշտ ախտորոշման, հոսպիտալացման, հետազոտությունների ծավալների, համալիր բուժման կատարման և դրանց հիմնավորվածության, դժբախտ դեպքի և մահվան դեպքերի ուսումնասիրությունների, քննությունների, կոնսիլիումների կամ համապատասխան բժիշկ-մասնագետների խորհրդատվությունների ժամանակին կազմակերպման և դրանց ընթացքում համապատասխան նշանակումների կատարման նկատմամբ:

Իր իրավասությանը վերաբերող հարցերի կապակցությամբ ԲԱՀ-ն ընդունում է որոշումներ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Բժշկական մատենավարը չի օգտվում ձայնի իրավունքից: ԲԱՀ-ի որոշումը ենթակա է պարտադիր կատարման:

ԲԱՀ-ի որոշումը կայացվում է հիվանդ կալանավորված անձի կամ դատապարտյալի համակողմանի բժշկական հետազոտությունների արդյունքների ուսումնասիրության և կոլեգիալ քննարկումների հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բուժական ուղղիչ կամ առողջապահական մարմինների բուժական հիմնարկում՝ լրացուցիչ հետազոտությունից հետո: ԲԱՀ-ի որոշումն արձանագրվում է ԲԱՀ-ի որոշումների գրանցման մատյանում, բժշկական քարտում, հիվանդության պատմագրում և անմիջապես հայտարարվում կալանավորված անձին կամ դատապարտյալին, որը պետք է ներառի կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի մասին տեղեկատվությունը:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԲՈՒԺՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԵՎ ԲՈՒԺԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԻՆՉՊԻՍԻ՞ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՇԱՌԱՅՈՂՆԵՐԸ

Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետի ծառայողական հարցերով ենթակայությունը սահմանվում է համապատասխան իրավական ակտերով սահմանված կարգով:

Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է վերջինիս կողմից առաջարկված և սահմանված կարգով նշանակված պաշտոնատար անձը:

Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետը ղեկավարում և համակարգում է քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի գործունեությունը՝ կատարե-

լով աշխատանքի բաշխում բաժնի մասնագետների միջև, ինչպես նաև բուժական ուղղիչ հիմնարկի բժշկական մասնագիտացված բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի, հիմնարկների բժշկական սպասարկման բաժինների կամ բաժանմունքների կամ խմբերի գործունեությունը:

Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի մասնագետը ենթակա և հաշվետու է քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետին:

Քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի մասնագետը քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետի հանձնարարությամբ պարտավոր է՝

ա) կատարել համապատասխան վերահսկողական աշխատանքներ բուժսանիտարական և բուժկանխարգելիչ աշխատանքների կատարման նկատմամբ՝ բժշկական բնույթի փաստաթղթերի, գրագրությունների հիմնավորվածությունը հսկելու միջոցով, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ հատուկ հանձնաժողովային քննարկումներ անցկացնելով.

բ) կատարել ուսումնասիրություններ հիմնարկներում հիվանդությունների առաջացման պատճառների և պայմանների կապակցությամբ և մշակել համապատասխան բուժսանիտարական և բուժկանխարգելիչ միջոցառումների նախագծեր.

գ) կիսամյակային և տարեկան հաշվետվությունների տվյալների հիման վրա վերլուծել հիմնարկների բժշկական սպասարկման բաժինների կամ բաժանմունքների կամ խմբերի գործունեությունը.

դ) օրենսդրությամբ սահմանված ժամկետներում կազմել քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների պատասխանների նախագծեր.

ե) կատարել համապատասխան աշխատանքներ՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա այլ պետությունների առողջապահական մարմինների կամ հաստատությունների առաջավոր փորձի ուսումնասիրման, ընդհանրացման և տարածման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար:

Բուժական ուղղիչ հիմնարկի պետի բուժական գծով տեղակալը ծառայողական հարցերով ենթակա և հաշվետու է բուժական ուղղիչ հիմնարկի պետին, իսկ բուժսանիտարական և բուժկանխարգելիչ աշխատանքների հարցերով՝ քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետին:

Բուժական ուղղիչ հիմնարկի պետի բուժական գծով տեղակալի բացակայության ժամանակ նրա պարտականությունները կատարում է վերջինիս կողմից առաջարկված և սահմանված կարգով նշանակված պաշտոնատար անձը:

Բուժական ուղղիչ հիմնարկի բժշկական մասնագիտացված բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարը ծառայողական, բուժսանիտարական և բուժկանխարգելիչ աշխատանքների հարցերով ենթակա և հաշվետու է բուժական ուղղիչ հիմնարկի պետի բուժական գծով տեղակալին:

Բուժական ուղղիչ հիմնարկի բժշկական մասնագիտացված բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարը պարտավոր է՝

ա) կատարել ստորաբաժանման բժշկական անձնակազմի պարտականությունների և աշխատանքի բաշխում և ապահովել դրանց պատշաճ կատարումը.

բ) կատարել հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդունում, ժամանակին և ամբողջական հետազոտում, ճշգրիտ ախտորոշում, բուժման մեթոդի ընտրություն, հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների դուրսգրման ներկայացում.

գ) հետևել ստորաբաժանման կողմից սանիտարական օրենսդրության պահանջների կատարմանը.

դ) ստորաբաժանման բժիշկ-մասնագետների հետ կատարել հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների պարբերական համայցեր, առնվազն շաբաթը մեկ անգամ՝ հետազոտելով ստորաբաժանման բոլոր հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին.

ե) բուժական ուղղիչ հիմնարկի պետի բուժական գծով տեղակալին անհապաղ զեկուցել կալանավորված անձանց և դատապարտյալների մահվան դեպքերի, դժբախտ դեպքերի (վարակիչ հիվանդությունների, հոգեկան խանգարման ախտանշանների առկայության, թունավորումների, սննդային թունավորումների, ծանր վնասվածքներով պատահարների և այլն) և այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին.

զ) բուժական ուղղիչ հիմնարկի պետի բուժական գծով տեղակալին ներկայացնել առաջարկություն՝ հիվանդ կալանավորված անձին կամ դատապարտյալին այլ ստորաբաժանում փոխադրելու, բժշկական կոնսիլիում, խորհրդատվություն կամ բժշկական հանձնաժողովային քննարկում անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ.

է) կատարել մահճակալային ֆոնդի արդյունավետ օգտագործման ուղղությամբ ստորաբաժանման գործունեության ամենամսյա վերլուծություն.

ը) հետևել բժշկական բոլոր փաստաթղթերի լրացման ճշտությանը և ամբողջականությանը.

թ) դեղերի և բժշկական այլ պարագաների ստացման նպատակով ճիշտ և ժամանակին ներկայացնել հայտերը, ինչպես նաև հետևել ստորաբաժանումն անհրաժեշտ բժշկական գույքով ապահովմանը.

ժ) սահմանված կարգով պահպանել բժշկական փաստաթղթերը, դեղերը և բժշկական պարագաները՝ իր ենթակայության ստորաբաժանումում.

ժա) կազմել և բուժական ուղղիչ հիմնարկի պետի բուժական գծով տեղակալին ներկայացնել ստորաբաժանման գործունեության աշխատանքային տարեկան ծրագիրը՝ ոչ ուշ, քան հաջորդ տարվա հունվարի յոթը.

ժբ) բուժական ուղղիչ հիմնարկի պետի բուժական գծով տեղակալին ներկայացնել կիսամյակային կամ տարեկան հաշվետվություն՝ ստորաբաժանման գործունեության վերաբերյալ՝ հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո հնգօրյա ժամկետում.

ժգ) անցկացնել մասնագիտական խորհրդատվություններ այլ ստորաբաժանումներում:

Բուժական ուղղիչ հիմնարկի բժշկական մասնագիտացված բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի, ինչպես նաև հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի, բաժանմունքի, խմբի կամ մասնագիտացված ստորաբաժանման գլխավոր, առաջատար և առաջին կարգի մասնագետը պարտավոր է՝

1) կատարել հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդունում, ժամանակին և ամբողջական հետազոտում, ճշգրիտ ախտորոշում, բուժման մեթոդի ընտրություն, հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների դուրսգրման ներկայացում.

2) հետևել ստորաբաժանման կողմից սանիտարական օրենսդրության պահանջների կատարմանը՝ իրականացնելով սանիտարական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ արտադրական (ներքին) հսկողություն.

3) իրականացնել հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների ամենօրյա համայցեր՝ հիվանդության պատմություններում կատարելով համապատասխան գրառումներ.

4) բուժական ուղղիչ հիմնարկի մասնագիտացված բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի կամ հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի, բաժանմունքի կամ խմբի կամ մասնագիտացված ստորաբաժանման ղեկավարին անհապաղ զեկուցել հոգեկան խանգարումների, թունավորումների, սննդային թունավորումների, վարակիչ հիվանդությունների ախտանիշների, տեղի ունեցած ծանր վնասվածքներով պատահարների և այդ ուղղությամբ ձեռնարկված միջոցների, ինչպես նաև մահվան դեպքերի վերաբերյալ.

5) բուժական ուղղիչ հիմնարկի մասնագիտացված բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի կամ հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի, բաժանմունքի կամ խմբի կամ մասնագիտացված ստորաբաժանման ղեկավարին ներկայացնել առաջարկություն հիվանդ կալանավոր-

ված անձին կամ դատապարտյալին այլ ստորաբաժանում փոխադրելու, բժշկական կոնսիլիում, խորհրդատվություն կամ բժշկական հանձնաժողովի կողմից քննարկում անցկացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Բուժական ուղղիչ հիմնարկի բժշկական մասնագիտացված բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի, ինչպես նաև հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի, բաժանմունքի, խմբի կամ մասնագիտացված ստորաբաժանման երկրորդ կամ երրորդ կարգի մասնագետը պարտավոր է՝

1) մասնակցել հիմնարկ ընդունվող կալանավորված անձանց կամ դատապարտյալների բժշկական զննությանը և դրա արդյունքներն արձանագրել մարմնական զննության մատյանում և անհրաժեշտության դեպքում ցուցաբերել բժշկական օգնություն.

2) հետևել ստորաբաժանման կողմից սանիտարական օրենսդրության պահանջների կատարմանը՝ իրականացնելով սանիտարական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ արտադրական (ներքին) հսկողություն.

3) բժիշկ-մասնագետի բացակայության դեպքում անցկացնել բժշկական օգնության տրամադրման նպատակով ընդունելություն.

4) կատարել հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների համայց, իրականացնել բժիշկ-մասնագետի կողմից արված նշանակումները՝ գրանցումներ կատարելով համապատասխան մատյանում.

5) իրականացնել հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների խնամքը.

6) հետևել հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների սանիտարական մշակման և իրերի վարակազերծման աշխատանքների կատարմանը.

7) բուժական ուղղիչ հիմնարկի բժշկական մասնագիտացված բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի, ինչպես նաև համապատասխանաբար հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի, բաժանմունքի, խմբի կամ մասնագիտացված ստորաբաժանման ղեկավարին զեկուցել ծանր վնասվածքներով, բռնության հետքերով, թունավորմամբ ընդունված հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների, ուշ հոսպիտալացման դեպքերի, զանգվածային հիվանդությունների, հոգեկան խանգարմամբ կամ սուր վարակիչ հիվանդությամբ տառապող անձանց, հետազոտման, բուժման, հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական և կենցաղային ապահովման հարցերում բացահայտված թերությունների մասին:

Հերթապահ բուժաշխատողը պարտավոր է՝

1) հետազոտել հիմնարկ ընդունվող բոլոր կալանավորված անձանց և դատապարտյալներին, անհրաժեշտության դեպքում նրանց ցուցաբերել բժշկական օգնություն և կազմակերպել հոսպիտալացումը.

2) ընդունվող յուրաքանչյուր հիվանդ կալանավորված անձի կամ դատապարտյալի համար բացել հիվանդության պատմագիր.

3) հետևել հիվանդ կալանավորված անձի կամ դատապարտյալի սանիտարական մշակման և իրերի վարակազերծման ճիշտ կատարմանը.

4) հիվանդ կալանավորված անձ կամ դատապարտյալ ընդունելիս մահճակալային ֆոնդի պակասի դեպքում ձեռնարկել համապատասխան միջոցներ.

5) բուժական ուղղիչ հիմնարկի բուժական գծով տեղակալին կամ հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարին, վերջիններիս բացակայության դեպքում հիմնարկի պատասխանատու հերթապահին զեկուցել ծանր վնասվածքներով, բռնության հետքերով, թունավորմամբ ընդունված հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների, ուշ հոսպիտալացման դեպքերի, զանգվածային հիվանդությունների, հոգեկան խանգարմամբ կամ սուր վարակիչ հիվանդությամբ տառապող անձանց, հետազոտման, բուժման, հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների բժշկական և կենցաղային ապահովման հարցերում բացահայտված թերությունների մասին.

6) կատարել համայց բժշկական սպասարկման բաժիններում, մասնագիտացված բաժանմունքներում կամ խմբերում.

7) սահմանել արտադրական (ներքին) հսկողություն սննդամթերքի պահպանման և սննդի պատրաստման հիգիենիկ ու հակահամաճարակային պահանջների կատարման նկատմամբ՝ այդ մասին գրառում կատարելով համապատասխան մատյանում:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԲՈՒԺՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Հիմնարկներում կալանավորված անձանց և դատապարտյալների բուժսանիտարական աշխատանքների ապահովումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պարտադիր պահպանմամբ, ինչպես նաև սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացմամբ:

Վարակիչ հիվանդությունների բռնկման կամ համաճարակի դեպքում բուժական ուղղիչ հիմնարկի բաժանմունքներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մտցվում են

ռեժիմային սահմանափակման միջոցներ, իրականացվում են օջախի տեղայնացմանը և չեզոքացմանն ուղղված հակահամաճարակային միջոցառումներ՝ տեղեկացնելով քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետին:

Վարակիչ հիվանդության օջախում անց են կացվում հակահամաճարակային միջոցառումներ, որոնց բովանդակությունը կախված է վարակի բնույթից, կալանավորված անձանց և դատապարտյալների տեղավորման առանձնահատկություններից: Անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել սահմանափակող միջոցառումներ:

Առանձնացվում է հակահամաճարակային սահմանափակման միջոցառումների երեք աստիճան՝

1) ուժեղացված բժշկական հսկողություն.

2) օբսերվացիա, որը նախատեսում է՝

ա) ուժեղացված բժշկական հսկողություն.

բ) կալանավորված անձանց և դատապարտյալների ընդունման սահմանափակում կամ ընդունվածների առանձնացված տեղաբաշխում.

գ) հատուկ բուժկանխարգելիչ և հակահամաճարակային միջոցառումների անցկացում.

3) կարանտին, որը հակահամաճարակային միջոցառումների համակարգ է՝ ուղղված վարակիչ հիվանդության օջախի մեկուսացմանը և վարակիչ հիվանդության վերացմանը:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱՐԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՄ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԿԱՄ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ

Կալանավորված անձանց և դատապարտյալների ամբուլատոր բժշկական օգնությունը ցուցաբերվում է հիմնարկների՝ այդ նպատակով առանձնացված տարածքում կամ տարածքներում:

Կալանավորված անձանց և դատապարտյալների ամբուլատոր ընդունելությունը կատարվում է բժիշկ մասնագետի (կամ միջին բուժանձնակազմի) կողմից՝ հատուկ կահավորված սենյակում:

Ամբուլատոր ընդունելությունից առաջ միջին բուժանձնակազմն առանձնացնում է բժշկական քարտը, կազմակերպում բժիշկ մասնագետի մոտ այցելության հերթականությունը՝ հաշվի առնելով բժշկական օգնության անհետաձգելիությունը:

Հիվանդ կալանավորված անձին կամ դատապարտյալին զննելուց հետո բժիշկ մասնագետը կամ միջին բուժանձնակազմը բժշկական քարտում և կալանավորված անձանց և դատապարտյալների ամբուլատոր բժշկական օգնության ցուցաբերման մատյանում և կալանավոր-

ված անձանց և դատապարտյալների ստոմատոլոգիական օգնության ցուցաբերման մատյանում կատարում է համապատասխան գրառումներ: Հոգեկան խանգարում ունեցող հիվանդ կալանավորված անձինք և դատապարտյալները գրանցվում են հոգեկան հիվանդություններով տառապող կալանավորված անձանց և դատապարտյալների դիսպանսեր հաշվառման մատյանում:

Ժամանակավոր անաշխատունակությամբ պայմանավորված՝ հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների ցուցակը բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարը ներկայացնում է հիմնարկի պատասխանատու հերթապահին՝ օրվա կարգացուցակի պահանջներից ազատելու նպատակով:

Օրվա կարգացուցակի պահանջներից ազատելու կամ աշխատանքից մասնակիորեն կամ լրիվ ազատելու եզրակացությունը տրվում է բժշկի կողմից՝ ոչ ավելի, քան 3 օր, իսկ նրա բացակայության դեպքում՝ միջին բուժանձնակազմի կողմից՝ ոչ ավելի, քան 1 օր ժամկետով: Անհրաժեշտության դեպքում ժամկետը կարող է երկարացվել:

Աշխատանքից ազատելու մասին ժամանակավոր անաշխատունակության թերթիկը կալանավորված անձին կամ դատապարտյալին տրվում է առձեռն:

Բժշկական քարտը համարվում է բժշկական գաղտնիք պարունակող փաստաթուղթ և կալանավորված անձին կամ դատապարտյալին առձեռն չի տրվում: Բժշկական քարտերը պահվում են բժշկական սպասարկման բաժնում կամ բաժանմունքում կամ խմբում՝ չհրկիզվող պահարանում, որոնց հաշվառման և պահպանման համար պատասխանատու է հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Բժշկական քարտերի հետ պահվում է նաև կալանավորված անձանց և դատապարտյալների ամբուլատոր բժշկական օգնության ցուցաբերման մատյանը:

Բժշկական քարտում պարունակվող տեղեկություններին ծանոթանալու նպատակով կալանավորված անձին կամ դատապարտյալին, ինչպես նաև նրանց գրավոր համաձայնությամբ մատնացույց արված անձանց տրվում են բժշկական քարտից քաղվածք կալանավորված անձի կամ դատապարտյալի առողջական վիճակի մասին:

Դեղերը և այլ պարագաները կալանավորված անձանց և դատապարտյալներին առձեռն չեն տրվում, բացառությամբ կյանքին սպառնացող հիվանդությունների դեպքերի, երբ դեղերի ընդունումը կրում է անհետաձգելի բնույթ: Դեղորայքի ընդունումը կատարվում է բուժաշխատողի ներկայությամբ, բացառությամբ կյանքին սպառնացող հիվանդությունների դեպքերի, երբ դեղերի ընդունումը կրում է անհետաձգելի բնույթ:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆԱՐԿԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՄ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԿԱՄ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ

Կալանավորված անձանց և դատապարտյալների անհետաձգելի բժշկական օգնությունը կազմակերպվում և իրականացվում է հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բաժանմունքի կամ խմբի կողմից: Անհետաձգելի բժշկական օգնության ծավալը կախված է հիմնարկի տեսակից, իր ենթակայության տակ գտնվող բժիշկ մասնագետներից և տեխնիկական միջոցներից, հիմնարկի տեղակայման հանգամանքից:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով փոխադրամիջոցներով և պահակախմբով հիվանդ կալանավորված անձի կամ դատապարտյալի փոխադրման համար պատասխանատու է հիմնարկի պետը:

Հիմնարկի բժշկական սպասարկման բաժինը կամ բաժանմունքը կամ խումբը պետք է պատրաստ լինի ցուցաբերել անհետաձգելի բժշկական օգնություն օրվա ցանկացած ժամին, որի համար անհրաժեշտ է ունենալ համապատասխան բժշկական հավաքածու:

Դեղորայքը և բժշկական պարագաները պահվում են հիմնարկի վարչական շենքի՝ ազդանշանային համակարգով ապահովված վայրում՝ մետաղական չհրկիզվող պահարանում: Դրանց դուրսգրումը կատարվում է բժշկական ցուցումներին խստիվ համապատասխան՝ հիվանդ կալանավորված անձի կամ դատապարտյալի բժշկական քարտում, հիվանդության պատմագրում և բժշկական սպասարկման բաժնում կամ բաժանմունքում կամ խմբում դեղերի և այլ պարագաների քանակական հաշվառման մատյանում գրառումներ կատարելով:

Ընթացիկ գործածման համար նախատեսված դեղերը և անհետաձգելի բժշկական օգնության համար նախատեսված գույքը պետք է պահվեն առանձին:

Բժշկական սպասարկման բաժնում կամ բաժանմունքում կամ խմբում թույլատրվում է պահել ոչ ավելի, քան յոթ օրվա համար անհրաժեշտ դեղեր և այլ բժշկական պարագաներ:

ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԲՈՒԺԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԺԱԿԱՆ ՈՒՂՂԻՉ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Բուժական ուղղիչ հիմնարկը հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների բուժման համար նախատեսված բուժկանխարգելիչ հիմնարկ է: Այն ապահովում է համալիր բժշկական մասնագիտացված հետազոտություն և բժշկական օգնություն, խնամքի բավարար ծավալներ:

Բուժական ուղղիչ հիմնարկն իրականացնում է՝

1) կալանավորված անձանց և դատապարտյալների համալիր բուժկանխարգելիչ միջոցառումներ.

2) բժշկական ախտորոշիչ գործունեության կատարելագործմանը, մահճակալային ֆոնդի արդյունավետ օգտագործմանը, հիվանդացության նվազմանն ուղղված միջոցառումներ.

3) համալիր բուժման ընթացքում վերականգնողական միջոցառումների կիրառում.

4) ախտորոշման ժամանակակից մեթոդների և բուժկանխարգելիչ միջոցների առողջապահական մարմինների բուժական հիմնարկների աշխատանքի առաջավոր փորձի ուսումնասիրում, ընդհանրացնում և տարածում՝ հիմնարկների բժշկական սպասարկման բաժիններում կամ բաժանմունքներում կամ խմբերում.

5) հիմնարկների բժշկական սպասարկման բաժիններին կամ բաժանմունքներին կամ խմբերին խորհրդատվական օգնության տրամադրում.

6) մասնակցություն աշխատունակության ժամանակավոր կորստով պայմանավորված հիվանդության դեպքերի ուսումնասիրմանը.

7) բժիշկ մասնագետների մասնակցություն սխալ ախտորոշման, ուշացած, անհիմն կամ ոչ բավարար հիմնավորված երկարաժամկետ հոսպիտալացման և մահվան դեպքերի վերլուծությանը.

8) մասնակցություն կալանավորված անձանց և դատապարտյալների պարբերական բուժկանխարգելիչ հետազոտություններին:

Ի՞ՆՉ ԿԱՐԳՈՎ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԲՈՒԺԱԿԱՆ ՈՒՂՂԻՉ ՀԻՄՆԱՐԿ

Կալանավորված անձինք և դատապարտյալները ենթակա են հոսպիտալացման բուժական ուղղիչ հիմնարկում, որոնց հետազոտումը կամ բուժումը հիմնարկի բժշկական սպասարկման բաժնի կամ բա-

ժանմունքի կամ խմբի պայմաններում հնարավոր չէ կամ անհրաժեշտություն կա մասնագիտացված կամ երկարատև բուժման:

Կալանավորված անձինք և դատապարտյալները բուժական ուղղիչ հիմնարկ են ընդունվում բացառապես բժշկական ցուցումների հիման վրա: Կալանավորված անձանց և դատապարտյալներին բուժական ուղղիչ հիմնարկ ընդունելու համար անհրաժեշտ է բժշկական քարտում ունենալ հիմնարկի բժիշկ մասնագետի ուղեգիրը՝ հիվանդ կալանավորված անձի կամ դատապարտյալի ստացիոնար հետազոտման կամ բուժման անհրաժեշտության մասին համապատասխան եզրակացությամբ, բացառությամբ անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու դեպքերի:

Բուժական ուղղիչ հիմնարկը սահմանված կարգով ապահովում է նաև վարակիչ հիվանդություններով տառապող և դրանց ախտանիշներ ունեցող հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալների ընդունում, բուժում և խնամք: Հատուկ վտանգավոր վարակով հիվանդ կալանավորված անձինք և դատապարտյալները հոսպիտալացվում են առողջապահական մարմինների բուժական հիմնարկներում:

Հիվանդ կալանավորված անձին կամ դատապարտյալին ընդունելիս՝ բուժական ուղղիչ հիմնարկի հերթապահ բուժաշխատողը հավաքում է նրա առողջական վիճակի մասին անհրաժեշտ տեղեկություններ, որոնք գրառվում են կալանավորված անձանց և դատապարտյալների ստացիոնար բժշկական օգնության ցուցաբերման մատյանում և հիվանդության պատմագրում:

Բուժական ուղղիչ հիմնարկ ընդունվելիս՝ հիվանդ կալանավորված անձինք կամ դատապարտյալները մանրազնին հետազոտվում են, ենթարկվում են սանիտարական մշակման (եթե նրանց առողջական վիճակը թույլ է տալիս), նրանց պատկանող հագուստը և կոշիկները ենթարկվում են վարակազերծման:

Աշխատանքային ժամերին ընդունված հիվանդ կալանավորված անձինք կամ դատապարտյալները, բացի հերթապահ բուժաշխատողից, հետազոտվում են նաև համապատասխան բաժանմունքի բժիշկ մասնագետների կողմից:

Հոսպիտալացումը մերժելու պատճառների և ձեռնարկված միջոցների մասին հերթապահ բուժաշխատողը բժշկական քարտում և կալանավորված անձանց և դատապարտյալների ստացիոնար բժշկական օգնության ցուցաբերման մատյանում կատարում է համապատասխան գրանցումներ՝ տեղեկացնելով բուժական ուղղիչ հիմնարկի ղեկավարությանը և քրեակատարողական վարչության բժշկական սպասարկման բաժնի պետին:

ԲՈՒԺԱԿԱՆ ՈՒՂՂԻՉ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ ԻՆՉՊԵ՞Ս Է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ԱՆՀԵՏԱՁԳԵԼԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Բուժական ուղղիչ հիմնարկ փոխադրված կալանավորված անձանց և դատապարտյալներին, կախված նրանց առողջական վիճակից, անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերվում է ընդունարանում կամ համապատասխան մասնագիտացված բաժանմունքում:

Բուժական ուղղիչ հիմնարկում անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով մշտապես ապահովվում է հիվանդ կալանավորված անձանց և դատապարտյալներին ընդունելու համապատասխան պայմաններ՝ անհրաժեշտ դեղեր և սարքավորումներ:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով ընդունարանում պահվում է հատուկ բժշկական հավաքածու:

Անհետաձգելի բժշկական օգնություն ցուցաբերելու նպատակով հիվանդ կալանավորված անձի և դատապարտյալի փոխադրումը կատարվում է բժիշկ մասնագետի կամ նրա բացակայության դեպքում՝ հերթապահ բուժաշխատողի եզրակացությամբ, ինչի մասին կալանավորված անձի կամ դատապարտյալի հիվանդության պատմագրում կատարվում է համապատասխան գրառում՝ նշելով փոխադրման պատճառը:

ԲԱԺԻՆ 4
ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼԸ

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

Պատժից ազատելու հիմքերն են՝

1) դատարանի դատավճռով նշանակված պատիժն ամբողջությամբ կրելը.

2) դատարանի դատավճռի բեկանումը՝ գործի վարույթի կարճմամբ.

3) պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը.

4) պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը.

5) ներումը.

6) համաներումը.

7) պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունը.

8) արտակարգ հանգամանքները:

Օրենքով կարող են նախատեսվել պատժից ազատելու այլ հիմքեր:

ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՉՊԻՍԻ՞ ԿԱՐԳ Է ԳՈՐԾՈՒՄ

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, կալանքի, կարգապահական գումարտակում պահելու և որոշակի ժամկետով ազատազրկման ձևով պատժատեսակների կրումը դադարեցվում է պատժի ժամկետի վերջին օրը՝ հաշվի առնելով այն փոփոխությունները, որոնք օրենքով սահմանված կարգով կարող են մտցվել պատժի ժամկետի մեջ:

Կալանքի, կարգապահական գումարտակում պահելու և որոշակի ժամկետով ազատազրկման դատապարտված անձը պատժից ազատվում է պատժի ժամկետի վերջին օրվա առաջին կեսին: Եթե պատժի ժամկետն ավարտվում է ոչ աշխատանքային օրը, ապա դատապարտյալը պատժից ազատվում է դրան նախորդող օրը: Պատժի ժամկետն ամիսներով հաշվելիս այն ավարտվում է վերջին ամսվա համապատասխան օրը, իսկ եթե տվյալ ամիսը համապատասխան ամսաթիվ չունի, ապա այդ ամսվա վերջին օրը:

Դատավճիռը բեկանելու հետևանքով քրեական գործի կարճմամբ պատժից ազատված անձին պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը պարզաբանում է պատիժը կրելու ընթացքում կասեցված գույքային, աշխատանքային և այլ իրավունքների վերականգնման վերաբերյալ նրա իրավունքները: Դատավճիռը բեկանելու հետևանքով քրեական գործի կարճմամբ պատժից ազատվելու վերաբերյալ

փաստաթղթերի մեջ պետության անունից պաշտոնապես ներողություն է խնդրվում դատապարտյալից:

Դատապարտյալը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվում է համապատասխան փաստաթղթերն ստանալու օրը, իսկ եթե այդ փաստաթղթերն ստացվում են աշխատանքային օրվա ավարտից հետո՝ հաջորդ օրվա առավոտյան:

Դատապարտյալին ներում շնորհելու և պատժից ազատելու կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Հոգեկան կամ այլ ծանր հիվանդության կապակցությամբ պատժի հետագա կրումից ազատելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացնում պատիժը կատարող հիմնարկի պետը: Միջնորդության հետ միաժամանակ ներկայացվում են համապատասխան բժշկական հանձնաժողովի եզրակացությունը և դատապարտյալի անձնական գործը: Կարգապահական գումարտակում պահելու դատապարտված անձը պատիժը կրելուց ազատվում է այնպիսի հիվանդության դեպքում, որի հետևանքով նա համարվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

Պատժից ազատվելիս դատապարտյալին հանձնվում են նրան պատկանող գույքը, անձնական փաստաթղթերը, այդ թվում՝ պատժից ազատելու վերաբերյալ փաստաթղթերը:

ՑՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԻՆ ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՑ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԱԶԱՏԵԼՈՒ ԻՆՉՊԻՍԻ՞ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ

Ցմահ ազատազրկման դատապարտված անձը կարող է ներկայացվել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման նախորդ հինգ տարիների ընթացքում պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումների համար տույժ չունենալու դեպքում՝ ազատազրկման ոչ պակաս, քան քսան տարին կրելուց հետո:

Ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու վերաբերյալ միջնորդագիր ներկայացնելու մասին որոշումը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցերով անկախ հանձնաժողովի՝ հավանություն չտալու մասին որոշումն ստանալու դեպքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու ներկայացման հարցը քննարկում է հավանություն չստանալու որոշումը կայացվելուց մեկուկես տարի անց:

Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը դատարանի կողմից մերժվելու դեպքում նույն հիմքով միջնորդություն կրկին կարող է ներկայացվել դատարան մերժման որոշումը կայացվելուց երեք տարի անց:

ՊԱՏԺԻ ԿՐՈՒՄԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ Ի՞ՆՉ ԿԱՐԳ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ

Եթե դատապարտյալը հղի կին է կամ ունի մինչև երեք տարեկան երեխա կամ տառապում է պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությամբ, ինչպես նաև եթե պատժի հետագա կրումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել դատապարտյալի կամ նրա ընտանիքի անդամների համար (հրդեհ կամ այլ տարերային աղետներ, ընտանիքի միակ աշխատունակ անձի ծանր հիվանդություն, մահ կամ այլ բացառիկ հանգամանքներ), ապա պատժի կրումը հետաձգելու կամ պատժից ազատելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացնում պատիժը կատարող մարմնի կամ հիմնարկի ղեկավարը: Միջնորդությանը կցվում են դատապարտյալի բնութագիրը, նրան և երեխային ընդունելու, նրանց բնակարան տրամադրելու և ապրելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու մասին հարազատի համաձայնությունը կամ դատապարտյալի՝ բնակարանով և երեխայի հետ ապրելու համար անհրաժեշտ պայմաններով ապահովված լինելու մասին տեղեկանքը կամ հղիության մասին բժշկական եզրակացությունը կամ երեխայի ծննդյան վկայականի պատճենը կամ այլ հանգամանքների մասին տեղեկանքներ, ինչպես նաև դատապարտյալի անձնական գործը:

Ուղղիչ հիմնարկի վարչակազմը դատապարտյալի ազատման օրը ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանում է ուղարկում պատժի կրումը հետաձգելու մասին դատարանի որոշման պատճենը՝ նշելով ազատման օրը:

Ուղղիչ հիմնարկի վարչակազմը դատապարտյալից ստորագրություն է վերցնում պատժից ազատվելուց հետո՝ երեք օրվա ընթացքում, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումում հաշվառվելու պարտավորության մասին:

Դատապարտյալի ներկայանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ստորաբաժանումը պարտավոր է ուղղիչ հիմնարկին տեղեկացնել այդ մասին:

Դատապարտյալն իր բնակության վայր է մեկնում ինքնուրույն և իր հաշվին:

Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Պատժից ազատված անձինք օգտվում են այն իրավունքներից և կրում են այն պարտականությունները, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար, բացառությամբ դատվածություն ունեցող անձանց, օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց համար օրենքով նախատեսված սահմանափակումների:

Ի՞ՆՉ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԻ ՊԱՏԻԺԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԻՄՆԱՐԿԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԸ ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԵՎ ԿԵՆՑԱՂԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի սոցիալական վերականգնման հարցերով համագործակցում է հասարակական և այլ կազմակերպությունների ու մարմինների հետ: Ազատմանը նախապատրաստվելու նպատակով դատապարտյալի հետ վաղօրոք անցկացվում է համապատասխան աշխատանք:

Ազատազրկման ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը դատապարտյալի ընտրած բնակության վայրի՝ տեղական ինքնակառավարման և զբաղվածության պետական ծառայությանը տեղեկացնում է դատապարտյալի՝ պատժից առաջիկա ազատման, նրա աշխատունակության, կրթության, մասնագիտության, ինչպես նաև բնակարանի առկայության մասին:

Կենսաթոշակային տարիքի հասած կամ առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ դատապարտյալին, իր խնդրանքով և պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի ներկայացմամբ, սոցիալական ապահովության մարմիններն ուղարկում են հաշմանդամների կամ ծերերի համար նախատեսված հիմնարկներ (ծերանոցներ):

ԻՆՉՊԻՍԻ՞ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ է ՑՈՒՑԱԲԵՐՎՈՒՄ ՊԱՏԺԻՑ ԱԶԱՏՎՈՂ ԱՆՁԻՆ

Ուղղիչ հիմնարկի վարչակազմը պատժից ազատվող անձին ապահովում է մինչև իր բնակության վայր հասնելու նպատակով անվճար ուղևորությամբ կամ դրա համար անհրաժեշտ գումարով՝ առնվազն

Հայաստանի Հանրապետության տարածքում, դրա ընթացքում անհրաժեշտ սննդամթերքով, ինչպես նաև միջոցների բացակայության դեպքում՝ սեզոնային անհրաժեշտ հագուստով: Նրան կարող է տրամադրվել նաև միանվագ դրամական օգնություն:

Պատժից ազատվող և առողջական վիճակի պատճառով խնամքի կարիք ունեցող, հղի, մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձին, ինչպես նաև անչափահասին պատժից ազատելիս պատիժը կատարող հիմնարկի վարչակազմն ազատվելու մասին նախօրոք հայտնում է նրա ազգականներին կամ այլ անձանց, իսկ այդպիսիք չունենալու դեպքում անհրաժեշտ օգնությունը ցուցաբերում է ուղղիչ հիմնարկի վարչակազմը:

Դատապարտյալը բնակության վայր կարող է ուղարկվել նաև ազգականի կամ այլ անձի կամ ուղղիչ հիմնարկի ծառայողի ուղեկցորդմամբ:

Ի՞ՆՉ ԿԱՐԳՈՎ է ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՆԵՐՄԱՆ ԽՆԴՐԱԳՐԵՐԸ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 55-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության նախագահը քննության է առնում դատապարտյալների ներման խնդրագրերը և ներում շնորհելով՝

ա) լրիվ կամ մասնակիորեն ազատում է հիմնական կամ լրացուցիչ պատիժը կրելուց.

բ) պատժի չկրած մասը փոխարինում է ավելի մեղմ պատժատեսակով.

գ) պատիժը կրած անձանց լրիվ կամ մասնակիորեն ազատում է պետության օգտին դատավճիռներով գանձվող նյութական վնասի հետագա հատուցումից.

դ) վերացնում է դատվածությունը:

Ներման խնդրագրերը քննարկվում են միայն դատավճիռներն օրինական ուժի մեջ մտնելուց հետո, իսկ նյութական վնասի հետագա հատուցումից ազատելու վերաբերյալ խնդրագրերը՝ հիմնական պատիժը կրելուց հետո:

Ներման խնդրագրերը քննարկելիս հաշվի են առնվում կատարված հանցագործության բնույթը և հանրության համար վտանգավորության աստիճանը, դատապարտյալի անձը, պատիժը կրելու վայրում նրա վարքը, աշխատանքի նկատմամբ վերաբերմունքը, պատժի կրած ժամկետը, առողջական վիճակը, ընտանիքի սոցիալական վիճակը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Այն անձանց, որոնց նախկինում ներում է շնորհվել կամ որոնց նկատմամբ նախկինում կիրառվել է համաներում կամ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կամ պատժի չկրած մասի փոխարինում ավելի մեղմ պատժով, եթե նրանք մինչև դատվածության մարումը կամ վերացումը նորից դիտավորյալ հանցագործություն են կատարել, ներում կարող է շնորհվել միայն բացառիկ դեպքերում:

Դատապարտյալների ներման խնդրագրերը պատիժը կրելու վայրի կամ պատժի ի կատար ածումը տնօրինող մարմնի վարչակազմի միջոցով երկշաբաթյա ժամկետում ուղարկվում են Հայաստանի Հանրապետության նախագահի քննարկմանը՝ կից ներկայացնելով դատարանների որոշումների ու դատավճիռների պատճենները, դատապարտյալների աշխատանքի և վարքի մասին բնութագրերը, ինչպես նաև ներում շնորհելու հարցի քննարկման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր ու տվյալներ:

Ցմահ ազատազրկման դատապարտված անձանց ներման խնդրագրերի վերաբերյալ նյութերն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահին և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին: Վերջիններս ոչ ուշ, քան դրանք ստանալու օրվանից երկշաբաթյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության նախագահին են ներկայացնում եզրակացություններ՝ նշելով հանցագործության կատարման հանգամանքները, դրա առաջացրած հետևանքները, դատապարտյալի անձի մասին տվյալները և իրենց առաջարկությունները յուրաքանչյուր խնդրագրի վերաբերյալ:

Անհրաժեշտության դեպքում դատապարտյալների ներման խնդրագրերի վերաբերյալ նյութերն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին կամ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենին՝ մեկամսյա ժամկետում եզրակացություն տալու, կամ Հայաստանի Հանրապետության նախագահի հարցմամբ Հայաստանի Հանրապետության արդարադատության խորհուրդ կարծիք ներկայացնելու համար:

Ներման խնդրագրերը, նախքան Հայաստանի Հանրապետության նախագահի քննարկմանը ներկայացնելը, նախապես քննարկվում են Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր ներման հարցերի հանձնաժողովում (այսուհետ՝ հանձնաժողով):

Հանձնաժողովը կազմավորում է Հայաստանի Հանրապետության նախագահը:

Հանձնաժողովի նիստերն անցկացնում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի որոշմամբ նրա անդամներից որևէ մեկը:

Հանձնաժողովի նիստերն իրավազոր են, եթե դրանց ներկա է հանձնաժողովի կազմի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ:

Կազմվում է հանձնաժողովի նիստի արձանագրություն, որում գրանցվում են հանձնաժողովի առաջարկությունները քննարկվող խնդրագրերի վերաբերյալ:

Հանձնաժողովի նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում են Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրենը:

Ներում շնորհելու մասին խնդրագրերն ու միջնորդությունները հանձնաժողովի առաջարկություններով հանդերձ ներկայացվում են Հայաստանի Հանրապետության նախագահի քննարկմանը:

Ներման խնդրագրերը բավարարելու կամ մերժելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահը հրապարակում է հրամանագրեր: Դիմողները տեղեկացվում են իրենց խնդրագրերի քննարկման արդյունքների մասին:

Ներման խնդրագրերը մերժելու դեպքում, եթե ուշադրության արժանի նոր հանգամանքներ չկան, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների համար դատապարտված անձանց կողմից ներկայացված ներման նոր խնդրագրերը Հայաստանի Հանրապետության նախագահի քննարկմանը կարող են ներկայացվել նախորդ խնդրագրերի մերժման օրվանից մեկ տարի անց, իսկ այլ հանցագործությունների համար դատապարտված անձանց կողմից ներկայացված նոր խնդրագրերը՝ վեց ամիս անց:

Նյութական վնասի հետագա հատուցումից ազատելու վերաբերյալ խնդրագրերի մերժման դեպքում նոր խնդրագրերը կարող են Հայաստանի Հանրապետության նախագահի քննարկմանը ներկայացվել նախորդ խնդրագրերի մերժման օրվանից մեկ տարի հետո:

Մինչև նշված ժամկետների ավարտը ստացված նոր խնդրագրերը կցվում են եղած նյութերին:

Ներման խնդրագրերը մասնակիորեն բավարարելուց հետո նույն դատապարտյալներից ստացված նոր խնդրագրերը կարող են քննարկվել միայն ուշադրության արժանի նոր հանգամանքների առկայության դեպքում:

Ներման խնդրագրերը բավարարելու կամ մերժելու մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերն ի կատարումն ուղարկվում են՝ ցմահ ազատազրկման, որոշակի ժամկետով ազատազրկման, կալանքի, ուղղիչ աշխատանքների, գույքի բռնա-

գրավման, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելու, հանրային աշխատանքների, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու և տուգանքի դատապարտված անձանց վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, կալանքի, ինչպես նաև կարգապահական գումարտակում պահելու դատապարտված զինծառայողների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, նյութական վնասի հետագա հատուցումից ազատելու և դատվածության վերացման վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարան:

Ներման խնդրագրերը բավարարելու մասին ՀՀ նախագահի հրամանագրերի քաղվածքներն ուղարկվում են ՀՀ վճռաբեկ դատարան, ՀՀ գլխավոր դատախազություն և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տեղեկատվական կենտրոն:

Ներման խնդրագրերի մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերն ի կատար են ածվում անհապաղ՝ հրամանագրերի քաղվածքներն ստանալուն պես: Այդ հրամանագրերի կատարման մասին հաղորդագրությունները Հայաստանի Հանրապետության նախագահին են ուղարկում այն մարմինները, որոնց վրա դրված է այդ հրամանագրերի կատարումը:

Այն դատապարտյալների նկատմամբ, որոնց նախկինում ներում է շնորհվել, կայացված դատավճիռները կամ որոշումները վճռաբեկության կարգով կամ օրենքի հիման վրա վերանայվելու դեպքում դատարաններն իրենց կայացրած որոշումների մասին տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչությանը:

Նախնական քննարկման համար հանձնաժողով և ՀՀ նախագահի քննարկմանը ներկայացվող անհրաժեշտ նյութերը նախապատրաստում է ՀՀ նախագահի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչությունը:

Ներման խնդրագրերի մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերի կատարումը վերահսկում է Հայաստանի Հանրապետության նախագահի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչությունը:

ԲԱԺԻՆ 5
ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿԱՄ ՑՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ, ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆ ՈՒՆԻ՞ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Դատապարտյալը հնարավորության դեպքում ապահովվում է աշխատանքով կամ նրան իրավունք է վերապահվում ինքնուրույն իրեն ապահովելու աշխատանքով, որի կարգը և պայմանները սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

Դատապարտյալին աշխատանքի ներգրավելիս ուղղիչ հիմնարկի վարչակազմը պարտավոր է հաշվի առնել նրա սեռը, տարիքը, աշխատունակությունը, առողջական վիճակը և հնարավորինս՝ մասնագիտությունը:

Դատապարտյալի աշխատանքային գործունեությունը չպետք է խոչընդոտի ուղղիչ հիմնարկի առջև դրված խնդիրներն իրականացնելուն:

Աշխատանքով ապահովելիս առաջնությունը տրվում է այն դատապարտյալին, ով ունի գույքային պարտավորություններ կամ գտնվում է նյութական ծանր վիճակում:

Դատապարտյալի աշխատանքն ուղղիչ հիմնարկի համար եկամուտ ստանալու նպատակ չի հետապնդում:

Դատապարտյալի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Դատապարտյալը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, ունի աշխատանքի վարձատրության իրավունք:

Դատապարտյալի աշխատանքի ամսական վարձատրությունը չի կարող պակաս լինել սահմանված նվազագույն աշխատավարձից:

Ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ դատապարտյալն իր համաձայնությամբ առանց վարձատրության կարող է ներգրավվել ուղղիչ հիմնարկի կամ դրան հարող տարածքների բարեկարգման աշխատանքներին:

Դատապարտյալը չվարձատրվող աշխատանքներին ներգրավվում է հերթականությամբ՝ ոչ հանգստյան ժամերին՝ օրական երկու ժամից ոչ ավելի ժամանակով:

Առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ, հղի, կենսաթոշակային տարիքի հասած դատապարտյալին չվարձատրվող աշխատանքների ներգրավելն արգելվում է:

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆ ՈՒՆԻ՞ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ուղղիչ հիմնարկի վարչակազմը միջոցներ է ձեռնարկում դատապարտյալի հիմնական և հեռակա բարձրագույն, հետբուհական մասնագիտական կրթությունը կազմակերպելու համար: Դատապարտյալի կրթությունը կազմակերպվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով:

Ուսանող դատապարտյալը քննություններ հանձնելու կապակցությամբ աշխատանքից ազատվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ուղղիչ հիմնարկում կարող է կազմակերպվել դատապարտյալի նախնական մասնագիտական՝ արհեստագործական կրթություն: Մասնագիտական կրթությունը հնարավորինս պետք է լինի այնպիսին, որպեսզի աշխատանքի կատարման ընթացքում պահպանվեն կամ բարելավվեն դատապարտյալի՝ պատժից ազատվելուց հետո ապրուստի միջոց վաստակելու ունակությունները:

Նախնական մասնագիտական կրթությունն անչափահաս դատապարտյալի համար իրականացվում է աշխատանքային օրվա տևողության սահմաններում:

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐՆ ԻՆՉՊԻՍԻ՞ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐՈՆԱԿԱՆ, ԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԵՂԾԵԼ ՈՒՂՂԻՉ ՀԻՄՆԱՐԿՈՒՄ

Դատապարտյալները կարող են ստեղծել մշակութային, լուսավորչական և մարզական ինքնագործ միավորումներ, որոնք գործում են ուղղիչ հիմնարկի վարչակազմի հսկողությամբ: Այդ միավորումները կարող են համագործակցել համապատասխան միությունների և կազմակերպությունների հետ: Դատապարտյալի մասնակցությունն ինքնագործ միավորումների աշխատանքներին խրախուսվում և հաշվի է առնվում նրա ուղղման աստիճանը որոշելիս: Ինքնագործ միավորումների անդամ դատապարտյալը լրացուցիչ արտոնություններից չի օգտվում:

Դատապարտյալների ինքնագործ միավորումների հիմնական խնդիրներն են՝ զարգացնել դատապարտյալի մտավոր, մասնագիտական, ֆիզիկական կարողությունները, դրական ազդեցություն ունենալ

դատապարտյալի ուղղման գործում, մասնակցել դատապարտյալի աշխատանքը, կենցաղը և հանգիստը կազմակերպելուն, սոցիալական օգնություն ցուցաբերել դատապարտյալին և նրա ընտանիքին: Դատապարտյալների ինքնագործ միավորումների առջև կարող են դրվել նաև պատիժը կատարելու նպատակներին, կարգին և պայմաններին չհակասող այլ խնդիրներ:

Դատապարտյալների ինքնագործ միավորումների կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով: Ուղղիչ հիմնարկներում ստեղծվում են պայմաններ՝ դատապարտյալի ազատ ժամանակը արդյունավետ տնօրինելու համար: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են գրադարան, ընթերցարան, մարզասրահ կամ ժամանցի այլ վայրեր:

Ուղղիչ հիմնարկ կարող է հրավիրվել հոգևորական: Թույլատրվում է կազմակերպել կրոնական ծիսակատարություններ, օգտվել պաշտամունքի առարկաներից և կրոնական գրականությունից: Ուղղիչ հիմնարկի վարչակազմն այդ նպատակով առանձնացնում է համապատասխան տարածք:

Ուղղիչ հիմնարկի վարչակազմը հասարակական կամ այլ կազմակերպությունների աջակցությամբ կամ անմիջական մասնակցությամբ կազմակերպում է կրթական, մշակութային, լուսավորչական, կրոնական և մարզական միջոցառումներ:

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՞ ԿԱՊ ՈՒՆԵՆԱԼ ԸՆՏԱՆԻՔԻ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

Ուղղիչ հիմնարկի վարչակազմն ստեղծում է համապատասխան պայմաններ՝ ընտանիքի և արտաքին աշխարհի հետ դատապարտյալի կապն ապահովելու նպատակով: Այդ նպատակով ուղղիչ հիմնարկում ստեղծվում են կարճատև և երկարատև տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:

Մերձավոր ազգականների կամ այլ անձանց հետ կարճատև տեսակցություն տրամադրվում է ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև չորս ժամ տևողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Համատեղ բնակվելու իրավունքով և միայն մերձավոր ազգականների հետ երկարատև տեսակցություն տրամադրվում է երկու ամսվա ընթացքում առնվազն մեկ անգամ՝ մինչև երեք օր տևողությամբ: Երկարատև տեսակցություն տրամադրվում է նաև դատապարտյալի հետ ամուսնության մեջ չգտնվող այն անձի հետ, որի հետ դատապարտյալն ունի համատեղ երեխա: Դատապարտյալի խնդրան-

քով երկարատև տեսակցությունը կարող է փոխարինվել կարճատև տեսակցությամբ: Առանձնապես ծանր հանցագործության համար որոշակի ժամկետով ազատազրկման կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձանց տրամադրվում է տարվա ընթացքում առնվազն երեք կարճատև և մեկ երկարատև տեսակցություն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Նշված սահմանափակումը վերանում է, եթե դատապարտյալը փաստացի կրել է պատժի՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատում կիրառելու համար սահմանված ժամկետը: Կարճատև և երկարատև տեսակցություններ տրամադրելու կարգը սահմանվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

Դատապարտյալին թույլատրվում է ստանալ և իր հաշվին ուղարկել ծանրոցներ, հանձնուքներ կամ փաթեթներ, առանց սահմանափակման կատարել և ստանալ դրամական փոխանցումներ, ինչպես նաև իր հաշվին վարել նամակագրություն՝ առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման: Ծանրոցները, հանձնուքները, փաթեթներն ու նամակներն ուղարկելու և ընդունելու, ինչպես նաև դրանք դատապարտյալին հանձնելու կարգը սահմանվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

Կապի միջոցներից, այդ թվում՝ հեռախոսակապից, օգտվելու կարգը և քանակը սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

Նամակագրությունն իրականացվում է ուղղիչ հիմնարկի վարչակազմի միջոցով և, առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:

Դատապարտյալի բացակայությամբ ստացված նամակներն ուղարկվում են նոր վայր:

Ուղղիչ հիմնարկի վարչակազմն ստեղծում է համապատասխան պայմաններ՝ թերթերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելու համար:

Դատապարտյալի լուսանկարահանումը, ինչպես նաև տեսանկարահանումը և հարցազրույցն իրականացվում են նրա համաձայնությամբ՝ ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով սահմանված կարգով: Համաձայնությունը կարող է կրել գրավոր բնույթ:

ԲԱԺԻՆ 6
ՊԱՏԺԻ ԿՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒՂՂԻՉ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Ո՞ՐՆ Է ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԸ

Ուղղիչ հիմնարկում դատապարտյալին հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ չափանիշներին, ինչպես նաև ապահովի նրա առողջության պահպանումը: Ուղղիչ հիմնարկում մեկ դատապարտյալին հատկացվող բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից:

Դատապարտյալը պետք է ապահովված լինի իր հիգիենայի պահանջները բավարարելու համար մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններով:

Դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով և իրավական այլ ակտերով:

Դատապարտյալի անձնական հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ հիգիենայի պարագաների չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դատապարտյալն ապահովվում է իր սեռին, տարվա եղանակին, կլիմայական պայմաններին համապատասխանող միասնական նմուշի հանդերձանքով: Դատապարտյալն իր հագուստի վրա կրում է անվանական կրծքանշան:

Դատապարտյալի հանդերձանքը չպետք է որևէ ձևով ճնշող կամ նվաստացնող լինի: Դատապարտյալի հագուստի ձևը սահմանվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

Դատապարտյալին տրամադրվում են քնելու անհատական տեղ և անկողնային պարագաներ:

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՞ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Դատապարտյալը պատիժը կրելու ընթացքում ապահովվում է օրգանիզմի կանոնավոր կենսագործունեության համար անհրաժեշտ սննդով, որի օրական միջին չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սննդի որակը և սննդարարությունը սահմանված չափաբաժիններից որևէ կերպ պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է:

Հղի, կերակրող մայր, անչափահաս կամ հիվանդ դատապարտյալն ապահովվում է հավելյալ սննդով, որի չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Դատապարտյալը պետք է ապահովված լինի խմելու ջրով:

Դատապարտյալն իր միջոցներով կարող է ամսվա ընթացքում ձեռք բերել սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև երեսնապատիկի չափով սնունդ և առաջին անհրաժեշտության առարկաներ, ինչպես նաև գրենական պիտույքներ, գրքեր, թերթեր, ամսագրեր և այլ գրականություն:

Սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը, ինչպես նաև այն առարկաների ցանկը, որոնք արգելված է վաճառել դատապարտյալին, սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆ ՈՒՆԻ՞ ԶԲՈՍԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Դատապարտյալն ունի զբոսանքի իրավունք: Դատապարտյալի զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված բացօթյա տարածքում:

Դատապարտյալի զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից:

Ուղղիչ հիմնարկում պատիժ կրող, կալանավորվածներին պահելու վայրում տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու նպատակով թողնված դատապարտյալին, ելնելով կատարվող աշխատանքի բնույթից, կարող է թույլատրվել առանց պահախմբի կամ ուղեկցորդման տեղաշարժվել ուղղիչ հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս:

Դատապարտյալին առանց պահախմբի կամ ուղեկցորդման ուղղիչ հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս գտնվելու թույլտվություն տրամադրվում կամ այն վերացվում է ուղղիչ հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ:

Առանց պահախմբի կամ ուղեկցորդման ուղղիչ հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս գտնվելու թույլտվություն կարող է տրամադրվել միայն օրինապահ վարքագիծ դրսևորող դատապարտյալին՝ պատժի ժամկետի առնվազն մեկ քառորդը կրելուց հետո:

Առանց պահախմբի կամ ուղեկցորդման ուղղիչ հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս բերվել չի թույլատրվում առանձնապես վտանգավոր կամ վտանգավոր ռեցիդիվի դեպքում, շրջապատի համար վտանգ ներկայացնող վարակիչ և մակաբուծային հիվանդության դեպքում, այդ թվում՝ բացիլազատ պալարախտով հիվանդ, սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժման ամբողջ կուրսը չանցած կամ մարդու իմունային անբավարարության վարակով վարակակիր դատապարտյալին, ինչպես նաև ցմահ ազատազրկման դատապարտված անձին:

Առանց պահախմբի կամ ուղեկցորդման ուղղիչ հիմնարկի կամ կալանավորվածներին պահելու վայրի սահմաններից դուրս գտնվելու թույլտվություն ստացած դատապարտյալի վարքագծի կանոնները սահմանվում են ուղղիչ հիմնարկների կամ կալանավորվածներին պահելու վայրերի ներքին կանոնակարգով:

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ ԿԱՐՈ՞Ղ Է ՏՐԱՄԱԴՐՎԵԼ ՄԵԿՆՈՒՄ

Դատապարտյալին, բացառությամբ առանձնապես վտանգավոր ռեցիդիվի կամ առանձնապես ծանր հանցագործության համար դատապարտվելու դեպքի, կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում անձնական բացառիկ հանգամանքների (մերձավոր ազգականի մահ կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդություն, տարերային աղետ, որը զգալի նյութական վնաս է պատճառել դատապարտյալին կամ նրա ընտանիքին) դեպքում, ինչպես նաև սոցիալական վերականգնման նպատակով: Հաշմանդամ կամ ուղղիչ հիմնարկին կից մանկատանը երեխա ունեցող դատապարտյալին կարող է տրամադրվել կարճաժամկետ մեկնում՝ երեխային մանկատանը կամ ազգականի մոտ տեղավորելու նպատակով:

Կարճաժամկետ մեկնում տրամադրվում է մինչև յոթ օր տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երեք օրը: Սոցիալական վերականգնման նպատակով բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել մինչև մեկ ամիս տևողությամբ՝ չհաշված մեկնելու և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը, որը չի կարող գերազանցել երեք օրը: Կիսաբաց, կիսափակ կամ փակ ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրվում է տարվա ընթացքում երկու անգամից ոչ ավելի:

Մեղսունակությունը չբացառող հոգեկան հիվանդությամբ տառապող կամ առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամ դատապարտյալին, որը առողջության պատճառով անընդհատ խնամքի կարիք ունի,

ինչպես նաև անչափահաս դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրվում է միայն ազգականի կամ այլ անձի ուղեկցությամբ:

Բացիլազատ պալարախտով հիվանդ, ալկոհոլամոլությունից, թմրամոլությունից և սեռական ճանապարհով փոխանցվող և շրջապատի համար վտանգ ներկայացնող այլ վարակիչ ու մակաբուծային հիվանդություններից բուժման ամբողջ կուրսը չանցած, մարդու իմունային անբավարարության վարակով վարակակիր դատապարտյալին, ինչպես նաև ուղղիչ հիմնարկում հակահամաճարակային միջոցառում անցկացնելու ընթացքում կարճաժամկետ մեկնում կարող է տրամադրվել, եթե բժշկի, հոգեբույժի կամ համապատասխան մասնագետի եզրակացությամբ նա հասարակության կամ իր համար վտանգ չի ներկայացնում, կամ նման վտանգը վերացվում է նրան ուղեկցելու միջոցով, ինչը պետք է փոխհատուցի դատապարտյալը:

Բացասական բնութագրվող դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրվում է միայն ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի կամ ներկայացուցիչների ուղեկցությամբ:

Կարճաժամկետ մեկնում տրամադրվելու դեպքում դատապարտյալը կարող է կրել առօրյա կամ այլ հագուստ:

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ Ի՞ՆՉ ԿԱՐԳՈՎ Է ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ՄԵԿՆՈՒՄ

Կարճաժամկետ մեկնում տրամադրվում է ուղղիչ հիմնարկի պետի որոշմամբ՝ հաշվի առնելով դատապարտյալի անձը և նրա դրսևորած վարքագիծը, կատարած հանցագործության ծանրության աստիճանը, ինչպես նաև պատիժը կրելու ժամկետը: Դիմումը կարող է մերժվել ուղղիչ հիմնարկի պետի պատճառաբանված որոշմամբ:

Անձնական բացառիկ հանգամանքների կապակցությամբ կարճաժամկետ մեկնում տրամադրելու դիմումը քննարկվում է մեկ օրվա ընթացքում, իսկ սոցիալական վերականգնման նպատակով՝ եռօրյա ժամկետում:

Կարճաժամկետ մեկնման ժամանակը հաշվվում է պատիժը կրելու ժամկետի մեջ:

Կարճաժամկետ մեկնման հետ կապված ծախսերը հոգում է դատապարտյալը, իսկ եթե նա անվճարունակ է, ապա մեկնումների հետ կապված ծախսերը կարող են կատարվել պետության հաշվին:

Սահմանված ժամկետում ուղղիչ հիմնարկ վերադառնալուց խուսափող դատապարտյալը ենթակա է քրեական պատասխանատվության:

Դատապարտյալին կարճաժամկետ մեկնումներ տրամադրելու կարգը սահմանվում է ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

ԲԱԺԻՆ 7
ՈՐՈՇԱԿԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿԱՄ ՑՄԱՀ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ԵՎ ՏՈՒՅԺԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ԻՆՉՊԻՍԻ՞ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՆ

Օրինապահ վարքագծի, աշխատանքի և ուսման նկատմամբ բարեխիղճ վերաբերմունքի, դատապարտյալների ինքնագործ միավորումների աշխատանքներին և միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու, ինչպես նաև դրական վարքագծի դրսևորման համար ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները.

1) լրացուցիչ կարճատև կամ երկարատև տեսակցության տրամադրում, բայց տարվա ընթացքում երկու կարճատև կամ երկու երկարատև տեսակցությունից ոչ ավելի.

2) փակ տեսակի ուղղիչ հիմնարկում պահվող դատապարտյալի զբոսանքի տևողության ավելացում մինչև երկու ժամ՝ մեկ ամիս ժամկետով.

3) նախկինում նշանակված տույժի վաղաժամկետ հանում:

Դատապարտյալը, որպես խրախուսանքի միջոց, կարող է ներկայացվել տեղափոխման մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ՝ պատժի կրումը շարունակելու նպատակով:

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔԻ ՄԻՋՈՑՆ Ի՞ՆՉ ԿԱՐԳՈՎ Է ԿԻՐԱՌՎՈՒՄ

Խրախուսանքի բոլոր միջոցները կիրառվում են գրավոր՝ ուղղիչ հիմնարկի պետի կամ նրա պարտականությունները կատարող անձի որոշմամբ:

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՏՈՒՅԺԻ Ի՞ՆՉ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԱՆ

Պատիժը կրելու սահմանված կարգը խախտելու համար ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ սահմանված կարգով կարող են կիրառվել տույժի հետևյալ միջոցները՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) պատժախուց տեղափոխելը մինչև տասնհինգ օր, իսկ անչափահաս դատապարտյալին՝ մինչև տասն օր ժամկետով:

Ազատազրկման դատապարտված անձի կողմից պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտումներ են համարվում զանցանքը, ուղղիչ հիմնարկի վարչակազմի ներկայացուցիչներին ուղղված սպառնալիքը, անհնազանդությունը կամ անհարգալից վերաբերմունքը կամ այլ խմբային անհնազանդություններ կազմակերպելը կամ դրանց ակտիվորեն մասնակցելը, նշված խախտումները կատարելու նպատակով խմբեր կազմակերպելը կամ դրանց մասնակցելը, ինչպես նաև մեկ տարվա ընթացքում պատժի կրման սահմանված կարգի երկու կամ ավելի խախտումները, եթե դրանցից յուրաքանչյուրի համար դատապարտյալը ենթարկվել է տույժի:

Պատիժը կրելու սահմանված կարգի չարամիտ խախտման դեպքում դատապարտյալը կարող է ներկայացվել տեղափոխման մեկուսացվածության առավել բարձր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ՝ պատժի կրումը շարունակելու նպատակով:

ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒՅԺԻ ՄԻՋՈՑՆԵՐՆ Ի՞ՆՉ ԿԱՐԳՈՎ ԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ

Դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցները կիրառելիս հաշվի են առնվում խախտումը կատարելու հանգամանքները, դատապարտյալի անձը և նրա վարքագիծը՝ նախքան խախտումը կատարելը: Կիրառվող տույժը պետք է համապատասխանի կատարած խախտման ծանրությանը և բնույթին: Տույժը կիրառվում է բացառապես խախտում կատարած անձի նկատմամբ այն հայտնաբերելուց հետո ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում և կատարվում է անհապաղ: Մեկ խախտման համար արգելվում է նշանակել մեկից ավելի տույժ:

Տույժի բոլոր միջոցները կիրառվում են գրավոր՝ ուղղիչ հիմնարկի պետի կամ նրա պարտականությունները կատարող անձի որոշմամբ:

Դատապարտյալը տեղափոխվում է պատժախուց՝ պարտադիր նշելով այդ վայրում պահելու ժամկետը:

Ուղղիչ հիմնարկի մանկատանը երեխա ունեցող, կերակրող մայր, հղի, նախածննդյան կամ հետծննդյան ժամանակահատվածում գտնվող դատապարտյալը պատժախուց չի տեղափոխվում:

Պատժախցից բուժական ուղղիչ հիմնարկ փոխադրելու դեպքում բուժական ուղղիչ հիմնարկում դատապարտյալին պահելու ժամանակը հաշվվում է տույժը կրելու ժամանակի մեջ:

Դատապարտյալը համարվում է տույժ չունեցող, եթե տույժը կրելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, չի ենթարկվել նոր տույժի, կամ նախկինում նշանակված տույժը հանվել է:

Դատապարտյալի նկատմամբ տույժի միջոցի կիրառումը կարող է բողոքարկվել պատիժները կատարելու նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին:

Պատժախցում գտնվելու ժամանակամիջոցում դատապարտյալին արգելվում են տեսակցությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, հեռախոսակապից օգտվելը, դրամական փոխանցումներ, հանձնուքներ ու ծանրոցներ ստանալը և ուղարկելը, նամակագրություն վարելը, գրականությունից և զանգվածային լրատվությունից օգտվելը, աշխատելը, քաղաքացիաիրավական գործարքներին մասնակցելը:

Որպես տույժ՝ պատժախուց տեղափոխված դատապարտյալն իրավունք ունի՝

1) սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու համար իր անձնական հաշվից ամսական ծախսելու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով գումար.

2) օգտվելու մեկ ժամ տևողությամբ ամենօրյա զբոսանքից:

Պատժախցում պահվող դատապարտյալի նյութակենցաղային ապահովման պայմանները սահմանվում են ուղղիչ հիմնարկների ներքին կանոնակարգով:

Պատժախցում պահվող դատապարտյալը գտնվում է բժշկական հսկողության ներքո: Պատժախցում պահվող դատապարտյալի նկատմամբ կիրառվող տույժի միջոցը կարող է վաղաժամկետ դադարեցվել բժշկի եզրակացության հիման վրա:

ԲԱԺԻՆ 8
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

ԻՆՉՊԻՍԻ՞ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿ ՈՒՆԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾՆԵՐԸ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Ձերբակալված կամ կալանավորված անձն ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար սահմանված իրավունքները, ազատությունները և պարտականությունները՝ օրենքով նախատեսված սահմանափակումներով:

Արգելանքի կամ կալանքի տակ գտնվելու ընթացքում ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքները, անձնական անվտանգությունը և նրանց նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառման օրինականությունն ապահովվում են օրենքով:

Ձերբակալված և կալանավորված անձանց իրավունքների և ազատությունների իրականացման երաշխիքները սահմանվում են օրենքով և ներքին կանոնակարգով: Ձերբակալված և կալանավորված անձինք, իրենց իրավունքները և ազատություններն իրականացնելիս, պարտավոր են պահպանել ձերբակալված անձանց արգելանքի կամ կալանավորված անձանց կալանքի տակ պահելու կարգը և պայմանները, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Հայաստանի Հանրապետության տարածքում ձերբակալված կամ կալանավորված օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար սահմանված իրավունքները, ազատությունները և պարտականությունները, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և օրենքով այլ բան նախատեսված չէ:

Ի՞ՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ՈՒՆԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Ձերբակալված կամ կալանավորված անձն իրավունք ունի՝

1) մայրենի կամ իրեն հասկանալի այլ լեզվով տեղեկություններ ստանալ իր իրավունքների, ազատությունների և պարտականությունների վերաբերյալ.

2) իր նկատմամբ բարեկիրթ վերաբերմունքի.

3) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով, ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմել ձերբակալվածներին

պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին, նրանց վերադաս մարմիններին, դատարանին, դատախազությանը, մարդու իրավունքների պաշտպանին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին և կուսակցություններին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին կամ կազմակերպություններին.

4) առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին.

5) սոցիալական ապահովության.

6) ստանալ իրավաբանական օգնություն.

7) անձնական անվտանգության ապահովման.

8) մտքի, խղճի և դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների ազատության.

9) հաղորդակցվել արտաքին աշխարհի հետ.

10) հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութժամյա գիշերային քնի, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել դատավարական կամ այլ գործողությունների, բացառությամբ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի.

11) կոչվել իր անվամբ կամ ազգանվամբ.

12) անձնական ընդունելության խնդրանքով դիմել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետին, դրանց գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին.

13) իր մոտ ունենալ քրեական գործին կամ իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն առնչվող փաստաթղթեր և գրառումներ, բացառությամբ այն փաստաթղթերի և գրառումների, որոնք պարունակում են պետական կամ ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք.

14) մասնակցել քաղաքացիաիրավական գործարքների:

Կալանավորված անձը նաև իրավունք ունի՝

1) ստանալ կրթություն, զբաղվել ստեղծագործ աշխատանքով.

2) աշխատել.

3) կալանավորվածներին պահելու վայրի խանութից կամ կրպակից կամ վարչակազմի միջոցով ձեռք բերել սնունդ և առաջին անհրաժեշտության առարկաներ.

4) ստանալ և ուղարկել դրամական փոխանցումներ:

Ձերբակալված կամ կալանավորված անձին վերապահվում են նաև օրենքով սահմանված այլ իրավունքներ:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձինք իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու Հայաստանի Հանրապետությունում իրենց պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ: Այն ձերբակալված կամ կալանավորված անձինք, ովքեր Հայաստանի Հանրապետությունում դիվանագիտական ներկայացուցչություն կամ հյուպատոսական հաստատություն չունեցող երկրի քաղաքացի են, ինչպես նաև փախստականները կամ քաղաքացիություն չունեցող ձերբակալված կամ կալանավորված անձինք իրավունք ունեն կապեր հաստատելու և պահպանելու այն պետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հաստատության հետ, որն ստանձնել է այդ անձանց շահերի պաշտպանությունը կամ նրանց պաշտպանությամբ զբաղվող ցանկացած ազգային կամ միջազգային մարմնի հետ:

Ի՞ՆՉ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ

Ձերբակալված կամ կալանավորված անձը պարտավոր է՝

1) դրսևորել օրինապահ վարքագիծ, պահպանել արգելանքի կամ կալանքի տակ գտնվելու՝ օրենքով, ներքին կանոնակարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգն ու պայմանները.

2) կատարել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի օրինական պահանջները.

3) բարեկիրթ վերաբերմունք դրսևորել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների և այլ անձանց նկատմամբ.

4) չխոչընդոտել ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների, ինչպես նաև այդ վայրերում կարգուկանոնին հետևող այլ անձանց կողմից ծառայողական կամ հասարակական պարտականությունները կատարելուն.

5) չկատարել սեփական կամ այլ անձանց առողջությանը կամ կյանքին վտանգ սպառնացող գործողություններ:

Ձերբակալված կամ կալանավորված անձն ունի օրենքով սահմանված այլ պարտականություններ:

ԲԱԺԻՆ 9
ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵ՞Ն ՏԵՍԱԿՑԵԼՈՒ ՊԱՇՏՊԱՆԻ, ՄԵՐՁԱՎՈՐ ԱԶԳԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ

Ձերբակալված և կալանավորված անձանց ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը, ձերբակալման արձանագրությունը կամ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին որոշումը հայտարարելու պահից նրանց տրամադրվում են առանձին, անարգել տեսակցություններ պաշտպանի հետ՝ առանց քանակի և տևողության սահմանափակման, իսկ օրինական ներկայացուցչի հետ՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ: Տեսակցությունները տրամադրվում են գործին որպես պաշտպան մասնակցող փաստաբանի հետ՝ անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև Փաստաբանների միության կողմից տրված՝ իր փաստաբան լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու դեպքում:

Ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը պաշտպանի հետ տրամադրվում է այնպիսի պայմաններում, որոնցում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողները նրանց կարողանան տեսնել, բայց չկարողանան լսել:

Ձերբակալված կամ կալանավորված անձը, իսկ ձերբակալված կամ կալանավորված անձի համաձայնության դեպքում նաև նրա պաշտպանն իրավունք ունեն պահանջելու անցկացնել դատաբժշկական հետազոտություն:

Ձերբակալված և կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, իսկ կալանավորված անձանց՝ նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, տրամադրվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետի որոշմամբ: Ձերբակալված անձանց չի տրամադրվում տեսակցություն զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել

քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ տեսակցությունն անցկացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի ծառայողների հսկողությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այդ անձանց կողմից ձերբակալված կամ կալանավորված անձանց արգելված առարկաներ, քրեական գործի քննությանը խոչընդոտող կամ նոր հանցագործության կատարմանը նպաստող նյութեր, տեղեկություններ փոխանցելը կամ փոխանցելու փորձը կարող է հանգեցնել տեսակցության վաղաժամկետ դադարեցման:

Ձերբակալված անձին մերձավոր ազգականների հետ տրամադրվում է առնվազն մեկ տեսակցություն՝ մինչև մեկ ժամ տևողությամբ:

Կալանավորված անձին մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների կամ այլ անձանց հետ ամսվա ընթացքում տրամադրվում է առնվազն երկու տեսակցություն՝ մինչև երեք ժամ տևողությամբ:

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՈՒՆԵ՞Ն ԶԲՈՍԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Ձերբակալված և կալանավորված անձինք ունեն զբոսանքի իրավունք: Ձերբակալված և կալանավորված անձանց զբոսանքը կազմակերպվում է ցերեկային ժամերին՝ դրա համար նախատեսված տարածքում:

Ձերբակալված և կալանավորված անձանց զբոսանքի տևողությունը չի կարող պակաս լինել օրական մեկ ժամից:

ԻՆՉՊԵ՞Ս է ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԿԱՊՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՈՒ ԱՐՏԱՔԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՀԵՏ

Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերը ձերբակալված և կալանավորված անձանց կապն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ ապահովելու համար ստեղծում են համապատասխան պայմաններ: Այդ նպատակով ստեղծվում են տեսակցությունների սենյակներ, կապի հնարավոր

միջոցների հանգույցներ, լրատվական միջոցներից օգտվելու հնարավոր պայմաններ:

Քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց հեռախոսային խոսակցությունները կարող են արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Կալանավորված անձանց թույլատրվում է իրենց հաշվին նամակագրություն վարել՝ առանց նամակների, հեռագրերի թվի սահմանափակման:

Նամակագրությունն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի միջոցով և, առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:

Նամակագրության գրաքննություն կարող է իրականացվել միայն դատարանի որոշմամբ: Գրականությունը կատարում է քրեական վարույթն իրականացնող մարմինը:

Կալանավորված անձի անունով՝ տեղափոխման պատճառով նրա բացակայությամբ ստացված նամակներն ուղարկվում են նրա գտնվելու նոր վայր:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն ստեղծում է համապատասխան պայմաններ՝ թերթերից, ամսագրերից և այլ գրականությունից օգտվելու համար: Կալանավորվածներին պահելու վայրի խցերը ապահովվում են ռադիոընդունիչներով, այնտեղ կարող են տեղադրվել հեռուստացույցներ:

Կալանավորված անձանց, բացառությամբ առանձնապես ծանր հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձանց, մերձավոր ազգականի մահվան կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդության, կալանավորված անձին կամ նրա ընտանիքին զգալի նյութական վնաս պատճառած տարերային աղետի դեպքում կարող են տրամադրվել կարճաժամկետ մեկնումներ:

Կալանավորված անչափահաս անձին կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են միայն ազգականների կամ այլ անձանց ուղեկցությամբ:

Կարճաժամկետ մեկնումներ կարող են տրամադրվել մինչև յոթ օր տևողությամբ՝ չհաշված մեկնման և վերադարձի համար անհրաժեշտ ժամանակը:

Կարճաժամկետ մեկնումներ տրամադրվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ:

Կարճաժամկետ մեկնում տրամադրելու դիմումը քննարկվում է մեկ օրվա ընթացքում: Կարճաժամկետ մեկնման մեջ գտնվելու ժամանակը հաշվվում է կալանքի տակ պահելու ժամկետի մեջ:

Կարճաժամկետ մեկնման հետ կապված ծախսերը հոգում է կալանավորված անձը:

Ի՞ՆՉ ԿԱՐԳՈՎ ԵՆ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐԸ

Ձերբակալված կամ կալանավորված անձն իր առաջարկությունները, դիմումները և բողոքները կարող է տալ ամեն օր, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր:

Ձերբակալված կամ կալանավորված անձի առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկող մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են քննարկել դրանք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում, իսկ ընդունված որոշումների մասին տեղյակ պահել նրանց:

Ձերբակալվածներին պահելու վայրերի կամ կալանավորվածներին պահելու վայրերի վարչակազմի որոշումների ու գործողությունների առթիվ ներկայացված առաջարկությունները, դիմումները և բողոքները չեն կասեցնում այդ որոշումների և գործողությունների կատարումը:

Դատախազին, դատավորին, մարդու իրավունքների պաշտպանին, պաշտպանին, ձերբակալվածներին պահելու վայրերի և կալանավորվածներին պահելու վայրերի նկատմամբ հսկողություն իրականացնող մարմիններին հասցեագրված առաջարկությունները, դիմումները և բողոքները կնքված փաթեթով մեկ օրվա ընթացքում ուղարկվում են հասցեատիրոջը:

Արգելվում է որևէ ձևով հետապնդումը ձերբակալված կամ կալանավորված անձանց նկատմամբ՝ իրենց իրավունքների և օրինական շահերի խախտումների վերաբերյալ առաջարկություններ, դիմումներ, բողոքներ ներկայացնելու դեպքում:

Նման հետապնդում իրականացնող անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵ՞Ն ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՍՆՈՒՆԴ, ՍՆՆԴԱՄԹԵՐՔ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՌԱՐԿԱՆԵՐ

Ձերբակալված կամ կալանավորված անձն ապահովվում է առողջության և ուժերի պահպանման համար բավարար անվճար սննդով,

որի նվազագույն չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սննդի որակը և սննդարարությունը սահմանված նվազագույն չափաբաժիններից պակասեցնելը, այդ թվում՝ որպես տույժի միջոց, արգելվում է:

Ձերբակալված կամ կալանավորված հղի կանայք, կերակրող մայրերը, անչափահասները, ինչպես նաև ձերբակալված կամ կալանավորված հիվանդ անձինք ապահովվում են անվճար հատուկ սննդով, որի տեսականին և նվազագույն չափաբաժինները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է ապահովված լինի խմելու ջրով:

Ձերբակալված կամ կալանավորված անձն իր միջոցներով կարող է ձեռք բերել սնունդ և անհրաժեշտ ու չարգելված առարկաներ: Սննդամթերք և առաջին անհրաժեշտության առարկաներ ձեռք բերելու կարգը սահմանվում է ներքին կանոնակարգով:

Ձերբակալված կամ կալանավորված անձի կողմից սննդի ընդունումից հրաժարվելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի պետը կամ նրան փոխարինող անձը պարտավոր է պարզել դրա պատճառները և այդ մասին հայտնել քրեական վարույթն իրականացնող, ինչպես նաև հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններին:

Սննդի ընդունումից հրաժարվելու փաստը չի կասեցնում ձերբակալված կամ կալանավորված անձին այլ վայրեր տեղափոխելը և դատավարական գործողությունների մասնակցելը: Անհրաժեշտության դեպքում փոխադրումը կարող է իրականացվել բուժաշխատողի ուղեկցությամբ:

Ձերբակալված և կալանավորված անձանց համար ստեղծվում են սանիտարահիգիենիկ և հրդեհային անվտանգության պահանջներին համապատասխանող նյութակենցաղային պայմաններ:

Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածքը պետք է համապատասխանի ընդհանուր բնակելի տարածքների համար սահմանված շինարարական և սանիտարահիգիենիկ նորմերին: Ձերբակալված և կալանավորված անձանց հատկացված բնակելի տարածության չափը չի կարող պակաս լինել չորս քառակուսի մետրից՝ յուրաքանչյուր անձի համար:

Ձերբակալված և կալանավորված անձանց տրամադրում են անհատական քնելու տեղ և անկողնային պարագաներ:

Ձերբակալված և կալանավորված անձինք կրում են իրենց հագուստը: Անհրաժեշտության դեպքում նրանք ապահովվում են կլիմայա-

կան պայմաններին, սեռին համապատասխան միասնական նմուշի հագուստով:

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՈՒՆԵ՞Ն ԲՈՒԺՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրությանը համապատասխան: Ձերբակալված և կալանավորված անձանց բուժսանիտարական և բուժկանխարգելիչ օգնությունը կազմակերպելու, առողջապահական մարմինների բուժական հիմնարկներից օգտվելու և այդ նպատակով դրանց բժշկական անձնակազմին ներգրավելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ձերբակալվածներին պահելու վայրի և կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմերն ապահովում են ձերբակալված կամ կալանավորված անձանց առողջության պահպանմանն ուղղված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային պահանջների կատարումը:

Կալանավորվածներին պահելու վայրում պետք է աշխատի ընդհանուր մասնագիտացում ունեցող առնվազն մեկ բժիշկ:

Մասնագիտացված բուժօգնության կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձը փոխադրվում է հատուկ մասնագիտացված կամ քաղաքացիական բուժհաստատություն:

Ձերբակալված և կալանավորված անձանց բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնություն ցույց տալու, նրանց բուժհաստատություններում պահելու, ինչպես նաև բուժպասարկման գործում այդ հաստատությունների աշխատողներին ներգրավելու կարգը սահմանում է լիազորված մարմինը:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ մարմնական վնասվածք հայտնաբերելու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի բուժաշխատողը կամ հրավիրված բուժաշխատողն անհապաղ կատարում է բուժզննություն, որին կարող է մասնակցել ձերբակալված կամ կալանավորված անձի ընտրած բժիշկը: Բժշկական զննությունը իրականացվում է ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմի ծառայողի լսողության, իսկ մինչև բժշկի կողմից հակառակը չպահանջելը՝ նաև տեսողության սահմաններից դուրս: Բուժզննության արդյունքները սահմանված կարգով գրանցվում են անձնական գործում, և այդ մասին իրազեկում են հիվանդին, ինչպես նաև քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմն այդ մասին անհապաղ տեղեկացնում է ձերբակալված կամ կալանավորված անձի մերձավոր ազգականներին, քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին:

Օտարերկրյա քաղաքացիություն ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձի ծանր հիվանդության կամ մահվան դեպքում համապատասխան հիմնարկի վարչակազմն այդ մասին անհապաղ հայտնում է վերադաս մարմնին, որն էլ տեղեկացնում է շահագրգիռ գերատեսչություններին, այդ թվում՝ համապատասխան պետության դիվանագիտական ներկայացուցչությանը կամ հյուպատոսական հիմնարկին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գործողությունները կատարելուց հետո աճյունը հանձնվում է այն պահանջող անձին՝ նախապատվությունը տալով մերձավոր ազգականներին: Եթե աճյունը երեք օրվա ընթացքում չի պահանջվել, հուղարկավորությունը կատարվում է պետության հաշվին:

Ձերբակալված կամ կալանավորված անձի մոտ ծանր հիվանդություն հայտնաբերելու դեպքում, որը կարող է հանգեցնել նրա հոգեկան խանգարման կամ մահվան, համապատասխան հիմնարկի պետը բժշկական եզրակացության հիման վրա միջնորդում է քրեական վարույթն իրականացնող մարմնին և հսկողություն իրականացնող դատախազին՝ հարկադրանքի միջոցը վերացնելու կամ փոխելու վերաբերյալ:

Ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է հնարավորություն ունենա մարդկային արժանապատվությունը չնվաստացնող պայմաններում բավարարել իր սանիտարահիգիենիկ պահանջները: Նրա անձնական հիգիենայի պահպանման պայմանները և կանոնները սահմանվում են ներքին կանոնակարգով:

Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին ենթարկել որևէ բժշկական կամ գիտական փորձի՝ անկախ վերջինիս համաձայնության:

ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՈՒՆԵ՞Ն ՇԱՆՐՈՑՆԵՐ, ՀԱՆՁՆՈՒՔՆԵՐ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Ձերբակալված անձն արգելանքի տակ գտնվելու ընթացքում կարող է ստանալ մինչև քսան կիլոգրամ հանձնուք, իսկ կալանավորված անձը՝ ամսվա ընթացքում մինչև յոթանասուն կիլոգրամ: Նրանք սահ-

մանված չափի հանձնուքները կարող են ստանալ միանվագ կամ մասմաս:

Կալանավորված անձանց անունով ստացված դրամը փոխանցվում է նրանց անձնական հաշվին: Նրանք իրենց միջոցներից կարող են դրամական փոխանցումներ կատարել ազգականների և այլ անձանց դրամական հաշվին:

Ձերբակալված անձանց անունով դրամական փոխանցումներ կատարելն արգելվում է:

Բժշկի եզրակացությամբ դեղորայքի կարիք ունեցող ձերբակալված կամ կալանավորված անձանց անունով ստացվող դեղորայքի քանակը չի սահմանափակվում:

Արգելվում է ձերբակալված կամ կալանավորված անձին փոխանցել այնպիսի նյութեր, առարկաներ, որոնք մարդկանց առողջությանը վտանգ են սպառնում կամ կարող են խոչընդոտել արգելանքի և կալանքի տակ պահելու խնդիրների իրականացմանը:

Ձերբակալված կամ կալանավորված անձին արգելված առարկաներ, նյութեր փոխանցելն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՈՒՆԵ՞Ն ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Կալանավորված անձը, հնարավորության դեպքում, կամավոր ապահովվում է աշխատանքով, կամ նրան իրավունք է վերապահվում ինքնուրույն զբաղվել աշխատանքով, որի կարգն ու պայմանները սահմանվում են ներքին կանոնակարգով:

Կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը, կալանավորված անձին աշխատանքի ներգրավելիս, պարտավոր է հաշվի առնել նրա սեռը, տարիքը, աշխատունակությունը, առողջական վիճակը և հնարավորինս՝ մասնագիտությունը: Կալանավորված անձն աշխատանքի է ներգրավվում խցային պայմաններում:

Կալանավորված անձի աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

Կալանավորված անձի կատարած աշխատանքից ստացված եկամուտը, օրենքով նախատեսված պահումները կատարելուց հետո, փոխանցվում է նրա անձնական հաշվին:

Արգելվում է կալանավորված անձանց ներգրավել չվարձատրվող աշխատանքների, բացառությամբ սանիտարահիգիենիկ աշխատանքների:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ ԱՐԳԵԼԱՆՔԻ ԿԱՄ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ ՊԱՀԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ձերբակալված կամ կալանավորված կանանց և անչափահասների համար ձերբակալվածներին պահելու վայրերում և կալանավորվածներին պահելու վայրերում ստեղծվում են բարելավված նյութակենցաղային պայմաններ:

Ձերբակալված կամ կալանավորված կանայք և անչափահասներն օգտվում են ամենօրյա՝ երկու ժամից ոչ պակաս տևողությամբ զբոսանքի իրավունքից, որի ընթացքում հնարավորություն է տրվում զբաղվել մարմնամարզությամբ:

Կալանավորված կանայք իրավունք ունեն կալանքի տակ գտնվելու ընթացքում իրենց մոտ պահել մինչև երեք տարեկան իրենց երեխաներին:

Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող ձերբակալված կամ կալանավորված կանանց համար ստեղծվում են համապատասխան նյութակենցաղային պայմաններ, կազմակերպվում է մասնագիտացված բուժսպասարկում:

Հղի կամ իրենց մոտ երեխա ունեցող կանանց, որպես տույժի միջոց, պատժախուց տեղափոխելն արգելվում է:

Հիվանդության, ծնողական պարտականությունները բարեխղճորեն չկատարելու, երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, ինչպես նաև ներքին կանոնակարգի խախտումներ թույլ տալու դեպքում ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմը կարող է միջնորդություն ներկայացնել դատարան՝ կալանավորված անձին ծնողական իրավունքներից զրկելու և երեխային այլ անձանց խնամքին հանձնելու մասին:

ԿՈՆՎԵՆՑԻԱ
ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները և սույն Կոնվենցիան ստորագրող մյուս պետությունները, հաշվի առնելով, որ Եվրոպայի խորհրդի նպատակն է հասնել անդամների միջև ավելի սերտ միասնության, ձգտելով քրեաիրավական բնագավառում միջազգային համագործակցության հետագա զարգացմանը, հաշվի առնելով, որ նման համագործակցությունը կնպաստի արդարադատության իրականացմանը և դատապարտյալների սոցիալական վերականգնմանը, հաշվի առնելով, որ այս նպատակները պահանջում են, որ հանցագործություն կատարելու համար ազատազրկված օտարերկրյա քաղաքացիները հնարավորություն ունենան պատիժը կրելու իրենց ծագման հասարակական միջավայրում, հաշվի առնելով, որ այդ նպատակին լավագույնս հասնելու համար օտարերկրյա քաղաքացիները պետք է փոխանցվեն իրենց պետությանը, պայմանավորվեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1
Սահմանումներ

Սույն Կոնվենցիայի նպատակների համար.

ա) «դատապարտում» նշանակում է հանցագործության համար դատարանի կողմից նշանակված սահմանափակ կամ անսահմանափակ ժամկետով ազատազրկման ձևով ցանկացած պատիժ կամ միջոց,

բ) «դատավճիռ» նշանակում է պատժի նշանակման մասին դատարանի որոշում,

գ) «Դատապարտող պետություն» նշանակում է այն պետությունը, որտեղ պատիժ է նշանակվել այն անձի նկատմամբ, որը կարող է փոխանցվել կամ փոխանցվել է,

դ) «Կատարող պետություն» նշանակում է այն պետությունը, որին կարող է փոխանցվել կամ փոխանցվել է դատապարտյալը պատիժը կրելու համար:

ՀՈԴՎԱԾ 2
Ընդհանուր սկզբունքներ

1. Կողմերը պարտավորվում են, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, դատապարտյալներին փոխանցելու նպատակով սերտորեն համագործակցել:

2. Մի Կողմի տարածքում դատապարտված անձը, սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, կարող է փոխանցվել մեկ այլ

Կողմի պատիժը կրելու համար: Այդ կապակցությամբ նա կարող է սույն Կոնվենցիայի դրույթներին համապատասխան փոխանցումն իրականացնելու մասին իր ցանկությունը հայտնել Դատապարտող կամ Կատարող պետությանը:

3. Փոխանցման վերաբերյալ խնդրանքը կարող է ներկայացվել ինչպես Դատապարտող, այնպես էլ Կատարող պետության կողմից:

ՀՈԴՎԱԾ 3
Փոխանցման պայմանները

1. Սույն Կոնվենցիայի համաձայն՝ դատապարտյալը կարող է փոխանցվել միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

ա) տվյալ անձը Կատարող պետության քաղաքացի է.

բ) դատավճիռը վերջնական է.

գ) փոխանցման մասին խնդրանքն ստանալու պահին պատիժը կրելու համար դատապարտյալին մնացել է առնվազն վեց ամիս ժամկետ, կամ պատժի ժամկետն անսահմանափակ է.

դ) փոխանցումը համաձայնեցված է դատապարտյալի հետ, կամ երկու Կողմերից որևէ մեկը, ելնելով դատապարտյալի տարիքից, ֆիզիկական կամ հոգեկան վիճակից, անհրաժեշտ է համարում փոխանցումը համաձայնեցնել նրա օրինական ներկայացուցչի հետ,

ե) գործողությունը կամ անգործությունը, որի համար դատավճիռ է կայացվել, հանցագործություն է համարվում ըստ Կատարող պետության օրենսդրության կամ այդպիսին կհամարվեր, եթե հանցագործությունը կատարվեր այդ պետության տարածքում.

զ) Դատապարտող և Կատարող պետությունների միջև համաձայնություն է ձեռք բերվել փոխանցման վերաբերյալ:

2. Բացառիկ դեպքերում Կողմերը կարող են համաձայնության գալ փոխանցման վերաբերյալ, եթե նույնիսկ դատապարտյալի կողմից պատիժը կրելու ժամկետն ավելի պակաս է, քան դա նախատեսված է 1-ին կետի գ) ենթակետով:

3. Յուրաքանչյուր Պետություն կարող է ստորագրման ժամանակ կամ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությունում նշել, որ այլ Կողմերի հետ իր հարաբերություններում ինքը մտադիր է չկիրառել 9-րդ հոդվածի 1-ին կետի ա) և բ) ենթակետերի ընթացակարգերից որևէ մեկը:

4. Յուրաքանչյուր պետություն ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությունում սահմանել, թե որքանով է «քաղաքացի» տերմինն առնչվում սույն Կոնվենցիայի նպատակներին:

ՀՈԴՎԱԾ 4
Տեղեկություն տրամադրելու պարտականությունը

1. Յուրաքանչյուր դատապարտյալ, որի նկատմամբ կարող է կիրառվել սույն Կոնվենցիան, Դատապարտող պետության կողմից պետք է տեղեկացվի սույն Կոնվենցիայի առկայության մասին:

2. Եթե դատապարտյալը Դատապարտող պետությանը ցանկություն է հայտնել, սույն Կոնվենցիայի համաձայն, փոխանցվելու վերաբերյալ, ապա նշված պետությունն այդ մասին Կատարող պետությանը պետք է որքան հնարավոր է արագ տեղեկացնի դատավճիռն ուժի մեջ մտնելուց հետո:

3. Տեղեկությունը պետք է պարունակի՝

ա) դատապարտյալի անունը, ազգանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

բ) նրա հասցեն, եթե այն առկա է Կատարող պետությունում.

գ) դատավճռի հիմքում ընկած փաստաթղթերի ցանկը.

դ) դատավճռի բովանդակությունը, տևողությունը (ժամկետը) և կատարման տարին, ամիսը և ամսաթիվը:

4. Եթե դատապարտյալը ցանկություն է հայտնել Կատարող պետությանը, համաձայն խնդրանքի, ապա Դատապարտող պետությունը պետք է Կատարող պետությանը տրամադրի 3-րդ կետում նշված տեղեկությունը:

5. Դատապարտյալը պետք է գրավոր տեղեկացվի Դատապարտող կամ Կատարող պետությունների կողմից նախորդ կետերով կատարված ցանկացած գործողության, ինչպես նաև փոխանցման խնդրանքի վերաբերյալ որևէ պետության կողմից ընդունված ցանկացած որոշման մասին:

ՀՈԴՎԱԾ 5
Դիմումներ և պատասխաններ

1. Փոխանցման մասին դիմումները և պատասխանները ձևակերպվում են գրավոր:

2. Դիմումները պետք է ուղարկվեն հայցվող պետության արդարադատության նախարարությանը հայցող պետության արդարադատության նախարարության կողմից: Պատասխանները պետք է փոխանցվեն միևնույն ուղիներով:

3. Յուրաքանչյուր Կողմ կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ուղղված հայտարարությունում նշել, որ ինքն օգտագործելու է հաղորդակցության այլ ուղիներ:

4. Հայցվող պետությունը փոխանցելու կամ չփոխանցելու վերաբերյալ իր որոշման մասին անհապաղ տեղեկացնում է հայցող Պետությանը:

ՀՈԴՎԱԾ 6
Հիմնավորող փաստաթղթեր

1. Դատապարտող պետության խնդրանքով Կատարող պետությունը նրան տրամադրում է հետևյալ փաստաթղթերը՝

ա) որևէ փաստաթուղթ կամ հաղորդագրություն, որը մատնանշում է, որ դատապարտյալը տվյալ Պետության քաղաքացի է.

բ) Կատարող պետության համապատասխան օրենքի պատճենը, որով նախատեսված է, որ այն գործողությունները կամ անգործությունը, որոնց հիման վրա Դատապարտող պետությունը դատավճիռ է կայացրել, Կատարող պետությունում համարվում են հանցագործություն կամ կհամարվեին այդպիսին, եթե կատարվեին վերջինիս տարածքում.

գ) փաստաթուղթ, որը պարունակում է 9-րդ հոդվածի 2-րդ կետում նշված տեղեկությունը:

2. Եթե փոխանցման վերաբերյալ խնդրանք է ստացվել, ապա Դատապարտող պետությունը, եթե պետություններից որևէ մեկը չի հայտնել փոխանցմանը համաձայն չլինելու մասին, պետք է Կատարող պետությանը տրամադրի հետևյալ փաստաթղթերը՝

ա) դատավճռի հաստատված պատճենը և օրենքը, որի վրա այն հիմնվել է.

բ) փաստաթուղթ, որտեղ նշվում է, թե դատավճռի որ մասն է կատարվել, ներառյալ՝ մինչև նախնական կալանքի, ազատ արձակելու մասին տեղեկությունը և դատավճռի կատարման վերաբերյալ որևէ այլ ակտ.

գ) 3-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետով նախատեսված հայտարարությունը, որը ներառում է փոխանցման վերաբերյալ համաձայնությունը.

դ) անհրաժեշտության դեպքում դատապարտյալի մասին ցանկացած բժշկական կամ սոցիալական տեղեկություն, Դատապարտող պետությունում նրա բուժման վերաբերյալ տեղեկություն և որևէ հանձնարարական Կատարող պետությունում նրա հետագա բուժման մասին:

3. Մինչև փոխանցելու խնդրանքով դիմելը կամ փոխանցելու կամ չփոխանցելու մասին որոշում ընդունելը, յուրաքանչյուր պետություն կարող է խնդրել իրեն տրամադրել վերը նշված 1-ին և 2-րդ կետերում հիշատակված ցանկացած փաստաթուղթ կամ հաղորդագրություն:

ՀՈԴՎԱԾ 7
Համաձայնությունը և դրա ստուգումը

1. Դատապարտող պետությունը պետք է հավաստիացնի, որ անձը փոխանցման մասին համաձայնությունը տվել է կամավոր, 3-րդ հոդվածի 1-ին կետի դ) ենթակետին համապատասխան՝ գիտակցելով դրա իրավաբանական հետևանքները:

Այդպիսի համաձայնություն տալը կարգավորվում է Դատապարտող պետության օրենսդրությամբ:

2. Դատապարտող պետությունը պետք է հնարավորություն տա Կատարող պետությանը հյուպատոսի կամ Կատարող պետության հետ համաձայնեցված այլ պաշտոնյայի միջոցով ստուգելու, որ համաձայնությունը տրվել է վերը նշված 1-ին կետով սահմանված պայմաններին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 8
Փոխանցման հետևանքը Դատապարտող պետության համար

1. Կատարող պետության մարմինների կողմից դատապարտյալի հսկողության տակ վերցվելը կասեցնում է Դատապարտող պետությունում դատավճռի կատարումը:

2. Դատապարտող պետությունը չի կարող այլևս կատարել դատավճիռը, եթե Կատարող պետությունը գտնում է, որ դատավճռի կատարումն ավարտված է:

ՀՈԴՎԱԾ 9
Փոխանցման հետևանքը Կատարող պետության համար

1. Կատարող պետության իրավասու մարմինները պետք է՝

ա) շարունակեն դատավճռի կատարումը անմիջապես կամ դատական կամ վարչական որոշման հիման վրա՝ 10-րդ հոդվածում սահմանված պայմաններով.

բ) կամ դատական, կամ վարչական ընթացակարգերի միջոցով փոխարկեն դատավճիռն այդ Պետության որոշման՝ դրանով Դատապարտող պետության կողմից նշանակված պատժամիջոցը փոխարինելով Կատարող պետության օրենքով միևնույն արարքի համար նախատեսված պատժամիջոցով՝ 11-րդ հոդվածով սահմանված պայմաններով:

2. Կատարող պետությունը, խնդրանքի դեպքում, նախքան դատապարտյալի փոխանցումը, Դատապարտող պետությանը տեղեկացնում է, թե նշված ընթացակարգերից որն է կիրառելու:

3. Դատավճռի կատարումը կարգավորվում է Կատարող պետության օրենքով, և միայն այդ պետությունն է իրավասու ընդունելու բոլոր համապատասխան որոշումները:

4. Յուրաքանչյուր պետություն, որը մյուս պետության տարածքում կատարած հանցագործության համար հոգեկան վիճակի պատճառով անմեղսունակ անձի նկատմամբ նշանակված պատժամիջոցներն իրականացնելու համար, իր ներքին օրենսդրության համաձայն, չի կարող կիրառել 1-ին կետով նախատեսված ընթացակարգերից որևէ մեկը, և որը պատրաստ է այդ անձին ընդունել հետագայում բուժելու համար, կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությունում մանրամասնել այն ընթացակարգերը, որոնք պետք է կիրառվեն նման դեպքերում:

ՀՈԴՎԱԾ 10
Դատավճռի կատարման շարունակությունը

1. Կատարումը շարունակելու դեպքում Կատարող պետությունը պարտավոր է ղեկավարվել Դատապարտող պետության կողմից կայացված դատավճռի պատժամիջոցի իրավական բնույթով և տևողությամբ:

2. Եթե պատժամիջոցի բնույթը և տևողությունը չեն համապատասխանում Կատարող պետության օրենսդրությանը, կամ եթե այդ է պահանջում վերջինիս օրենսդրությունը, ապա Կատարող պետությունը կարող է պատժամիջոցը դատական կամ վարչական որոշմամբ հարմարեցնել (համապատասխանեցնել) իր օրենսդրությամբ նման բնույթի հանցագործությունների համար նախատեսված պատժին կամ այլ պատժամիջոցների:

Պատժի կամ պատժամիջոցի բնույթը հնարավորության դեպքում պետք է համապատասխանեն կատարման ենթակա դատավճռով սահմանված պատժի կամ պատժամիջոցի բնույթին: Այն իր բնույթով և պատժի ժամկետով չի կարող խստացնել Դատապարտող պետության կողմից նշանակված պատժամիջոցը և ոչ էլ գերազանցել Կատարող պետության օրենսդրությամբ նախատեսված պատժի առավելագույն ժամկետը:

ՀՈԴՎԱԾ 11
Դատավճռի փոխարկումը (կոնվերսիա)

1. Դատավճռի փոխարկման դեպքում կիրառվում են Կատարող պետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերը: Դատավճիռը փոխարկելիս իրավասու մարմինը՝

ա) պետք է հաշվի առնի Դատապարտող պետության կողմից կայացված դատավճռում որոշակիորեն արտահայտված կամ պարզ չարտահայտված փաստերի հաստատումը.

բ) չի կարող ազատազրկման հետ կապված պատժամիջոցը փոխարինել դրամական տուգանքով.

գ) հաշվարկելու է դատապարտյալի կրած ազատազրկման ամբողջ ժամանակահատվածը.

դ) չի կարող խստացնել դատապարտյալի քրեաիրավական վիճակը, ինչպես նաև չի կարող հաշվի առնել Կատարող պետության օրենսդրությամբ տվյալ հանցագործության կամ հանցագործությունների համար նախատեսված նվազագույն պատիժը:

2. Եթե դատավճիռը փոխարկվում է դատապարտյալին փոխանցելուց հետո, ապա Կատարող պետությունն այդ անձին պետք է պահի կալանքի տակ կամ այլ ձևով ապահովի նրա ներկայությունն իր պետության տարածքում մինչև այդ ընթացակարգի ավարտը:

ՀՈԴՎԱԾ 12
Ներում, համաներում, պատժի մեղմացում

Յուրաքանչյուր Կողմ, իր Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան, կարող է շնորհել ներում, համաներում կամ մեղմացնել պատիժը:

ՀՈԴՎԱԾ 13
Դատավճռի վերանայումը

Միայն Դատապարտող պետությունն իրավունք ունի քննել դատավճռի վերանայման վերաբերյալ դիմումները:

ՀՈԴՎԱԾ 14
Կատարման դադարեցումը

Կատարող պետությունը պարտավոր է դադարեցնել դատավճռի կատարումն այն պահից, երբ Դատապարտող պետության կողմից ծանուցվի որևէ որոշման կամ միջոցի մասին, որի հիման վրա դատավճիռը կատարման ենթակա չէ:

ՀՈԴՎԱԾ 15
Կատարման մասին տեղեկատվությունը

Կատարող պետությունը պարտավոր է դատավճռի կատարման մասին տեղեկություն տրամադրել Դատապարտող պետությանը, երբ՝

ա) նա դատավճռի կատարումն ավարտվել է.

բ) դատապարտյալը փախել է նախքան դատավճռի կատարման ավարտը.

գ) Դատապարտող պետությունը պահանջել է հատուկ հաշվետվություն:

ՀՈԴՎԱԾ 16
Տարանցիկ փոխադրում

1. Կողմը, իր օրենսդրությանը համապատասխան, կարող է բավարարել՝ դատապարտյալին իր պետության տարածքով տարանցիկ փոխադրելու մասին խնդրանքը, եթե այն ներկայացրել է մեկ այլ Կողմ, և այդ պետությունը մեկ այլ Կողմի կամ երրորդ պետության հետ համաձայնել է դատապարտյալի իր տարածքից կամ դեպի իր տարածք փոխանցմանը:

2. Կողմը կարող է մերժել բավարարելու տարանցիկ փոխադրումը, եթե՝

ա) դատապարտյալն իր քաղաքացի է.

բ) արարքը, որի համար պատիժ է նշանակված, իր պետության օրենսդրությամբ հանցագործություն չի համարվում:

3. Տարանցիկ փոխադրման մասին դիմումները և պատասխանները կարող են փոխանցվել 5-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված ուղիներով:

4. Կողմը կարող է բավարարել իր պետության տարածքով դատապարտյալի տարանցիկ փոխադրման մասին երրորդ պետության դիմումը, եթե այդ պետությունը համաձայնել է մեկ այլ Կողմի հետ դատապարտյալին իր տարածքից կամ դեպի իր տարածք փոխանցմանը:

5. Տարանցիկ փոխադրում թույլատրած Կողմը դատապարտյալին կալանքի տակ կարող է պահել միայն այնքան ժամանակ, որքան պահանջվում է տարանցիկ փոխադրման համար:

6. Տարանցիկ փոխադրում թույլատրած պետությունը պետք է երաշխավորի, որ դատապարտյալն իր տարածքում չի հետապնդվի, կալանավորվի, բացառությամբ նախորդ կետի կիրառման, կամ այլ կերպ ենթարկվի ազատության սահմանափակման, մինչև Դատապարտող պետության տարածքից մեկնելը՝ նրա կատարած հանցագործության կամ կայացված դատավճռի համար:

7. Տարանցիկ փոխադրման համար դիմում չի պահանջվում, եթե փոխադրումը կատարվում է Կողմի օդային տարածքով, և ծրագրված չէ այնտեղ վայրէջք կատարելը: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր Կողմ ստորագրման ժամանակ, վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս Եվրոպայի

խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ կարող է պահանջել, որ ինքը ծանուցվի իր տարածքով կատարվող յուրաքանչյուր այդ տեսակի տարանցիկ փոխադրման մասին:

ՀՈԴՎԱԾ 17
Լեզուն և ծախսերը

1. 4-րդ հոդվածի 24-րդ կետերում նշված տեղեկությունը տրամադրվելու է այն Կողմի լեզվով, որին այն հասցեագրվում է, կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով:

2. Բացառությամբ ներքոշարադրյալ 3-րդ կետի՝ չի կարող պահանջվել փոխանցման վերաբերյալ դիմումների կամ հիմնավորող փաստաթղթերի թարգմանություն:

3. Յուրաքանչյուր Կողմ ստորագրման ժամանակ կամ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ պահանջել, որ փոխանցման մասին դիմումներն ու հիմնավորող փաստաթղթերը զուգորդվեն իր լեզվով կամ նրա կողմից նշված Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից որևէ մեկով թարգմանությամբ: Այդ դեպքում նա կարող է հայտարարել, որ պատրաստ է ընդունել, Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզվի կամ լեզուներից բացի, այլ լեզվով թարգմանություններ:

4. Սույն Կոնվենցիայի կիրառման նպատակով փոխանցված փաստաթղթերը հաստատում չեն պահանջում, բացառությամբ 6-րդ հոդվածի 2-րդ կետի ա) ենթակետում նշված փաստաթղթերի:

5. Սույն Կոնվենցիայի կիրառմամբ առաջացող ծախսերը կրելու է Կատարող պետությունը, բացառությամբ այն ծախսերի, որոնք առաջացել են բացառապես Դատապարտող պետության տարածքում:

ՀՈԴՎԱԾ 18
Ստորագրելը և ուժի մեջ մտնելը

1. Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների և ոչ անդամ այն պետությունների համար, որոնք մասնակցել են դրա մշակմանը: Այն ենթակա է վավերացման, ընդունման կամ հաստատման: Վավերագիրը, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ են հանձնվում Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին:

2. Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմտնի Եվրոպայի խորհրդի անդամ երեք պետությունների՝ 1-ին կետի դրույթներին համապատասխան

Կոնվենցիայով կապված լինելու համաձայնությունը տալուց երեք ամիս անցնելուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

3. Յուրաքանչյուր ստորագրող պետության համար, որը հետագայում Կոնվենցիայով կապված լինելու իր համաձայնությունն է հայտնել, Կոնվենցիան ուժի մեջ կմտնի վավերագիրն, ընդունման կամ հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց երեք ամիս անցնելուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

ՀՈԴՎԱԾ 19
Ոչ անդամ պետությունների միանալը

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն Պայմանավորվող պետությունների հետ խորհրդակցելուց հետո կարող է հրավիրել ցանկացած ոչ անդամ պետության և 18-րդ հոդվածի 1-ին կետում չնշված պետության՝ միանալու սույն Կոնվենցիային՝ Եվրոպայի խորհրդի Կանոնադրության 20-րդ հոդվածի դ) կետով նախատեսված մեծամասնության կողմից ընդունված որոշմամբ և Պայմանավորվող պետությունների այն ներկայացուցիչների միաձայն քվեարկությամբ, որոնք իրավասու են մասնակցելու կոմիտեի աշխատանքներին:

2. Յուրաքանչյուր միացող Պետության համար Կոնվենցիան ուժի մեջ կմտնի միանալու մասին փաստաթուղթը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ի պահ հանձնելուց երեք ամիս անցնելուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

ՀՈԴՎԱԾ 20
Տարածքային կիրառումը

1. Յուրաքանչյուր պետություն կարող է ստորագրման ժամանակ կամ վավերագիրը, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս նշել այն տարածքը կամ տարածքները, որոնց նկատմամբ կիրառվելու է սույն Կոնվենցիան:

2. Յուրաքանչյուր պետություն կարող է ցանկացած ժամանակ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարությամբ տարածել սույն Կոնվենցիայի կիրառումը յուրաքանչյուր այլ տարածքի նկատմամբ: Այդ տարածքի համար Կոնվենցիան ուժի մեջ կմտնի նման հայտարարությունը գլխավոր քարտուղարի ստանալուց երեք ամիս անցնելուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

3. Նախորդ երկու կետերով նախատեսված յուրաքանչյուր հայտարարություն, ինչ վերաբերում է դրանում նշված յուրաքանչյուր տարածքին, կարող է հետ վերցվել գլխավոր քարտուղարին հասցեագրված

հայտարարությամբ: Հետ վերցնելն ուժի մեջ կմտնի նման հայտարարությունը գլխավոր քարտուղարի ստանալուց երեք ամիս անցնելուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

ՀՈԴՎԱԾ 21
Ժամանակային կիրառումը

Սույն Կոնվենցիան կիրառվում է ինչպես մինչև Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը, այնպես էլ դրանից հետո կայացված դատավճիռների կատարման նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 22
Հարաբերակցությունն այլ կոնվենցիաների և համաձայնագրերի հետ

1. Սույն Կոնվենցիան չի շոշափում այն իրավունքներն ու պարտավորությունները, որոնք ծագում են հանձնման մասին պայմանագրերից և քրեական գործերով միջազգային համագործակցության այլ պայմանագրերից, որոնք նախատեսում են առերեսման կամ ցուցմունք տալու նպատակով կալանավորված անձանց փոխանցում:

2. Եթե երկու կամ ավելի Կողմեր կնքել են կամ կկնքեն դատապարտյալների փոխանցման մասին համաձայնագիր կամ պայմանագիր, կամ եթե նրանք հաստատել են կամ կհաստատեն իրենց հարաբերությունները այս բնագավառում այլ կերպ, ապա նրանք հնարավորություն կունենան կիրառելու այդ համաձայնագիրը, պայմանագիրը կամ համաձայնությունը սույն Կոնվենցիայի փոխարեն:

3. Սույն Կոնվենցիան չի շոշափում «Դատավճիռների միջազգային ճանաչման մասին» եվրոպական կոնվենցիայի կողմ պետությունների իրավունքը՝ այդ Կոնվենցիայով նախատեսված հարցերով միմյանց հետ երկկողմ կամ բազմակողմ համաձայնագրեր կնքելու, դրա դրույթները լրացնելու կամ դրանում ընդգրկված սկզբունքների կիրառումը դյուրացնելու համար:

4. Եթե փոխանցման մասին դիմումն ընդգրկվում է սույն Կոնվենցիայի և «Դատավճիռների միջազգային ճանաչման մասին» եվրոպական կոնվենցիայի կամ դատապարտյալների փոխանցման մասին որևէ այլ համաձայնագրի կամ պայմանագրի կիրառման ոլորտում, ապա դիմող պետությունը պետք է նշի, թե որ փաստաթղթի հիման վրա է ներկայացնում դիմումը:

ՀՈԴՎԱԾ 23
Բարեկամական կարգավորում

Եվրոպայի խորհրդի հանցավորության հիմնախնդիրների եվրոպական կոմիտեն կհետևի սույն Կոնվենցիայի կիրառմանը և անհրաժեշտության դեպքում կձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները սույն Կոնվենցիայի կիրառման ընթացքում ծագած խոչընդոտների բարեկամական կարգավորման համար:

ՀՈԴՎԱԾ 24
Գործողության դադարեցումը

1. Յուրաքանչյուր պետություն ցանկացած ժամանակ կարող է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հասցեագրված հայտարարության միջոցով դադարեցնել սույն Կոնվենցիայի գործողությունը:

2. Կոնվենցիայի գործողությունը կդադարեցվի դրա վերաբերյալ հայտարարությունը գլխավոր քարտուղարի ստանալուց երեք ամիս անցնելուց հետո՝ հաջորդ ամսվա առաջին օրը:

3. Այնուամենայնիվ, սույն Կոնվենցիան կշարունակի կիրառվել մինչև դրա դադարեցումը Կոնվենցիայի դրույթներին համապատասխան փոխանցված դատապարտյալների դատավճիռների կատարման նկատմամբ:

ՀՈԴՎԱԾ 25
Ծանուցումներ

Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը կծանուցի Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին և սույն Կոնվենցիայի մշակմանը մասնակցած ոչ անդամ այն պետություններին և յուրաքանչյուր պետության, որը միացել է սույն Կոնվենցիային.

ա) յուրաքանչյուր ստորագրման մասին.

բ) յուրաքանչյուր վավերագրի, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթի ի պահ հանձնման մասին.

գ) սույն Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի, 19-րդ հոդվածի 2-րդ և 20-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ ուժի մեջ մտնելու յուրաքանչյուր ժամկետի մասին.

դ) որևէ սույն Կոնվենցիային վերաբերող յուրաքանչյուր այլ ակտի, հայտարարության, ծանուցման կամ հաղորդման մասին:

Ի վկայումն վերոշարադրյալի, այդ նպատակով պատշաճ կերպով լիազորված ներքոստորագրյալները ստորագրեցին սույն Կոնվենցիան:

Կատարված է Ստրասբուրգում 1983 թվականի մարտի 21-ին, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով երկու հավասարազոր տեքստերից բաղկացած մեկ բնօրինակով, որն ի պահ կհանձնվի Եվրոպայի խորհրդի արխիվին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը հաստատված կրկնօրինակները կուղարկի Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետության, սույն Կոնվենցիայի մշակմանը մասնակցած ոչ անդամ պետություններին և Կոնվենցիային միանալու համար հրավիրված յուրաքանչյուր պետության:

* «Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան, Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ «քաղաքացի» տերմինը սույն կոնվենցիայի նպատակների համար կառնչվի ցանկացած անձի, որը հանցագործություն կատարելու պահին հանդիսացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունը կարող է թույլատրել փոխանցելու այն դատապարտյալին, որը հանցագործություն կատարելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի չի հանդիսացել՝ պայմանով, որ նա դիմելու պահին Հայաստանի Հանրապետության քաղաքացի է»:

«Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ փոխանցման մասին դիմումները և դրանք հիմնավորող փաստաթղթերը պետք է ուղեկցվեն հայերեն կամ Եվրոպայի խորհրդի պաշտոնական լեզուներից մեկով կամ ռուսերեն թարգմանությամբ»:

** Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2001 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՉԵՐԲԱԿԱԼՄԱՆ և ԿԱԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԵԱԴԴ/0085/06/09
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԱԴԴ/0085/06/09
Նախագահող դատավոր՝ Ա. Դանիելյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ Դ. Ավետիսյանի
մասնակցությամբ դատավորներ Հ. Ասատրյանի
Ե. Դանիելյանի
Հ. Ղուկասյանի
Ա. Պողոսյանի
Ս. Օհանյանի
քարտուղարությամբ Կ. Աբրահամյանի

2009 թվականի դեկտեմբերի 18-ին Երևան քաղաքում, դռնբաց դատական նիստում, քննության առնելով մեղադրյալ Գագիկ Գառնիկի Միքայելյանի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշման դեմ Գ. Միքայելյանի պաշտպան Ի. Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Քրեական գործը հարուցվել է 2009թ. սեպտեմբերի 8-ին ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով:

2. 2009թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ Գագիկ Գառնիկի Միքայելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ:

3. Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը 2009թ. սեպտեմբերի 11-ի որոշմամբ բավարարել է նախաքննության մարմնի միջնորդությունը և մեղադրյալ Գ. Միքայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրել կալանքը՝ 2 ամիս ժամկետով:

4. Գ. Միքայելյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը 2009թ. հոկտեմբերի 2-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009թ. հոկտեմբերի 2-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել Գ. Միքայելյանի պաշտպան Ի. Պետրոսյանը:

5. Վճռաբեկ դատարանը 2009թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ բողոքը վարույթ է ընդունել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար»):

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

Սույն վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստական հանգամանքները.

6. Գ. Միքայելյանն Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 2008թ. հոկտեմբերի 3-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և դատապարտվել ազատազրկման մեկ տարի ժամկետով: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, և սահմանվել է փորձաշրջան մեկ տարի ժամկետով:

7. 2009թ. սեպտեմբերի 11-ին Գ. Միքայելյանը ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ներգրավվել է որպես մեղադրյալ այն արարքի համար, որ նա ուրիշի զգալի չափերի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու դիտավորությամբ 2009թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 02.45-ի սահմաններում, Երևան քաղաքի Շինարարների փողոցի 15/2 շենքի 12-րդ հարկում գտնվող վերելակի մեքենայական սրահի մուտքի դռան կախովի փականը կոտրելու միջոցով, ապօրինի մուտք է գործել սրահ և փորձել է այնտեղից գողանալ զգալի չափի արժեք ունեցող՝ վերելակի արգելակման կոճը,

սակայն հանցանքն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, քանի որ բռնվել է շենքի բնակիչների կողմից:

8. Գ. Միքայելյանի նկատմամբ 2008թ. հոկտեմբերի 3-ի դատավճռով սահմանված մեկ տարի ժամկետով փորձաշրջանի հաշվարկումը սկսվել է 2009թ. փետրվարի 17-ից, ուստի Գ. Միքայելյանին մեղադրանք է առաջադրվել փորձաշրջանի ընթացքում՝ 2009թ. սեպտեմբերի 8-ին, կատարած գողության համար:

9. Գ. Միքայելյանը ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին բերման է ենթարկվել 2009թ. սեպտեմբերի 8-ին ժամը 03.05-ին: Գ. Միքայելյանին ձերբակալելու մասին արձանագրությունը կազմվել է 2009թ. սեպտեմբերի 8-ին ժամը 23.30-ին:

Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացվել 2009թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19-ի սահմաններում:

Դատարանը Գ. Միքայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը ընտրելու մասին որոշումը կայացրել է 2009թ. սեպտեմբերի 11-ին՝ ժամը 21-ի սահմաններում:

10. Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանն իր որոշման մեջ նշել է, որ «Գ. Միքայելյանը բերման ենթարկվելուց հետո գտնվել է անգիտակից վիճակում, և նրան այդ վիճակում ոստիկանությունում պահելը չի կարող դիտվել որպես նրա իրավունքների և ազատությունների սահմանափակում»:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

11. Բողոքաբերը փաստարկել է, որ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ, 11-րդ, 130-րդ, 131-րդ, 131.1-րդ հոդվածների, ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» ենթակետի միատեսակ կիրառության համար:

12. Բողոք բերած անձը նշել է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ, 130-րդ, 131.1-րդ հոդվածների և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի պահանջները:

13. Բողոքաբերը փաստարկել է նաև, որ Գ. Միքայելյանի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրվել է այն պարագայում, երբ

արդեն իսկ լրացել է նրա անազատության մեջ գտնվելու 72 ժամը, բացի այդ, բողոքաբերը նշել է, որ Գ. Միքայելյանն անգիտակից վիճակում չի եղել, ավելին՝ 2009 թվականի սեպտեմբերի 8-ին՝ ժամը 14.00-ի սահմաններում՝ բերման ենթարկվելուց շուրջ 11 ժամ անց, անձամբ գրավոր հրաժարվել է հիվանդանոց տեղափոխվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ բողոքաբերը խնդրել է բեկանել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և Գ. Միքայելյանին անհապաղ ազատ արձակել կալանքից:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

I. Ենթադրաբար հանցագործություն կատարած լինելու հիմքով անձին ազատությունից զրկելու իրավական կառուցակարգերը.

14. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում գտնվելու ընթացքում՝ նախքան ձերբակալման արձանագրությունը հայտարարելը, Գ. Միքայելյանն ունե՞ր արդյոք դատավարական կարգավիճակ:

15. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով»: Այնուհետև թվարկվում է անձին ազատությունից զրկելու իրավաչափ դեպքերի սպառիչ ցանկը, որոնց թվում է «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը» (4-րդ կետ):

Հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության կարգը, ներառյալ՝ այդ ընթացքում կիրառվող հարկադրանքի միջոցները սահմանող ճյուղային կոդիֆիկացված օրենքը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն է, որի 5-րդ բաժնում («Դատավարական հարկադրանքի միջոցները») ամրագրված են ենթադրաբար հանցագործություն կատարած լինելու հիմքով անձին ազատությունից զրկելու երկու ինքնուրույն միջոցներ՝ ձերբակալումը (17-րդ գլուխ՝ 128-133-րդ հոդվածներ) և խափանման միջոց կալանավորումը (18-րդ գլխի 137-142-րդ հոդվածներ):

16. Ձերբակալման և կալանավորման հարաբերակցության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը 2009թ. սեպտեմբերի 12-ի ՍԴՈ-827 որոշման մեջ հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Ձերբակալում» և «կալանավորում» ինստիտուտների՝ օրենսդրությամբ սահմանված նպատակների և հիմքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ այդ ինստիտուտներն ունեն ինքնուրույն բովանդակություն, հետապնդում են միմյանցից ըստ էության տարբերվող նպատակներ, ունեն կիրառման միմյանցից էապես տարբերվող հիմ-

քեր: Դրանցից յուրաքանչյուրն օրենսդիրն ընտրել է որպես ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 1-ին մասով մատնանշված առանձին նպատակների հասնելու ինքնուրույն դատավարական միջոց, և կիրառվում է տարբեր հիմքերի առկայությամբ: Հետևաբար, դրանցից յուրաքանչյուրը, առանց որևէ փոխպայմանավորվածության, փոխկապակցվածության և հաջորդականության, ինքնուրույնաբար կարող է կիրառվել, երբ առկա են դրանով հետապնդվող նպատակները և դրա կիրառման համար անհրաժեշտ հիմքերը:

17. Վճռաբեկ դատարանը, ղեկավարվելով Սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշմամբ, միաժամանակ ընդգծում է, որ ձերբակալումը և կալանավորումն ունեն էական ընդհանրություն ևս՝ երկուսն էլ հնարավորություն են տալիս հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի պարագայում դատավարական կարգավիճակ (կասկածյալի կամ մեղադրյալի) ունեցող անձին զրկել ազատությունից (պահել անազատության մեջ): Ընդ որում, հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի բավարար աստիճանը ձերբակալման դեպքում ավելի ցածր է, քան կալանավորման դեպքում:

Այդուհանդերձ, ձերբակալման ընթացակարգի յուրահատկությունը հաշվի առնելով՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածով անձին ազատությունից զրկելու կառուցակարգը կարող է ընդգրկել որոշակի տևողությամբ սկզբնական փուլ, որի ընթացքում անձը կարող է որևէ դատավարական կարգավիճակ չունենալ՝ պայմանավորված գործող քրեադատավարական օրենսդրության անբավարար որոշակիությամբ:

18. Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

Այս բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝ (1) անձին ազատությունից փաստացի զրկելը, (2) նրան իրավասու մարմին բերելը, (3) ձերբակալման արձանագրություն կազմելը և (4) այդ մասին նրան հայտարարելը: Ուստի անձը կարող է ձերբակալվածի կարգավիճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից:

Նախքան դա՝ անձը, փաստացի արգելանքի վերցվելով և քրեական հետապնդման մարմին բերվելով, դեռևս ձերբակալվածի կարգավիճակ չի կարող ունենալ, մինչդեռ նրան արգելանքի վերցնելու և վարույթն իրականացնող մարմին բերելու հիմքը հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածն է՝ զուգորդված նրա փախուստը կանխելու նպատակով: Ընդ որում, այստեղ կասկածի հիմնավորվածության աստիճանն է՛լ ավելի ցածր է, քան ձերբակալման դեպքում:

19. Եթե բերված անձի նկատմամբ վարույթն իրականացնող մարմինը շարունակում և ավարտին է հասցնում ձերբակալման գործընթացը, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ նախադասության ուժով ձերբակալման ժամկետի հաշվարկն սկսվում է արգելանքի վերցնելու պահից, սակայն դա կատարվում է հետադարձ կարգով: Ուստի արգելանքի վերցված ու վարույթն իրականացնող մարմին բերված անձը, նախքան ձերբակալման արձանագրությունն իրեն հայտարարելը, չի կարող բավարար որոշակիությամբ գիտակցել իր կարգավիճակը: Ավելին, քանի դեռ արձանագրությունը կազմված չէ, նա կարող է ազատ արձակվել՝ այդպես էլ չստանալով ձերբակալվածի կարգավիճակ:

20. Սույն որոշման 15-19-րդ կետերում արված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիմքով անձին ազատությունից զրկելու քրեադատավարական կառուցակարգերը չեն սահմանափակվում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտներով, այլ ներառում են նաև արգելանքի վերցվելու և վարույթն իրականացնող մարմին բերվելու կառուցակարգը: Համապատասխանաբար, մինչդատական վարույթում «ձերբակալվածի» և «կալանավորվածի» կարգավիճակների հետ մեկտեղ ազատությունից զրկված անձը կարող է ունենալ նաև նախնական իրավական վիճակ, որը պայմանականորեն կարելի է անվանել «բերվածի» կարգավիճակ:

Բերմանը հարաբերական ինքնուրույնություն տալու օրենսդրի մոտեցման մասին է վկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասը, որը նախքան քրեական գործի հարուցումը թույլատրելի գործողությունների շարքում ամրագրում է նաև «հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում ... բերման ... ենթարկվել(ը)»:

21. Չնայած բերվածի կարգավիճակի կարճատևությանը՝ բերվածը պետք է օժտված լինի սահմանադրական և կոնվենցիոն համապատասխան երաշխիքներով:

Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի

(...) արդարացի (...) դատաքննության իրավունք: (...)»: 6-րդ հոդվածի 3-րդ կետն ամրագրում է հանցագործություն կատարելու մեջ յուրաքանչյուր մեղադրվողի նվազագույն իրավունքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա՝ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե ձևական (փաստաթղթային), այլ բովանդակային (գործնական) իմաստով (Դևեերն ընդդեմ Բելգիայի (Deweer v. Belgium) գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա (Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով վճիռ, 1982թ. հուլիսի 15, գանգատ թիվ 8130/78, կետ 73, Շուբինսկին ընդդեմ Սլովենիայի (Subinski v. Slovenia) գործով վճիռ, 2007թ. հունվարի 18, գանգատ թիվ 19611/04, կետ 62, Գ.Կ-ն ընդդեմ Լեհաստանի (G.K. v. Poland) գործով վճիռ, 2004թ. հունվարի 20, գանգատ թիվ 38816/97, կետ 98): Ընդ որում, մինչդատական վարույթի նկատմամբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի կիրառման եղանակը պայմանավորված է տվյալ վարույթի առանձնահատկություններով (Շաբելնիկն ընդդեմ Ուկրաինայի (Shabelnik v. Ukraine) գործով վճիռ, 2009թ. փետրվարի 19, գանգատ թիվ 16404/03, կետ 52):

22. Նախորդ կետում շարադրված՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բերվածի իրավական վիճակը համապատասխանում է «քրեական մեղադրանքի» ներկայացման կոնվենցիոն պահանջին՝ Եվրոպական դատարանի բովանդակային մեկնաբանմամբ: Ուստի բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով՝

ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3 (ա) ենթակետից).

բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից).

գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից).

դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասից):

Համապատասխանաբար, քրեական հետապնդման մարմինը պարտավոր է ապահովել բերվածի իրավունքների իրականացումը՝ բերվածի իրավունքները գրավոր պարզաբանելու, նրան առնվազն մեկ զանգի հնարավորություն ընձեռելու, բերվածի փաստաբանի մուտքը չխոչընդոտելու եղանակներով:

Այնքանով, որքանով վերաբերելի են (mutatis mutandis), սույն կետում ամրագրված նվազագույն իրավունքներով և երաշխիքներով օժտված են նաև ոստիկանությունում կամ քրեական հետապնդման այլ մարմնում գտնվող, կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ չունեցող այն անձինք, որոնք կարող են ողջամտորեն ենթադրել, որ (1) իրենց ազատությունը սահմանափակված է կամ իրենք ազատությունից զրկված են, և, միաժամանակ, որ (2) իրենք կասկածվում են հանցագործության մեջ:

23. Սույն որոշման 20-22-րդ կետերում սահմանված չափանիշները քննության առարկա գործի նկատմամբ կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում գտնվելու ընթացքում՝ նախքան ձերբակալման արձանա-գրության մասին իրեն հայտարարելը, Գ. Միքայելյանն ուներ բերվածի կարգավիճակ:

II. Մինչդատական վարույթում ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքները.

24. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. Գ. Միքայելյանի ազատության իրավունքը սահմանափակելիս մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից պահպանվե՞լ են արդյոք ՀՀ Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված երաշխիքները:

25. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն. «(...) Եթե ձերբակալված անձը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «(...) ձերբակալումը չի կարող տևել արգելանքի վերցնելու պահից 72 ժամից ավելի (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Հանցանքը կատարելու մեջ կասկածվող անձին հետաքննության մարմին, քննիչի կամ դատախազի մոտ բերելուց հետո՝ երեք ժամվա ընթացքում, կազմվում է կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ձերբակալվածը, վարույթն իրականացնող մարմնի

որոշման հիման վրա, ենթակա է ազատման, եթե (...) լրացել է ձերբակալման՝ սույն օրենսգրքով սահմանված առավելագույն ժամկետը, և դատարանը մեղադրյալին կալանավորելու մասին որոշում չի կայացրել»:

26. Վերոշարադրյալ նորմերի վերլուծությունից երևում է, որ անձի ազատության իրավունքի սահմանափակումը ենթադրում է ժամկետային տևողության և փաստաթղթային արձանագրման ուղղակի պահանջներ, որոնց թվին է դասվում ազատությունից զրկված անձին քրեական հետապնդման մարմին բերելուց առավելագույնը երեք ժամ հետո ձերբակալման արձանագրություն կազմելը:

27. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածից բխում է, որ անձի ձերբակալման գործընթացն ավարտված է համարվում անձին արգելանքի վերցնելուց, նրան վարույթն իրականացնող մարմին բերելուց և ձերբակալման արձանագրություն կազմելուց հետո կազմված արձանագրության մասին ազատությունից զրկված անձին հայտարարելու պարագայում (տե՛ս սույն որոշման 18-րդ կետը): Այսինքն՝ սույն հոդվածի իմաստով անձն օրենքով սահմանված կարգով ձերբակալված կարող է համարվել միայն այն դեպքում, երբ նրան ազատությունից զրկելը պատշաճ կերպով արձանագրվել է և ինքը ծանոթացվել է կազմված արձանագրությանը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 131.1-րդ հոդվածի 1-ին մասի տառացի մեկնաբանության արդյունքում պարզվում է, որ օրենսդիրը ժամանակային սահմանափակման (առավելագույնը 3 ժամ) ենթարկել է միայն անձին ձերբակալելու մասին արձանագրության կազմումը, իսկ այդ մասին նրան հայտարարելու համար որևէ ժամկետ չի սահմանել: Այսինքն՝ վերոնշյալ հոդվածների տառացի մեկնաբանությունից հետևում է, որ հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձը մինչդատական վարույթն իրականացնող մարմին բերվելուց անգամ երեք ժամ հետո կարող է ձերբակալվածի կարգավիճակ ձեռք չբերել և, հետևաբար, զրկվել այդ կարգավիճակից բխող իրավական երաշխիքներից, եթե վարույթն իրականացնող մարմինը նրան չհայտարարի կազմված ձերբակալման արձանագրության մասին:

28. Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածը պետք է մեկնաբանել 131.1-րդ հոդվածի լույսի ներքո և ամրագրել, որ այն բանից հետո, երբ անձին քրեական հետապնդման մարմին բերելու պահից երեք ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմինը կկազմի կասկածյալին ձերբակալելու մասին արձանագրություն, այդ մարմինը պարտավոր է անհապաղ, իսկ դրա անհնարինության դեպքում՝ առավելագույնը մեկ ժամվա ընթացքում դրա մասին հայտարարել ազատությունից զրկված անձին: Նման ժամկետային սահմանափակումը

ողջամիտ է և բխում է ազատությունից զրկված անձի սահմանադրական իրավունքների ապահովման անհրաժեշտությունից: Նշված ժամկետային սահմանափակումից միակ իրավաչափ բացառությունը կարող է վերաբերել այն դեպքերին, երբ բերվածի ֆիզիոլոգիական վիճակը՝ ալկոհոլի, թմրամիջոցների կամ այլ թմրեցնող նյութերի ազդեցության տակ լինելը կամ այլ համարժեք վիճակը, քրեական հետապնդման մարմնին օբյեկտիվորեն զրկում է ձերբակալման արձանագրությունը բերվածին հայտարարելու հնարավորությունից:

Այսպիսով, եթե քրեական հետապնդման մարմին բերելուց չորս ժամ հետո ազատությունից զրկված անձին ձերբակալման արձանագրությունը չի հայտարարվի, ապա անձն օրենքի ուժով պետք է համարվի ձերբակալված և իրավունք ունենա օգտվել ձերբակալվածի համար օրենքով սահմանված երաշխիքներից, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված՝ 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չկալանավորվելու դեպքում անհապաղ ազատ արձակվելու իրավունքից:

29. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Գ. Միքայելյանը ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժին բերման է ենթարկվել 2009 թվականի սեպտեմբերի 8-ին ժամը 03.05-ին, նրան ձերբակալելու մասին արձանագրությունը կազմվել է 2009 թվականի սեպտեմբերի 8-ին ժամը 23.30-ին: Նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարան է ներկայացվել 2009 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 19.00-ի սահմաններում, նրա նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրվել է ժամը 21-ի սահմաններում (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը): Վերոգրյալից երևում է, որ Գ. Միքայելյանը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարան չի տարվել և ոչ էլ ազատ է արձակվել, այսինքն՝ մինչդատական վարույթում ավելի քան 16 ժամ ապօրինի գտնվել է անազատության մեջ:

Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Գ. Միքայելյանի ազատության իրավունքը սահմանափակելիս մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն ապահովվել օրենքով նախատեսված իրավական երաշխիքները, մասնավորապես, խախտվել է 72 ժամվա ընթացքում դատարան տարվելու կամ ազատ արձակվելու նրա իրավունքը:

III. Ձերբակալման առավելագույն տևողության խախտման պայմաններում անձին կալանավորելու հնարավորությունը.

30. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. Գ. Միքայելյանի ձերբակալման 72-ժամյա օրինական տևողությունը լրանալուց հետո դատարան ներկայացված՝ նրան կալանավորելու միջնորդությունը կարո՞ղ էր բավա-

րարվել, եթե դատարանը գտնում էր, որ նրան կալանավորելու հիմքերն առկա են:

31. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն. «(...) Մարդուն կարելի է ազատությունից զրկել կամ նրա ազատությունը սահմանափակել միայն (...) հետևյալ դեպքերում՝ (...) 3) հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում, (...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խափանման միջոց (այդ թվում՝ կալանավորում) կարող է կիրառվել «միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1. թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2. խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3. կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4. խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5. խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը»:

32. Նախորդ կետում շարադրված իրավանորմերից բխում է, որ անձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմնին հաջողվի դատարանի համար համոզիչ հիմնավորել.

ա) անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը) և

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը:

Այսպիսով, կալանավորման միջնորդությանը նախորդած ձերբակալման ընթացակարգի (ներառյալ՝ ժամկետի վերաբերյալ պահանջի) խախտումը կալանավորման միջնորդությունը մերժելու հիմք չէ, եթե հանցագործությանը մեղադրյալի առնչությունը և կալանավորման հիմքերի առկայությունը դատարանը համարում է հիմնավորված:

Վճռաբեկ դատարանի այս իրավական դիրքորոշումը բխում է «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտների միջև փոխպայմանավորվածության բացակայության և դրանցից յուրաքանչյուրի ինքնուրույնության մասին Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումից (տե՛ս սույն որոշման 16-րդ կետը):

33. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, ով, ի խախտումն սույն հոդվածի դրույթների, ձերբակալման կամ կալանավորման զոհ է դարձել, իրավունք ունի հայցի ուժով օժտված փոխհատուցման»:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատությունից ապօրինի զրկման կամ ապօրինի խուզարկության դեպքում օրենքով սահմանված հիմքերով և կարգով պատճառված վնասի հատուցման»:

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք»:

34. Նախորդ կետում շարադրված մարդու հիմնարար իրավունքները, որպես անմիջականորեն գործող իրավունք, կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձերբակալման օրինականությունը չի կարող դուրս մնալ դատական վերահսկողության շրջանակից, և հարկադրանքի այդ միջոցի կիրառման ընթացքում թույլ տրված խախտումները պետք է արժանանան համարժեք իրավական գնահատականի և հանգեցնեն համարժեք իրավական հետևանքների: Հակառակ դեպքում՝ կխախտվի ձերբակալվածի՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը:

Ուստի, կալանավորման միջնորդությունը քննելիս, ձերբակալման ընթացակարգի խախտման փաստ հայտնաբերելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան միջոցներ: Ձերբակալման առավելագույն ժամկետի խախտման պարագայում այդ միջոցները պետք է հանգեն հետևյալին՝

ա) 72-ժամյա ժամկետի խախտման փաստի արձանագրում.

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360.1-րդ հոդվածի հիման վրա լրացուցիչ որոշման կայացում, կամ, խախտումն ակնհայտ և կոպիտ լինելու դեպքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա քրեական գործ հարուցելու միջնորդությամբ դատախազին դիմում.

գ) անօրինական ձերբակալման համար փոխհատուցում ստանալու պահանջով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան դիմելու ընթացակարգի պարզաբանում:

35. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի համաձայն.

«1. Ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը, օրենքով սահմանված կարգով, լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

2. Քաղաքացուն (...) հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների ապօրինի գործունեությամբ պատճառված վնասը, որը չի հանգեցրել սույն հոդվածի 1-ին կետում նախատեսված հետևանքներին, հատուցվում է սույն օրենսգրքի 1063-րդ հոդվածում նախատեսված հիմքերով և կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի համաձայն. «Քաղաքացուն (...) պետական մարմինների, (...) կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ)՝ (...) պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը (...)»:

36. Սույն որոշման 33-րդ կետի «Գ» ենթակետի արդյունավետ կենսագործումն ապահովելու նպատակով Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ձերբակալման ընթացակարգի խախտման հիմքով հայցի քննությունը պետք է իրականացվի ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի հիման վրա: Այլ կերպ՝ անօրինական ձերբակալման զոհը պետք է օժտված լինի փոխհատուցում ստանալու իրավունքով՝ անկախ համապատասխան հետաքննության, նախաքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից: Հակառակ դեպքում, փոխհատուցման իրավունքը կարող է վերածվել պատրանքային և վերացական իրավունքի, քանի որ անօրինական ձերբակալման զոհի վրա անարդարացիորեն կդրվի ապացուցման լրացուցիչ բեռ:

Միևնույն ժամանակ այդ հայցի քննությունը և լուծումը պետք է համապատասխանի ինչպես ՀՀ ներպետական օրենսդրությանը, այնպես էլ միջազգային պայմանագրերին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշմանը:

37. Նախորդ կետում շարադրված հիմնավորումները պայմանավորված են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված այն դիրքորոշմամբ, որ ազատությունից անօրինական զրկված անձի փոխհատուցման իրավունքը պետք է

ապահովված լինի որոշակիության բավարար աստիճանով (Սաքըքը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Sakik and Others v. Turkey) գործով վճիռ, 1997թ. նոյեմբերի 27, գանգատներ թիվ 23878/94 և այլն, կետ 60, Ն.Ս-ն ընդդեմ Իտալիայի (N.C. v. Italy) գործով վճիռ, 2002թ. դեկտեմբերի 18, գանգատ թիվ 24952/94, կետ 52, Ռեհբոկն ընդդեմ Սլովենիայի (Rehbock v. Slovenia) գործով վճիռ, 2000թ. նոյեմբերի 11, գանգատ թիվ 29462/95, կետ 92):

38. Սույն որոշման 32-րդ կետում շարադրված իրավական դիրքորոշումը սույն գործի փաստերի նկատմամբ կիրառելու արդյունքում Վճռաբեկ դատարանն իրավաչափ չի համարում Գ. Միքայելյանին անհապաղ ազատ արձակելու մասին բողոքաբերի փաստարկումն այն հիմքով, որ Գ. Միքայելյանին կալանավորելու մասին որոշում կայացնելու պահին նրա ձերբակալման ժամկետը լրացած է եղել (տե՛ս սույն որոշման 13-րդ կետը):

Ավելին՝ գործի փաստական հանգամանքների հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ առերևույթ հիմնավորված են եղել թե՛ իրեն մեղսագրվող հանցագործությանը Գ. Միքայելյանի առնչությունը և թե՛ կալանավորման հիմքերը: Մասնավորապես՝ որպես մեղադրյալի առնչությունը հիմնավորող ծանրակշիռ փաստարկ՝ առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները հաշվի են առել այն, որ առերևույթ գողություն կատարելիս Գ. Միքայելյանը բռնվել է ենթադրյալ գողության վայրի բնակիչների կողմից: Իսկ որպես կալանավորման հիմք՝ ստորադաս դատարանները հաշվի են առել այն, որ Գ. Միքայելյանը ենթադրյալ հանցանքը կատարել է փորձաշրջանի ընթացքում (տե՛ս սույն որոշման 6-րդ և 8-րդ կետերը), ինչը ծանրակշիռ փաստարկ է նոր հանցանք կատարելու հնարավորության մասին ողջամիտ ենթադրություն կատարելու համար:

Հետևաբար վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման:

39. Միևնույն ժամանակ, սույն որոշման 34-րդ կետում արտահայտված իրավական դիրքորոշման հիման վրա, Վճռաբեկ դատարանը (ա) ճանաչում է Գ. Միքայելյանի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման փաստը՝ նրան, առանց իրավական հիմքի, 72 ժամից շուրջ 16 ժամով ավելի երկար անազատության մեջ պահելու մասով (տե՛ս սույն որոշման 29-րդ կետը), (բ) նշված խախտման փաստով կայացնում է լրացուցիչ որոշում՝ այն ուղարկելով իրավասու մարմիններին, ինչպես նաև (գ) արձանագրում է, որ Գ.Միքայելյանն ունի ձերբակալման ընթացակարգի խախտման համար քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու իրավունք՝ հաշվի առնելով սույն որոշմամբ շարադրված իրավական դիրքորոշումները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Գագիկ Գառնիկի Միքայելյանի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումն ընտրելու մասին Երևանի Աջափնյակ և Դավթաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարանի 2009 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումն օրինական ուժի մեջ թողնելու վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հոկտեմբերի 2-ի որոշման դեմ մեղադրյալ Գ. Միքայելյանի պաշտպան Ի. Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը մերժել:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ «ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» 1983 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի ՍՏՐԱՍԲՈՒՐԳԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության ԵԷԴ/0013/15/09
վերաքննիչ քրեական դատարանի որոշում
գործ թիվ ԵԷԴ/0013/15/09
Նախագահող դատավոր՝ Ս. Համբարձումյան

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան)

նախագահությամբ	Դ. Ավետիսյանի
մասնակցությամբ դատավորներ	Հ. Ասատրյանի
	Ե. Դանիելյանի
	Հ. Ղուկասյանի
	Ա. Պողոսյանի
	Ս. Օհանյանի
քարտուղարությամբ	Մ. Պետրոսյանի

26 նոյեմբերի 2009 թվական ք. Երևան

դռնբաց դատական նիստում, քննության առնելով Արմեն Ռուբենի Մաթևոսյանի վերաբերյալ ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա, վ» կետերով, 139-րդ հոդվածի 1-ին մասով և 115-րդ հոդվածի 1-ին մասով Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասի դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի բերած վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

Գործի դատավարական նախապատմությունը.

1. ՀՀ քաղաքացի Արմեն Ռուբենի Մաթևոսյանը Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճռով մեղավոր է ճանաչվել ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «վ» կետերով, 139-րդ հոդվածի 1-ին մասով և 115-րդ հոդվածի 1-ին մասով: ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա», «վ» կետերով նա դատապարտվել է ազատազրկման 20 (քսան) տարի ժամկետով, 139-րդ հոդվածի 1-ին մասով՝ ուղղիչ աշխատանքների 6 (վեց) ամիս ժամկետով՝ աշխատավարձի 20 (քսան) տոկոսի պահումով՝ որպես պետության եկամուտ, 115-րդ հոդվածի 1-ին մասով՝ ուղղիչ աշխատանքների 6 (վեց) ամիս ժամկետով՝ աշխատավարձի 20 (քսան) տոկոսի պահումով՝ որպես պետության եկամուտ: ՌԴ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառմամբ՝ հանցանքների համակցությամբ պատիժները լրիվ գումարելու միջոցով Ա. Մաթևոսյանի նկատմամբ վերջնական պատիժ է սահմանվել ազատազրկումը 20 (քսան) տարի 4 (չորս) ամիս ժամկետով՝ առաջին տասը տարին բանտում կրելով, իսկ պատժի մնացած մասը՝ խիստ ռեժիմի ուղղիչ գաղութում:

Պատժի սկիզբը հաշվվել է 2005 թվականի մայիսի 30-ից:

2. ՌԴ Չելյաբինսկի մարզային դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 9-ին որոշում է կայացրել Ա. Մաթևոսյանին հետագա պատիժը կրելու համար Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասին:

3. 2009 թվականի մարտի 6-ին ՀՀ գլխավոր դատախազության պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող վարչության պետ Շ. Տիգրանյանը դիմել է Երևանի էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության դատարան՝ Ա.Մաթևոսյանի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը 1998 թվականի մարտի 6-ին Մոսկվայում ստորագրված «Պատժի հետագա կրման համար ազատազրկման դատապարտվածներին փոխանցելու մասին» Կոնվենցիայի 12-րդ հոդվածի համաձայն՝ ճանաչելու, ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և ի կատար ածելու միջնորդությամբ:

4. Երևանի էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 15-ի որոշմամբ դատախազի միջնորդությունը բավարարվել է և դատապարտյալ Ա. Մաթևոսյանի նկատմամբ ՌԴ Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճռով ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «վ» կետերով

նախատեսված արարքը համապատասխանեցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերին, ՌԴ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասին և ՌԴ քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածին, և Ա. Մաթևոսյանի նկատմամբ նշանակված պատիժը թողնվել է անփոփոխ:

5. Դատապարտյալ Ա. Մաթևոսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշմամբ դատապարտյալի վերաքննիչ բողոքը բավարարվել է. դատավճիռն օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին Երևանի էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 15-ի որոշումը բեկանվել է և կայացվել է նոր որոշում՝ դատավճիռը ճանաչելու, ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու և ի կատար ածելու վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության միջնորդությունը բավարարելու մասին:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի դատական ակտի համաձայն՝ որոշվել է.

- Հայաստանի Հանրապետությունում ճանաչել և ի կատար ածել Արմեն Ռուբենի Մաթևոսյանի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը ՌԴ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «վ» կետերով, 139-րդ հոդվածի 1-ին և 115-րդ հոդվածի 1-ին մասերով:
- Ա. Մաթևոսյանի նկատմամբ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքին.

ա) ՌԴ քրեական օրենսգրքի 150-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» և «վ» կետերով նախատեսված արարքը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին և պատիժ սահմանել ազատազրկում 15 (տասնհինգ) տարի ժամկետով:

բ) ՌԴ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասին և պատիժ սահմանել տուգանք՝ 100.000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

գ) ՌԴ քրեական օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածին և պատիժ սահմանել տուգանք՝ 150.000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

դ) ՌԴ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանեցնել ՀՀ քրեական օրենսգրքի 66-րդ հոդվածի 4-րդ մասին և դրա կանոնների կիրառմամբ հանցանքների համակցությամբ պատիժները լրիվ գումարելու միջոցով Ա.Մաթևոսյանի նկատմամբ վերջնական պատիժ սահմանել ազատազրկում 15 (տասնհինգ) տարի ժամկետով և տուգանք 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ պատժի սկիզբը հաշվելով 2005 թվականի մայիսի 30-ից:

6. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Ա. Թամազյանը:

2009 թվականի հոկտեմբերի 23-ին ՀՀ վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով («բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի միատեսակ կիրառության համար») բողոքն ընդունել է վարույթ:

Դատավարության մասնակիցների կողմից վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

7. Արմեն Ռուբենի Մաթևոսյանը Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի դատավճռով մեղավոր է ճանաչվել և դատապարտվել է հետևյալ արարքի համար. Ա.Մաթևոսյանը, անբարյացակամ վերաբերմունք ունենալով Լ.Չիչկովայի նկատմամբ, որը հրաժարվել է իր հետ հանդիպել և որևէ հարաբերություններ պահպանել, որոշել է նրան սպանել: Այդ նպատակով 2005 թվականի մայիսի 30-ին՝ առավոտյան ժամը 04.00-ի սահմաններում, զինվելով խոհանոցային դանակով՝ գազի խողովակով, բաց պատշգամբով մուտք է գործել Կրասնոդար քաղաքի Գագարինի թիվ 242 շենքի 8 բնակարան, որտեղ բնակվել են Լ. Չիչկովան, նրա մայրը՝ Տ. Չիչկովան, ինչպես նաև նրա ազգականներ Ե. Անդրիեցը և Վ. Ռուսիյը:

Երբ Տ. Չիչկովան բնակարանում հայտնաբերել է կողմնակի անձի, նա վառել է լույսը և փորձել է խանգարել Ա. Մաթևոսյանին մտնելու սենյակ: Ա. Մաթևոսյանը Տ. Չիչկովային սպանելու նպատակով դանակով երեք հարված է հասցրել նրա կրծքավանդակի առաջնային և հետնային պատերին, ինչի հետևանքով Տ. Չիչկովան տեղում մահացել է:

Այնուհետև Ա. Մաթևոսյանը դանակով երեք հարված է հասցրել մոր ճիչից արթնացած Լ. Չիչկովայի մարմնին՝ նրա առողջությանը պատճառելով թեթև վնաս, ապա դանակով բազմաթիվ հարվածներ է հասցրել Ե. Անդրիեցի և Վ. Ռուսոյի մարմնի տարբեր մասերին, որոնք փորձում էին պաշտպանել Լ. Չիչկովային, ինչի հետևանքով Ե. Անդրիեցը և Վ. Ռուսոյը տեղում մահացել են:

8. Վճռաբեկ բողոքում նշվում է, որ Ա. Մաթևոսյանը Հայաստանի Հանրապետությանն է հանձնվել ՀՀ արդարադատության նախարարության և ՌԴ գլխավոր դատախազության երկկողմ համաձայնության հիման վրա: Այնուհանդերձ, ՌԴ գլխավոր դատախազության և ՀՀ արդարադատության նախարարության միջև համաձայնագրի տեքստը վարույթի նյութերում բացակայում է:

9. ՌԴ Չելյաբինսկի մարզային դատարանը 2008 թվականի դեկտեմբերի 9-ի որոշման մեջ նշել է, որ դատարանին ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության համաձայնությունը՝ դատապարտյալ Ա. Մաթևոսյանի հետագա պատիժը Հայաստանի Հանրապետության տարածքում կրելու վերաբերյալ. ինչպես նաև երաշխավորություն՝ Ռուսաստանի Դաշնության դատավճիռը առանց վերանայման կատարելու մասին:

Այնուհանդերձ, ՀՀ գլխավոր դատախազության ներկայացրած համաձայնության և երաշխավորության տեքստերը վարույթի նյութերում բացակայում են:

Գործի նյութերում բացակայում է նաև դատապարտյալ Ա. Մաթևոսյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու ժամկետի վերաբերյալ տեղեկությունները:

Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

10. Բողոք բերած անձը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը դատապարտյալ Ա. Մաթևոսյանի նկատմամբ 15 տարի ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս թույլ է տվել դատական սխալ, խախտել է «Դատապարտյալների փոխանցման մասին» 1983 թվականի մարտի 21-ի Ստրասբուրգի միջազգային կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, կայացրել է դատական ակտ, որը իրավական բնույթով և տևողությամբ չի համապատասխանում միջազգային կոնվենցիայի պահանջներին, համաձայն որի՝ դատավճիռը համապատասխանեցնելիս, դատական ակտը կայացնող դատարանը պարտավոր է ղեկավարվել դատապարտող պետության կողմից կայացված դատավճռի պատժամիջոցի իրավական բնույթով և տևողությամբ:

11. Բողոքի հեղինակը նշել է նաև, որ սույն գործի քննության ընթացքում խախտվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված սկզբունքները, թույլ են տրվել նյութական և դատավարական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-398-րդ հոդվածների 1-ին մասերով, որի արդյունքում ընդունված դատական ակտը խաթարում է արդարադատության բուն

էությունը, խախտում է սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

12. Սույն գործով բողոքաբերը Վճռաբեկ դատարանի առջև բարձրացրել է հետևյալ հարցը. արդյո՞ք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված՝ Ա. Մաթևոսյանի նկատմամբ ՌԴ Կրասնոդարի երկրամասային դատարանի դատավճիռը ճանաչելու և ի կատար ածելու մասին որոշումը համապատասխանում է ՀՀ ստանձնած միջազգային-իրավական պարտավորություններին, թե ոչ:

13. «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» Վիեննայի 1969թ. կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն. «Յուրաքանչյուր պետություն օժտված է պայմանագրեր կնքելու իրավունակությամբ»:

Նույն Կոնվենցիայի 26-րդ հոդվածի («pacta sunt servanda») համաձայն. «Յուրաքանչյուր գործող պայմանագիր պարտադիր է դրա մասնակիցների համար և պետք է նրանց կողմից բարեխղճորեն կատարվի»:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն. «...Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են...»:

14. Ներպետական իրավունքի նկատմամբ միջազգային իրավունքի գերակայության սկզբունքը հաշվի առնելով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով օրինական որոշում կայացնելու համար վճռական նշանակություն ունի Ա. Մաթևոսյանին Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու հարցում Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև առկա փոխադարձ համաձայնության բովանդակության ամբողջական պարզաբանումը: Մինչդեռ գործում առկա նյութերը բավարար չեն այդ համաձայնության բովանդակությունը պարզաբանելու համար (տե՛ս սույն որոշման 8-րդ կետը), իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն օժտված չէ ապացույցներ հավաքելու իրավասությամբ:

Այդպիսի իրավասությամբ լիարժեք օժտված է առաջին ատյանի դատարանը, որը համապատասխան պետական մարմիններից՝ ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատախազություն, ՀՀ արտաքին գործերի նախարարություն, համապատասխան փաստաթղթեր պահանջելով և ստանալով՝ կարող է հավաքել գործի ճիշտ լուծման համար անհրաժեշտ փաստական տվյալներ, ստուգման և գնահատման ենթարկել դրանք:

15. Գործի էական փաստերի վերաբերյալ ամբողջական տվյալներ ունենալուց հետո է միայն հնարավոր անդրադառնալ սույն գործի հա-

մար էական նշանակություն ունեցող իրավական հարցերի պարզաբանմանը: Դրանք են.

ա) Միջազգային իրավունքի ո՞ր սկզբունքներն են կիրառելի տվյալ դեպքում և դրանք ի՞նչ իրավական նշանակություն ունեն սույն գործի համար: Մասնավորապես՝ այն պայմաններում, երբ Ա. Մաթևոսյանի հետագա պատժի կապակցությամբ ՌԴ դատարանի կամքը պարզորոշ արտահայտված է, ապա Ա. Մաթևոսյանի նկատմամբ ՌԴ դատարանի կողմից նշանակված պատժից ավելի նվազ պատիժ սահմանելով՝ Հայաստանի Հանրապետությունը չի՞ խախտի արդյոք պետությունների ինքնիշխան հավասարության, պետությունների համագործակցության սկզբունքները:

բ) Սույն գործով Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության հարաբերությունները կարգավորվո՞ւմ են արդյոք 1983թ. «Դատապարտյալների փոխանցման մասին» եվրոպական կոնվենցիայի դրույթներով:

գ) Սույն գործով ի՞նչ իրավական նշանակություն ունի Ա. Մաթևոսյանին Հայաստանի Հանրապետությանը հանձնելու մասին երկկողմ համաձայնությունը, որն, ըստ բողոքաբերի, կնքվել է ՀՀ արդարադատության նախարարության և ՌԴ գլխավոր դատախազության միջև:

դ) ՌԴ Չելյաբինսկի մարզային դատարանի որոշման մեջ շարադրված՝ Ա. Մաթևոսյանին Հայաստանի Հանրապետության փոխանցելու պայմանները (տե՛ս սույն որոշման 9-րդ կետը) ի՞նչ իրավական նշանակություն ունեն ՀՀ դատարանների համար: Մասնավորապես՝ դրանք պե՞տք է հաշվի առնվեն կամ կարո՞ղ են հաշվի առնվել համապատասխան միջազգային պայմանագրերի դրույթները մեկնաբանելիս:

ե) Ա. Մաթևոսյանի պատժի վերաբերյալ ՌԴ-ին երաշխավորություն տալիս ՀՀ գլխավոր դատախազությունը դուրս չի՞ եկել արդյոք իր իրավասության շրջանակներից կամ, այլ կերպ ասած, չի գործել ultra vires՝ Վիեննայի 1969թ. Կոնվենցիայի 46-րդ հոդվածի իմաստով: ՀՀ գլխավոր դատախազության կողմից Ա. Մաթևոսյանի պատժի վերաբերյալ ՌԴ-ին տրված երաշխավորությունը Հայաստանի Հանրապետության համար առաջացնու՞մ է արդյոք որոշակի միջազգային-իրավական պարտավորություններ, և եթե այո, ապա ինչպիսի՞:

16. Վճռաբեկ դատարանը գտնում է, որ քննվող բողոքի կապակցությամբ առկա է օրենքի միատեսակ կիրառության ապահովման խնդիր:

Հաշվի առնելով վերը շարադրված հիմնավորումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 92-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 403-406-րդ, 419-րդ, 422-424-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. Վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն:

Արմեն Ռուբենի Մաթևոսյանի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության Կրասնոդարի երկրամասային դատարանի 2005 թվականի սեպտեմբերի 19-ի դատավճիռը ՀՀ օրենսդրությանը համապատասխանեցնելու մասին Երևանի էրեբունի և Նուբարաշեն համայնքների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009 թվականի մայիսի 15-ի և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2009 թվականի հունիսի 29-ի որոշումները բեկանել և գործն ուղարկել էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան՝ նոր քննության:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԼԵՆՈՒՄԻ ՈՐՈՇՈՒՄԸ

դատապարտյալներին պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու դատական պրակտիկայի մասին

26 մայիսի 1992թ. ք. Երևան

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժողդատարանները հիմնականում ճիշտ են կիրառում պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին օրենսդրությունը:

Դրա հետ մեկտեղ դատարանների կողմից պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու պրակտիկայում տեղ են գտնում թերություններ և օրենքի խախտումներ, որոնք նվազեցնում են այդ միջոցների դաստիարակչական ներգործությունը:

Հակառակ օրենքի պահանջի, որը թույլատրում է պատժից պայմանական վաղակետ ազատում և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինում կիրառել միայն այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր օրինակելի վարքագծով և դեպի աշխատանքն ազնիվ վերաբերմունքով ապացուցել են իրենց դաստիարակվելը, առանձին դատարաններ այդ միջոցները կիրառում են այնպիսի անձանց նկատմամբ, ովքեր չեն կանգնել ուղղման ճանապարհին:

Դրա հետ մեկտեղ դատական պրակտիկայում հանդիպում են պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու անհիմն մերժման դեպքեր:

Առանձին դեպքերում նման գործերով դատավարության ժամանակ ժողդատարանների կողմից թույլ է տրվում ձևական մոտեցում:

Այդ գործերով կայացված որոշումներում պատժից պայմանական վաղակետ ազատելիս կամ այն մերժելիս ոչ միշտ են պարունակում այն շարժառիթները, որոնց հիման վրա դատարանը հանգել է նման եզրակացության:

Դատարանների կողմից տարբեր կերպ է լուծվում այն անձանց նկատմամբ պայմանական վաղակետ ազատելու հարցը, ովքեր ազատազրկման վայրերից ազատվել են պարտադիր կարգով աշխատանքի ներգրավումով, ինչպես նաև ովքեր դատապարտվել են պայմանակա-

նորեն ազատազրկման պարտադիր կարգով աշխատանքի ներգրավումով և հետագայում դատարանի կողմից ուղարկվել են պատիժը կրելու ազատազրկման վայրերում:

Դատական պրակտիկայում նկատված թերությունները վերացնելու և պատժից պայմանական վաղակետ ազատելու ու պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու վերաբերյալ օրենսդրությունը ճիշտ կիրառելու նպատակով ՀՀ Գերագույն դատարանի պլենումը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Դատարաններին հիշեցնել, որ պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին օրենքի պահանջի ճիշտ և անշեղ կատարումն ունի բացառիկ կարևոր նշանակություն դատապարտյալների վերադաստիարակման, կրկնահանցագործության նվազեցման և հանցագործությունների դեմ պայքարի ուժեղացման գործում:

2. Դատարանները, օրենքի պահանջներին համապատասխան քննության առնելով պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու հնարավորության հարցը, պարտավոր են ապահովել խիստ անհատական մոտեցում յուրաքանչյուր դատապարտյալի նկատմամբ:

Պատժից պայմանական վաղակետ ազատում, ինչպես և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինում կարող է կիրառվել միայն այն դատապարտյալների նկատմամբ, որոնք կրելով պատժի օրենքով սահմանված մասը, օրինակելի վարքագծով և աշխատանքի նկատմամբ ազնիվ վերաբերմունքով, իսկ այն անձինք, ովքեր հանցագործությունը կատարել են մինչև տասնութ տարին լրանալը, նաև ազնիվ վերաբերմունքով դեպի ուսուցումը, ապացուցել են իրենց ուղղված լինելը:

Դատարանի հետևությունը դատապարտյալի ուղղված լինելու մասին պետք է հիմնավորված լինի ուղղիչ աշխատանքային հիմնարկում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանում նրա վարքագծի վերաբերյալ եղած բոլոր տվյալների բազմակողմանի ուսումնասիրության վրա:

Մասնավորապես՝ անհրաժեշտ է հաշվի առնել դատապարտյալի կողմից ուղղիչ աշխատանքային հիմնարկում ռեժիմի պահպանման, դեպի աշխատանքն ու ուսուցումը նրա վերաբերմունքի, հասարակական կյանքում նրա մասնակցության և այլնի վերաբերյալ եղած տեղեկությունները:

3. Դատարանները պարտավոր են մանրակրկիտ ուսումնասիրել գործի այն հանգամանքները, որոնք նշանակություն ունեն պատժից

պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին հարցը լուծելիս:

Այդ թվում՝ առաջին հերթին պետք է պարզել. արդյոք չի բացառվում պատժից պայմանական վաղակետ ազատում և այդպիսին ավելի մեղմ պատժով փոխարինում, ՀՀ քրեական օրենսգրքի 49.1-րդ հոդվածի հիմքով ենթակա է արդյոք դատապարտյալն ազատման՝ կրելով նշանակված պատժի մեկ երրորդը, կեսը, երկու երրորդը կամ երեք քառորդը, պատժի որ մասն է նա փաստորեն կրել:

4. Պայմանական վաղակետ ազատում կիրառելու մասին հարցը քննության առնելիս դատարանը հաշվի է առնում ներկայացված նյութերի մեջ եղած տեղեկությունները դատապարտյալի կողմից ընտրված բնակության վայրի մասին, ընտանիքի և այլ ազգականների առարկությունը, որոնց հետ նա պետք է բնակվի, կոնկրետ ձեռնարկությունում նրա աշխատանքի ընդունման հնարավորությունը, աշխատանքային կոլեկտիվի համաձայնությունը, իսկ մինչև տասնութ տարին լրանալը հանցագործություն կատարած դատապարտյալի հանդեպ՝ նաև կոնկրետ անձի կողմից դատապարտյալի նկատմամբ իրականացվող հսկողության և դաստիարակչական աշխատանքների հնարավորությունը:

Նշված տեղեկությունների բացակայությունը չի կարող հիմք հանդիսանալ մերժելու պայմանական վաղակետ ազատելու մասին միջնորդագիրը:

Անհրաժեշտության դեպքում դատարանը կարող է այդ բացթողումները լրացնելու համար հետաձգել գործի քննությունը կամ էլ այն ետ վերադարձնել:

5. Դատարաններն իրենց վարույթ չպետք է ընդունեն պայմանական վաղակետ ազատելու մասին այն միջնորդությունները, որոնք չեն բավարարում ՀՀ ուղղիչ աշխատանքային օրենսգրքի 107-րդ հոդվածի պահանջները, մասնավորապես՝ չեն պարունակում այնպիսի տվյալներ, որոնք բնութագրում են դատապարտյալի վարքագիծը, պատիժը կրելու ամբողջ ժամանակաշրջանում նրա վերաբերմունքը դեպի աշխատանքն ու ուսուցումը և ապացուցում, որ նա ուղղվել է, ինչպես նաև տեղեկություններ սահմանված պատժի օրենքով նախատեսված մասը կրելու վերաբերյալ:

Եթե ներկայացված նյութերում չկան բավարար տվյալներ գործը քննության առնելու համար և դատաքննության ընթացքում հնարավոր չէ դրանք լրացնել՝ չկան անչափահասների հանձնաժողովի որոշումների քաղվածքները, դատավորը գործը քննության նախապատրաստելու ընթացքում միանձնյա վերադարձնում է նյութերը համապատասխան ձևակերպման, իսկ եթե դրանք հայտնաբերվել են դատաքննության ընթացքում, ապա դատարանը համապատասխան որոշում է կայացնում՝

ցույց տալով այն հիմքերը, որոնց հիման վրա նյութերը վերադարձվում են:

6. Դատական պրակտիկայում չպետք է տեղ գտնեն պատժից պայմանական վաղակետ սխալ ազատելու, ինչպես և անհիմն մերժելու դեպքերը: Մասնավորապես՝ դատարաններն իրավունք չունեն մերժելու պայմանական վաղակետ ազատելու միջնորդագրերը այնպիսի շարժառիթներով, որոնք նշված չեն օրենքում, ինչպես օրինակ՝ նշանակված պատժի մեղմությունը և կամ դատապարտյալի տվյալ ուղղիչ աշխատանքային հիմնարկում կարճաժամկետ գտնվելը:

7. Պարզաբանել դատարաններին, որ պատժից պայմանական վաղակետ ազատելու կամ չազատելու, ինչպես նաև պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու հնարավորության հարցը պետք է լուծվի ոչ թե անձի դատապարտվելու, այլ տվյալ պահին գործող օրենքով:

8. Դատարանները պետք է նկատի ունենան, որ ՀՀ քրեական օրենսգրքի 49.1-րդ հոդվածի 5-րդ կետի համապատասխան պատժից վաղակետ ազատում և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինում չի կիրառվում նախկինում դիտավորյալ հանցագործությունների համար երկու և ավելի անգամ ազատազրկման դատապարտված անձի նկատմամբ, եթե նախորդ հանցագործության համար դատվածությունը չի հանված:

9. Դատարաններին անհրաժեշտ է պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու գործերը քննելիս առանձնապես ուշադիր վերաբերմունք ցուցաբերել այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր հանցագործությունը կատարել են մինչև տասնութ տարին լրանալը: Ընդ որում, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ այն դատապարտյալների նկատմամբ, ովքեր պատիժ են կրում մինչև տասնութ տարին կատարած հանցագործության համար, պատժից պայմանական վաղակետ ազատում և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինում կարող է կիրառվել այն հիմքերի առկայության դեպքում, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 50-րդ հոդվածով՝ անկախ նրանց կողմից կատարված հանցագործության բնույթից:

Այդ դատապարտյալների նկատմամբ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելիս պարտադիր աշխատանքների կիրառում չի թույլատրվում:

Եթե դատապարտյալը, որը պատիժ է կրում մինչև տասնութ տարին կատարած հանցագործության համար, տասնութ տարին լրանալուց հետո կատարի նոր հանցագործություն, որը չի բացառում պայմանական վաղակետ ազատում, նրա պայմանական վաղակետ ազատման հարցերը լուծվում է այն կարգով, ինչպես նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածով: Այդ կանոնը չի կիրառվում այն

դեպքում, երբ վերջին հանցագործությունը դատապարտյալը կատարել է մինչև տասնութ տարին լրանալը: Նման դեպքում դատապարտյալը կարող է պատժի կրումից պայմանական վաղակետ ազատվել նշանակված պատժի ոչ պակաս կեսը կրելուց հետո, իսկ տասնութ տարին լրանալուց հետո կատարած նոր հանցագործության համար՝ ոչ պակաս պատժի երկու երրորդը կրելուց հետո:

10. Դատարանները պատժից պայմանական վաղակետ ազատելու մասին միջնորդագրերը քննության առնելիս իրավունք չունեն պատժի չկրած մասը փոխարինել պայմանական ազատազրկմամբ, կրճատել այն կամ էլ դատապարտյալին պայմանականորեն ազատել պատիժը կրելուց՝ ներգրավելով պարտադիր աշխատանքների, այլ կարող են միայն դատապարտյալին ազատել պայմանական վաղակետ կամ պատժի չկրած մասը փոխարինել ավելի մեղմ պատժով կամ էլ մերժել այն:

11. Պատժից պայմանական վաղակետ ազատելիս դատարանները չպետք է սահմանեն որևէ փորձաշրջան, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ և 50-րդ հոդվածներին համապատասխան այդպիսի ժամկետ է հանդիսանում պատժի չկրած մասը: Այդ կապակցությամբ պայմանական վաղակետ ազատելու մասին որոշման մեջ անհրաժեշտ է ցույց տալ պատժի չկրած մասը, որից դատապարտյալն ազատվում է:

12. Հիմնական պատժից այն դատապարտյալներին պայմանական վաղակետ ազատելիս, որոնց նկատմամբ կիրառվել են լրացուցիչ պատիժներ ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված կարգով, դատարանները պատժի կատարումն իրականացնող մարմինների միջնորդությամբ կամ էլ սեփական նախաձեռնությամբ պարտավոր են քննության առնել դատապարտյալին լրացուցիչ պատիժը կրելուց ազատելու հնարավորության հարցը: Այդ հանգամանքը պետք է իր արտացոլումը գտնի որոշման եզրափակիչ մասում:

Եթե հիմնական պատժից պայմանական վաղակետ ազատելիս լրացուցիչ պատժից ազատելու հարցը դատարանի կողմից մերժվել է, ապա այդ հարցի կրկնակի քննությունը կարող է տեղի ունենալ այն ժամկետները լրանալուց հետո, որոնք նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածով:

Այն դեպքում, երբ դատապարտյալի լրացուցիչ պատժից պայմանական վաղակետ ազատելու հարցը, որը լրիվ կրել է հիմնական պատիժը, առաջ է եկել լրացուցիչ պատիժը կրելու ժամանակ, ապա դատարանը կարող է ազատել նրան այդ պատժի օրենքով սահմանված մասը կրելուց հետո և օրենքով սահմանված այլ պայմանների առկայության դեպքում:

13. Այն դեպքում, երբ դատապարտյալի նկատմամբ սահմանված պատիժը մեղմացվել է ամնիստիայի կամ ներման մասին ակտով կամ էլ

դատարանի որոշմամբ, դատարանը պատժից պայմանական վաղակետ ազատելիս կամ էլ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելիս պետք է հաշվարկի կրած պատժի փաստական մասը՝ ելնելով այն պատժից, որը սահմանվել է ամնիստիայի կամ ներման մասին ակտով կամ դատարանի որոշմամբ:

14. Այն անձի նկատմամբ պատժից պայմանական վաղակետ ազատելու և կամ պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու հնարավորության հարցը քննելիս, որը ազատազրկման վայրից ազատվել է պայմանականորեն՝ պարտադիր կարգով աշխատանքի ներգրավումով, բայց հետո դատարանի որոշմամբ վերադարձվել է ազատազրկման վայր, պետք է նկատի առնվի, որ ազատազրկման վայր վերադարձնելու փաստն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ դատապարտյալին մերժելու պատժից պայմանական վաղակետ ազատելու հարցում: Նման դեպքում դատարանը պետք է ելնի ոչ միայն դատապարտյալին գաղութ վերադարձնելու փաստից, այլև համակցության մեջ հաշվի առնի նրա անձը բնութագրող բոլոր տվյալները, վերադարձնելուց հետո գաղութում մնալու ժամկետը, նրա վարքագիծը, վերաբերմունքը դեպի աշխատանքը և այլն:

Նույն կարգով պետք է լուծվի նաև այն անձանց վերաբերյալ հարցը, որոնք դատապարտվել են ՀՀ քրեական օրենսգրքի 23.2-րդ հոդվածի 1-ին մասի կիրառմամբ, սակայն հետագայում դատարանի որոշմամբ վերադարձվել են ազատազրկման վայր:

Նման անձանց նկատմամբ պայմանական վաղակետ ազատման հարցը լուծելիս դատարանները պետք է պահպանեն ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ և 50-րդ հոդվածների պահանջները, այսինքն՝ պարզեն՝ կրել է արդյոք դատապարտյալը պատժաչափի օրենքով սահմանված մասը և ապացուցել է իր ուղղված լինելը օրինակելի վարքագծով և դեպի աշխատանքն ազնիվ վերաբերմունքով:

Պատժաչափի այն մասը հաշվարկելիս, որը կրելուց հետո թույլատրվում է պայմանական վաղակետ ազատում, դատարանները պետք է նկատի ունենան, որ կրած պատժի ժամկետի մեջ չի հաշվարկվում այդ անձանց կողմից շինարարության վրա կամ այլ ձեռնարկությունում աշխատանքի ժամկետը, որը դատարանը չի մտցրել կրած պատժի ժամկետի մեջ, իսկ պարտադիր աշխատանքի ներգրավումով պայմանականորեն ազատազրկման դատապարտվածների նկատմամբ՝ նաև նրանց կողմից աշխատանքից խուսափելու ժամկետը:

15. Քննության առնելով ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ և 50-րդ հոդվածներով նախատեսված այն անձանց պայմանական վաղակետ ազատման հարցը, որոնք նախկինում ազատվել են պայմանական վաղակետ և պատժի չկրած մասի ընթացքում կատարել են նոր հանցա-

գործություն, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պատժի չկրած մաս ասելով, պետք է հասկանալ.

ա) Պայմանական վաղակետ ազատելու դեպքում՝ դատարանի դատավճռով նշանակված պատժի չկրած մասը:

բ) Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելիս՝ ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ և 50-րդ հոդվածով նախատեսված ավելի մեղմ պատժի այն չկրած մասը, որը սահմանված է դատարանի որոշմամբ, ամնիստիայի կամ ներման ակտով:

16. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 370-րդ հոդվածի համապատասխան պատժից պայմանական վաղակետ ազատելու և պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու մասին որոշումների վերանայումը հսկողության կարգով՝ դատապարտյալի վիճակը վատթարացնելու առումով չի թույլատրվում, եթե որոշումն օրինական ուժ ստանալուց հետո անցել է մեկ տարի:

17. Պայմական վաղակետ ազատելու մասին դատարանների որոշումների դեմ՝ դրանք հիմնավորված չլինելու շարժառիթով բողոքները քննության առնելիս այն անձանց նկատմամբ, ովքեր որոշումը բողոքարկելու պահին արդեն ազատվել են կալանավայրից, դատարանները դատապարտյալներին ազատելու մասին նյութերը ստուգելու հետ մեկտեղ պետք է հաշվի առնեն նաև կալանավայրից ազատվելուց հետո նրանց վարքի վերաբերյալ եղած տվյալները:

18. Նոր հանցագործություն կատարած այն անձի նկատմամբ պատիժ նշանակելիս, որի նախորդ պատժի չկրած մասը ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ և 50-րդ հոդվածներին համապատասխան փոխարինվել է ավելի մեղմ պատժով, նոր կատարած հանցագործության համար նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածով սահմանված կանոններով լրիվ կամ մասնակիորեն գումարվում է ավելի մեղմ պատժի չկրած մասը:

19. Անթույլատրելի է համարել պատժից պայմանական վաղակետ ազատելու գործերի քննության ընթացքում ձևական մոտեցման յուրաքանչյուր դեպք:

Պայմանական վաղակետ ազատում կիրառելու կամ մերժելու մասին դատարանի որոշումը պետք է լինի պատճառաբանված և իր մեջ պարունակի այն հետևությունների մանրամասն հիմնավորումը, որին հանգել է դատարանը՝ քննության առնելով միջնորդագիրը:

20. Հանձնարարել դատարաններին մյուս դատապարտյալների նկատմամբ դաստիարակչական ներգործությունն ուժեղացնելու նպատակով պայմանական վաղակետ ազատելու մասին միջնորդագրերի քննությունը, որպես կանոն, կատարել ուղղիչ աշխատանքային հիմնարկում:

ՑԱՆԿ
ՊԱՏԻԺԸ ԿՐԵԼՈՒՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՇԱՆՐ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Տուբերկուլոզ

1. Թոքերի երկկողմանի տուբերկուլոզ պրոգրեսիվ ընթացքով՝ 3-րդ աստիճանի թոք-սրտային անբավարարությամբ.

1) թոքերի ֆիբրոզ-կավերնոզ տուբերկուլոզ,

2) կազեոզ պնևմոնիա,

3) թոքերի դիսսեմինացված տուբերկուլոզ,

4) թոքերի ինֆիլտրատիվ դեստրուկտիվ տուբերկուլոզ:

2. Քրոնիկ տոտալ և սուբտոտալ պլևրայի էմֆիզեմա՝ 3-րդ աստիճանի թոք-սրտային անբավարարությամբ:

3. Ողնաշարի, խոշոր ոսկրերի և հոդերի պրոգրեսիվ դեստրուկտիվ տուբերկուլոզ՝ ֆունկցիայի կայուն խանգարումով՝ բարդացած ներքին օրգանների ամիլոիդոզով:

4. Երիկամների երկկողմանի կավերնոզ տուբերկուլոզ բարդացած միզուղիների սպեցիֆիկ պրոցեսով և տերմինալ փուլում քրոնիկ երիկամային անբավարարության զարգացմամբ:

5. Որովայնի խոռոչի օրգանների տուբերկուլոզ՝ վիսցերալ և պարիետալ որովայնամիզի տոտալ ախտահարումներով, կպումային պրոցեսով և աղիների անանցանելիության խանգարումով՝ կախեքսիայի երևույթներով:

Նորագոյացություններ

6. 3-րդ աստիճանի չարորակ նորագոյացություններ (անկախ տեղակայումից)՝ ըստ միջազգային TNM դասակարգման: Կլինիկական ախտորոշումը պետք է հաստատված լինի հիստոլոգիական հետազոտմամբ:

7. Լիմֆատիկ և արյունաստեղծ հյուսվածքների չարորակ նորագոյացություններ: Միելոպրոլիֆերատիվ ուռուցքներ: Կլինիկական ախտորոշումը պետք է հաստատված լինի մորֆոլոգիական հետազոտմամբ:

8. Սուր լեյկոզ (բոլոր ձևերը)՝

1) քրոնիկ միելոլեյկոզ՝ աճող կախեքսիայով, սակավարյունությամբ, սպլենոմեգալիայով և հեմոռագիկ սինդրոմով,

2) քրոնիկ էրիթրոմիելոզ՝ տերմինալ շրջանում,

3) էրիթրեմիա՝ բարդացած գլխուղեղի անոթների արյունազեղումներով կամ թրոմբոզներով,

4) քրոնիկ լիմֆոլեյկոզ՝ բարդացած սակավարյունությամբ, թրոմբոցիտոպենիայով և անընդմեջ կրկնվող վարակներով,

5) քրոնիկ մոնոցիտար լեյկոզ՝ տերմինալ շրջանում սակավարյունությամբ և հեմոռագիկ սինդրոմով,

6) բազմակի միելոմա՝ օստեոդեստրուկտիվ պրոցեսներով (ողնաշարի և ստորին վերջույթների ոսկրերի ախտաբանական կոտրվածքներով),

7) լիմֆոգրանուլոմատոզի չորրորդ փուլ՝ մեկ կամ ավելի ներքին օրգանների դիֆուզ ախտահարմամբ, ավշային հանգույցների ախտահարմամբ:

Էնդոկրին համակարգի հիվանդություններ

9. Շաքարային դիաբետ (ծանր ձև)՝ ինսուլինային կախվածությամբ (ինսուլինի օրական դոզան՝ 60 միավորից ավելի).

1) կետոացիդոզի հակվածությամբ,

2) նեֆրոպաթիայով (հիպերտոնիկ կամ նեֆրոտիկ ձև) տերմինալ փուլում,

3) թոքերի տուբերկուլոզով կամ քրոնիոսեպսիսով,

4) դիաբետիկ պրեպրոլիֆերատիվ և պրոլիֆերատիվ ռետինոպաթիայով,

5) տարածուն ծանր պոլինևրոպաթիայով,

6) ծանր անգիոպատիայով:

10. Քրոնիկ մակերիկամային անբավարարություն (ծանր ձև):

11. Ոչ շաքարային դիաբետ (ծանր ձև):

12. Հիպերպարաթիրեոզ (ծանր ձև)՝ երիկամային անբավարարությամբ:

13. Իցենկո-Կուշինգի սինդրոմ (ծանր ձև):

14. Հիպոֆիզար անբավարարություն (Սիմոնդսի հիվանդություն) կախեքսիայի փուլում:

15. Հիպոֆիզի և հիպոթալամուսի նորագոյացություններ՝ տեսողության անդառնալի խանգարումներով, արտահայտված նևրոլոգիական և հոգեկան խանգարումներով:

16. Պոդագրա՝ պոդագրային նեֆրոպաթիայով և քրոնիկ երիկամային անբավարարությամբ տերմինալ փուլում:

17. Ֆեոքրոմոցիտոմա՝ կրիզային ընթացքով (վիրահատական կորեկցիայի չենթարկվող):

18. Դիֆուզ-տոքսիկ խպիպ՝ ծանր ձև (վիրահատական կորեկցիայի չենթարկվող):

Հոգեկան խանգարումներ

19. Կայուն բնույթի քրոնիկ հոգեկան խանգարումներ (փսիխոզներ և թուլամտություն), անձին զրկող հնարավորությունից գիտակցելու իր

գործողությունների (անգործության) բնույթը և հասարակական վտանգավորության աստիճանը:

Նյարդային համակարգի և զգայարանների հիվանդություններ

20. Գլխուղեղի և ողնուղեղի անոթային հիվանդություններ՝ արտահայտված ուղեղի կայուն օջախային խանգարումով (հեմիպլեգիա և պարապլեգիա, խորը հեմիպարեզներ և պարապարեզներ, տարածության և ժամանակի նկատմամբ կողմնորոշման խանգարում, ակինետիկ-ռեգիդ սինդրոմ)՝

1) ուղեղի արյան շրջանառության հեմոռագիկ, իշեմիկ կամ խառը սուր խանգարումներ,

2) 3-րդ աստիճանի դիսցիրկուլյատոր էնցեֆալոպաթիա,

3) առաջնային (ոչ տրավմատիկ) սուբարախնոիդալ արյունազեղումներ՝ հաստատված ախտորոշմամբ:

21. Կենտրոնական նյարդային համակարգի տարափոխիկ, դեմիելինիզանող և դեգեներատիվ հիվանդություններ, որոնք ուղեկցվում են գլխուղեղի և ողնուղեղի օրգանական ախտահարմամբ՝ օրգանիզմի ֆունկցիայի խորը կայուն խանգարումներով (ծանր կաթվածներ, խորը պարեզներ՝ զգայունակության տարածուն խանգարումներով, կոնքի օրգանների ֆունկցիայի խանգարումներով, տրոֆիկ խանգարումներով, արտահայտված ակինետիկ-ռիգիդ սինդրոմով) և պրոցեսի հարաճուն ընթացքով՝

1) թարախային մենինգիտներ,

2) էնցեֆալիտներ,

3) գլխուղեղի թարախակույտեր,

4) սպինալ-էպիդուրալ թարախակույտեր և ոչ տուբերկուլոզային էթիոլոգիայի գրանուլոմաներ,

5) նեյրոսիֆիլիս,

6) նյարդային համակարգի ախտահարում տուբերկուլոզի դեպքում,

7) նյարդային համակարգի ախտահարում ՄԻԱՎ-ի դեպքում,

8) ցրված սկլերոզ և ցրված էնցեֆալոմիելիտ,

9) սուր և քրոնիկ բորբոքային դեմիելինիզացված պոլինևրոպաթիա,

10) լեյկոէնցեֆալիտ,

11) ողնուղեղային ատաքսիաներ, ուղեղիկային դեգեներացիաներ և ֆունիկուլյար միելոզ:

22. Ենթակեղևային գանգլիոնների հիվանդություններ.

1) պարկինսոնիզմ՝ արտահայտված ակինետիկ-ռիգիդային համախտանիշով,

2) հեպատոցերեբրալ դիստրոֆիա (հեպատոլենտիկուլյար դեգեներացիա, Վիլսոն-Կոնովալովի հիվանդություն),

3) Հետինգտոնի խորեա,

4) տորսիոն դիստոնիա (գեներալիզացված ձև),

5) այլ էքստրապիրամիդալ հիվանդություններ՝ արտահայտված շարժողական խանգարումներով:

23. Կենտրոնական նյարդային համակարգի տրավմատիկ հիվանդություններ՝ արտահայտված ուղեղի օջախային ախտահարման կայուն երևույթներով (հեմիպլեգիաներ և պարապլեգիաներ, խորը հեմիպարեզներ և պարապարեզներ):

24. Կենտրոնական և պերիֆերիկ նյարդային համակարգի պրոգրեսիվ ընթացող հիվանդություններ՝ արտահայտված շարժողական, զգայական և վեգետատրոֆիկ ֆունկցիաների կայուն խանգարումներով և անցկացվող բուժման անարդյունավետությամբ.

1) գլխուղեղի և ողնուղեղի ծավալային գոյացություններ,

2) կողային ամիոտրոֆիկ սկլերոզ,

3) սիրինգոմիելիա,

4) վերտեբրոգեն միելոպաթիա,

5) նյարդամկանային հիվանդություններ (միասթենիա, միոպաթիա),

6) տոքսիկ և դիսմետաբոլիկ ախտահարումներ:

25. Լրիվ կուրություն:

26. Տեսողության սրության արտահայտված իջեցում՝ կայուն ախտաբանական փոփոխությունների հիման վրա (երբ լավ տեսնող աչքի տեսողության սրությունը չի գերազանցում 0.05-ը և չի կարող կորեկցիայի ենթարկվել):

27. Զույգ աչքերի տեսադաշտի արտահայտված կոնցենտրիկ նեղացում (10 և ցածր աստիճանով):

Արյան շրջանառության օրգանների հիվանդություններ

28. Սրտի հիվանդություններ՝ արյան շրջանառության 3-րդ աստիճանի անբավարարությամբ.

1) կոնստրուկտիվ պերիկարդիտ, որը ենթակա չէ վիրաբուժական բուժման,

2) ձգձգվող ընթացքով բակտերիալ էնդոկարդիտ,

3) միոկարդիտիկ կարդիոսկլերոզ,

4) սրտի իշեմիկ հիվանդություն,

5) սրտի ռիթմի և հաղորդականության կայուն խանգարումներ (հաճախակի, պոլիտոպ, զույգ փորոքային էքստրասիստոլա, պարոքսիզմալ հաճախասրտություններ և Մորգանի-Էդեմսի-Ստոքսի համախտանիշով ատրիովենտրիկուլյար բլոկադա),

6) էնդոմիոկարդիալ ֆիբրոզ:

29. Հիպերտոնիկ հիվանդություն՝ 3-րդ աստիճանի, երկրորդային արտերիալ հիպերտենզիա.

1) կրկնվող տրանսմուրալ կամ խոշորօջախային սրտամկանի ինֆարկտ՝ հաղորդականության և ռիթմի կայուն խանգարումներով և արյան շրջանառության պրոգրեսիվող անբավարարությամբ,

2) արյան շրջանառության 3-րդ աստիճանի անբավարարությամբ,

3) քրոնիկ երիկամային անբավարարությամբ՝ տերմինալ փուլում:

30. Սրտի բնածին և ձեռքբերովի արատներ՝ արյան շրջանառության 3-րդ աստիճանի անբավարարությամբ:

31. Կարդիոմիոպաթիա (կանգային, հիպերտրոֆիկ և ռեստրիկտիվ)՝ ռիթմի կայուն խանգարումներով, թրոմբոէմբոլիայով կամ արյան շրջանառության 3-րդ աստիճանի անբավարարությամբ:

32. Ձարկերակների հիվանդություններ՝ վերջույթների մագիստրալ և պերիֆերիկ անոթների ախտահարմամբ, սուր և քրոնիկ զարկերակային 4-րդ աստիճանի անբավարարությամբ, կլինիկական և պաթոմորֆոլոգիական պատկերով (գանգրենոզնեկրոտիկ փոփոխություններով), դաստակների և ներբանների մակարդակով (ոչ պակաս, քան երկու վերջույթների).

1) էնդարտերիիտ,

2) աորտո-արտերիիտ,

3) օբլիտերացնող աթերոսկլերոզ,

4) Ռեյնոյի հիվանդություն (համախտանիշ),

5) դիաբետիկ անգիոպաթիա,

6) թրոմբոզներ և էմբոլիաներ,

7) թրոմբանգիիտ:

Շնչառության օրգանների հիվանդություններ

33. Թոքերի քրոնիկ ոչ սպեցիֆիկ հիվանդություններ՝ դիֆուզ պնևմոսկլերոզով, թոքերի էմֆիզեմայով, քրոնիկ դեկոմպենսացիայի փուլում գտնվող թոքային սրտով, 3-րդ աստիճանի շնչառական անբավարարությամբ կամ ներքին օրգանների ամիլոիդոզով և քրոնիկ երիկամային անբավարարությամբ տերմինալ փուլում.

1) թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդություն,

2) բրոնխիալ ասթմա,

3) բրոնխոէկտատիկ հիվանդություն,

4) թոքերի թարախակույտ,

5) պլևրայի էմֆիզեմա,

6) տարբեր էթիոլոգիայի պնևմոկոնիոզներ,

7) իդիոպաթիկ ֆիբրոզացնող ալվեոլիտ,

8) սարկոիդոզ,

9) առաջնային էմֆիզեմա,

10) մուկովիսցիդոզ:

Մարսողական օրգանների հիվանդություններ

34. Աղիների և մարսողական այլ օրգանների հիվանդություններ՝ ներծծողական ֆունկցիայի խանգարմամբ, արտահայտված սինդրոմով, կախեքսիայի փուլում:

35. Լյարդի ցիռոզներ տարբեր էթիոլոգիայի՝ դեկոմպենսացիայի փուլում հիպերսպլենիզմով, պորտալ հիպերտենզիայով, 3-րդ աստիճանի լյարդային անբավարարությամբ:

Միզազատական համակարգի հիվանդություններ

36. Երիկամների և միզազատական ուղիների հիվանդություններ՝ քրոնիկ երիկամային անբավարարությամբ տերմինալ փուլում:

Ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքների հիվանդություններ

37. Ոսկրամկանային համակարգի հիվանդություններ՝ ծանր պրոգրեսիվ ընթացքով, օրգանների և համակարգերի ֆունկցիայի արտահայտված և կայուն խանգարումներով, հետևյալ հիվանդությունների դեպքում՝

1) ռևմատոիդ արթրիտ,

2) անկիլոզացնող սպոնդիլոարթրիտ (Բեխտերևի հիվանդություն),

3) շարակցական հյուսվածքի սիստեմային ախտահարումներ (վասկուլիտներ, կարմիր գայլախտ, սկլերոդերմիա, դերմատոմիոզիտ, Շեգրենի հիվանդություն և այլն):

Անատոմիական դեֆեկտներ

38. Անատոմիական դեֆեկտներ՝ հիվանդության կամ վնասվածքի հետևանքով առաջացած (պատժի կրման վերջին ժամկետի ընթացքում), վերին կամ ստորին վերջույթների բարձր անդամահատում, ինչպես նաև մեկ վերին և մեկ ստորին վերջույթի բարձր անդամահատումների համակցություն:

Այլ հիվանդություններ

39. ՄԻԱՎ-ով պայմանավորված հիվանդություն՝ երկրորդային հիվանդության փուլում, գեներալիզացված վարակի ձևով, չարորակ նորագոյացությունով կամ կենտրոնական նյարդային համակարգի ախտահարմամբ:

40. Հիպոպլաստիկ և ապլաստիկ սակավարյունություն, ագրանուլոցիտոզներ (ծանր ձև):

41. Սուր և քրոնիկ ճառագայթային հիվանդություն՝ 4-րդ աստիճան:

ՑԱՆԿ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼՆԵՐԻՆ ԱՐԳԵԼՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ

Արգելվում է կալանավորված անձանց և դատապարտյալներին ներգրավելը հետևյալ աշխատանքներում և պաշտոններում՝

ա) քրեակատարողական ծառայության ղեկավարման կենտրոնական կամ տարածքային մարմիններ, դրանց ստորաբաժանումներ,

բ) այն շինություններ, որոնցում տեղակայվում է հսկողություն իրականացնող անձնակազմը, ինչպես նաև այն շինություններ, որոնցում պահվում են զենք, ծառայողական փաստաթղթեր, հատուկ տեխնիկական միջոցներ,

գ) պահպանության ինժեներական կամ տեխնիկական միջոցների սպասարկման կամ նորոգման աշխատանքներ,

դ) կապի և հեռահաղորդակցության տեխնիկական միջոցների սպասարկման կամ նորոգման աշխատանքներ,

ե) դեղորայքի, դեղանյութերի, բժշկական նշանակության առարկաների պահպանման, հաշվառման, բաշխման կամ արտադրության աշխատանքներ,

զ) զենքի, թունավոր, պայթուցիկ կամ հրդեհավտանգ նյութերի պահպանման, հաշվառման, բաշխման կամ արտադրության աշխատանքներ,

է) մթերային կամ իրերի պահեստների պահպանման աշխատանքներ, ինչպես նաև այդ պահեստներում՝ որպես վաճառող, գանձապահ, հաշվապահ, պետ,

ը) ոգելից խմիչքների արտադրություն,

թ) կացինների, դանակների կամ այլ սուր, կտրող, ծակող գործիքների կամ առարկաների արտադրություն,

ժ) վարձու աշխատողների նկատմամբ վերադաս պաշտոններ,

ժա) որպես տեսանկարահանող-լուսանկարիչ, ինչպես նաև ավտոտրանսպորտի վարորդ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՎԱՀԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆ

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

«Անտարես» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա)1
Հեռ.՝ (+374 10) 58 10 59, 56 15 26
Հեռ.)ֆաքս՝ (+374 10) 58 76 69
antares@antares.am
www.antares.am